

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՔՈԹԱՆՁՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԼԵՎՈՆԻ

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԻԱԾ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ

ԿՐԻՄԻՆԱԼ ՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք, կրիմինալ ոգիալ քրեակառարողական իրավունք» մասնագիտու թյ ամբ իրավաբանական գիտու թյ ու ննեռի թեկնածու ի գիտական աստիճանի հայ ցման համար

Գիտական ղեկավար՝ ***իրավ. գիտ թեկնածու, դոցենտ ԱՌ. Մարգարյան***

Երևան - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ	12
§1. Մարմնավաճառու թյ ան հասկացու թյ ու նը և դրսևորու մնեռը	12

§2. Մարմնավաճառության վիճակը ՀՀ-ում	24
§3 ՀՀ-ում մարմնավաճառության ամբողջական կրիմինոլոգիական բնութագիրը	34
§4. Մարմնավաճառությանը նպաստող գործոնները	46
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	60
§ 1. Մարդու թափաքիչ կամ շահագործումը	60
§ 2 Անձին մարմնավաճառության ներգրավելը կամ դրան նպաստելը	87
§3 Մարմնավաճառության հետ կապված այլ հանցագործություններ	111
ԳԼՈՒԽ 3. ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ	122
§1. Մարմնավաճառության դեմ պայքարը ըստ միջազգային և	122
արտասահմանյան երկրների օրենսդրության	122
§ 2. Մարմնավաճառության կանխարգելման միջոցառումները ՀՀ-ում	143
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	165
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	169
ՀԱՎԵԼՎԱԾ	I

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը: Ինչպես ցանկացած պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է հասարակության կենսական կարևոր շահերի, հասարակության խաղաղ գոյակցությունը և կայուն զարգացումը ապահովող հասարակական հարաբերությունների ապահովումը: Այդ ենթատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի մարմնավաճառության կանոնակարգմանն ուղղված պետական քաղաքականության մշակումը:

Մարմնավաճառությունը որպես սոցիալ-իրավական երևույթ մշտապես գտնվել է քրեագետների ու շարժական առանցքում և դրա կանոնակարգման առումով արտահայտվել են իրարամերժ մոտեցումներ: Քրեագետների մի մասի կարծիքով այն էական վտանգ է ներկայացնում հանրության բարոյականության և առողջության համար, քանի որ խաթարվում են բարոյական արժեքները, տարածում են գտնում վեներական հիվանդությունները, ՄԻԱՎ ախտանիշը, աճում է հանցավորության ընդհանուր մակարդակը¹: Քրեագետների այս խմբի կարծիքով մարմնավաճառությամբ զբաղվելու համար պետք է սահմանել խիստ, ընդհուպ՝ քրեական պատասխանատվություն: Մինչդեռ քրեագետների մյուս խումբը գտնում է, որ, ընդհակառակը, մարմնավաճառությունը պետք է օրինականացնել²:

ՀՀ-ում այս հիմնախնդիրը ևս արդիական է: ՀՀ Ռոստիկանության տվյալների համաձայն՝ 2010թ.-ին մարմնավաճառների նկատմամբ կազմվել է 149 արձանագրություն, 2011թ.-ին՝ 288, 2012-ին՝ 184, մինչդեռ 2015 թ. միայն առաջին վեց ամիսների ընթացքում ՀՀ Ռոստիկանության երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններ են տարվել 2174 մարմնավաճառ³: Ներկայացված տվյալներից կարող է ստեղծվել տպավորություն, որ ՀՀ-ում մարմնավաճառությունը տարածված չէ և վերջին տարիներին նոր աճի միտում է դրսևորում,

¹ Տե՛ս Курс советского уголовного права/ Под ред. А.А. Пионтоковского, П.С. Ромашкина, В.М. Чихвадзе.М.,1971, էջ 179:

² Տե՛ս Криминология. Учебник для вузов / Под ред. С. М. Иншакова. М., 2000, էջ 333:

³ <http://www.aravot.am/2015/08/20/601359/>

սակայն ՀՀ-ում դեռևս 2012 թ.-ին իրականացված փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ ՀՀ-ում մարմնավաճառների թիվը անցնում էր 1000-ից⁴, ինչը վկայում է մարմնավաճառության լատենտայնության մասին: Ընդ որում, մտահոգիչ է ոչ միայն ՀՀ-ում առկա, այլև արտագնա մարմնավաճառության տարածումը: Ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի և ՄԱԿ-ի տվյալների՝ ԱՄԷ-ում և Թուրքիայում գրեթե 1000 հայ կանայք զբաղվում են մարմնավաճառությամբ, որոնց մեծ մասը թրաֆիքինգի զոհեր են⁵: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ Հայաստանը համարվում է սեռական թրաֆիքինգի համար սկզբնաղբյուր երկիր, իսկ նպատակակետ պետություններ են Թուրքիան և ԱՄԷ-ն⁶:

Մարմնավաճառությունը նաև նպաստում է հանցագործությունների ընդհանուր մակարդակի աճին: Մասնավորապես, 2012թ.-ին իրավապահ մարմինների աշխատակիցների հետ մեր կողմից իրականացված հարցազրույցներից պարզ դարձավ, որ մարմնավաճառությունը նպաստում է գողությունների և թմրանյութերի ապրիսի տարածմանը:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ում մարմնավաճառությունը քրեականացված չէ, այս երևույթի համար սահմանված է միայն վարչական պատասխանատվություն: Քրեականացված են, սակայն, մարմնավաճառության հետ կապված հանցագործությունները: ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված մարդու թրաֆիքինգի կամ շահագործման (հոդված 132), երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման (հոդված 132²), շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու (հոդված 132.3), երեխային պոռնկությամբ զբաղվելու և ներգրավելու (հոդված 166), շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու և ներգրավելու (հոդված 261) և պոռնկությամբ զբաղվելու

⁴ Տե՛ս www.news.am/ Մամվել Ավագյան: Մեքսիկոյի հայկական առանձնահատկությունները: Մարտի 29-ը, 2012 թ.:

⁵ Տե՛ս www.usa.am Մարդկանց թրաֆիքինգի մասին զեկույց 2008:

⁶ Տե՛ս United Nations Development Programme/ Victims of trafficking assisted in Armenia. Yerevan, 2010, էջ 11:

նպաստելու (հոդված 262) համար: Քրեական պատասխանատվության ներքին սահմանված նաև մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու, վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելու, 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության ունենալու կամ 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողությանն ենթարկելու, անառակաբարո գործողությանն ենթարկելու համար: Վերոհիշյալ հանցավոր արարքները հաճախ տեղ են գտնում մարմնավաճառի կողմից իր ծառայությանն ենթարկվող մատուցելու գործընթացում:

Սակայն որոշակի բարդությաններ կան այդ հանցագործությանն ենթարկվող անհատների նշված հանցագործությանն ենթարկվող միմյանցից սահմանազատման հետ կապված: Այսպես, մեր կողմից ուսումնասիրված դատավճիռների վերլուծությանից պարզ դարձավ, որ, օրինակ՝ բարդությաններ են ծագում շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությանմբ զբաղվելուն ներգրավելու (հոդված 261) և պոռնկությանմբ զբաղվելուն նպաստելու (հոդված 262) հանցակազմերի սահմանազատման ժամանակ:

Բավական բարդ է մարմնավաճառության կանխարգելման միջոցառումների մշակումը, քանի որ ոչ ՅՅ քրեական օրենսգրքում և ոչ էլ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգրքում տրված չէ մարմնավաճառության հասկացությանը, չկա միասնական մոտեցում մարմնավաճառության սոցիալական բնույթի և այս երևույթը առաջացնող պատճառների վերաբերյալ: Բացի այդ, ՅՅ-ում մինչև այժմ չի իրականացվել մարմնավաճառության վերաբերյալ որևէ ընդգրկուն հետազոտություն, որով հնարավոր կլիներ բացահայտել մարմնավաճառության ներկա վիճակը, դրսևորումները, մարմնավաճառի անձը բնութագրող հատկանիշները:

Նման պայմաններում ակնհայտ է մարմնավաճառության երևույթի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Մարմնավաճառությանը, լինելով մարդկային կենսագործունեության ամենաբարդ խնդիրներից մեկը, ուսումնասիրվում է գիտության տարբեր

ճյուղերի կողմից: Բժշկության մեջ մարմնավաճառությանը, դրա հետևանքները և դրանց կանխման հարցերը հետազոտել են Բ.Պ. Դենիսովը, Ի. Ն. Ժուրավլյովան, Ի. Ս. Կոնը, Բ. Մ. Վիլլիսը, Ա. Ա. Տկաչենկոն, Ն.Ս. Ուստենկոն և այլ հեղինակներ: Մարմնավաճառության սոցիալական ասպեկտը հետազոտել են Յու. Ա. Կլեյբերգը, Ե. Վ. Յանկոն, Վ. Դ. Ռիժիկովը, Ա. Ա. Սելինը և ուրիշները: Մարմնավաճառության և նրականխարգելման հարցերին դեռևս 19-րդ և 20-րդ դարերում անդրադարձել են Վ. Մ. Բեխտերովը, Ի. Բլոխը, Մ. Գերենտը, Վ. Դերյուժինսկին, Չ. Լոմբրոզոն, Ֆ. Լիխտը, Ֆ. Յանկովսկին, Վ.Մ. Տարանովսկին, Գ. Ֆերերոն և այլք: Վերջին տասնամյակների ընթացքում այս երևույթի գիտական ուսումնասիրությանը զբաղվել են Յու. Մ. Անտոնյանը, Ա. Ա. Գաբիանին, Յա. Ի. Գիլինսկին, Լ. Դ. Երոխինան, Ա. Ն. Իգնատովը, Վ.Ի. Լեբեդենկոն, Է. Ֆ. Պոբեգայլոն, Մ.Ա. Սելեզնովը, Ս.Լ. Ուլիցկին, Ն.Վ. Ուխանովան և ուրիշներ: Այդուհանդերձ, կան մարմնավաճառությանն առնչվող բամբակի հարցեր, որոնք գիտական հետազոտության կարիք ունեն: Հատկապես ՀՀ-ում այս հարցը հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել և դրա վերաբերյալ չկա որևէ համապարփակ աշխատանք:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակը ՀՀ-ում մարմնավաճառության վիճակի և նրա հետ կապված հանցագործությանը ամբողջական վերլուծությանն է, ինչպես տեսական գրականության, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով, մարմնավաճառության կանխման օրենսդրական և այլ միջոցառումների մշակումն է և մարմնավաճառությանն առնչվող արարքների համար պատասխանատվության սահմանող օրենսդրության կատարելագործումն է:

Նշված նպատակների իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Սահմանել մարմնավաճառության հասկացությանը և հատկանիշները:
- Ուսումնասիրել մարմնավաճառությունը պայմանավորող հիմնական գործոնները:

- Իրավական վերլուծության ենթարկել մարմնավաճառության հետկապված հանցագործության նկատմամբ:
- Վերհանել մարմնավաճառությանը զբաղվող անձանց կրիմինալ ոգիական առանձնահատկությունները:
- Մշակել մարմնավաճառության և դրան առնչվող բացասական երևույթների կանխմանն ուղղված միջոցառումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մարմնավաճառությանը վերաբերվող հասարակական հարաբերություններն են, հետազոտության առարկան մարմնավաճառության դրսևորումներն են, դրան նպաստող գործոնները, վիճակը, մարմնավաճառի անձը բնութագրող հատկանիշները, մարմնավաճառությանն առնչվող հանցագործությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել է ճանաչողության համընդհանուր դիալեկտիկական մեթոդը: Հետազոտության արդյունքների հավաստիությունը և գիտական չափանիշների համապատասխանությունն ապահովվել է այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ տրամաբանական, պատմաիրավական, համեմատական-իրավական, վիճակագրական տվյալների վերլուծություն, փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հետազոտության տեսական հիմքը: Որպես հետազոտության տեսական հիմք ծառայել են այնպիսի հեղինակների աշխատանքներ, ինչպիսիք են՝ Յու.Մ. Անտոնյանը, Գ.Ա. Ավանեսովը, Ի.Վ. Բոյկոն, Լ.Դ. Գաուխանը, Ա.Ի. Դոլգովան, Ա.Ի. Ելիստրատովը, Ն.Ի. Չագորոդնիկովը, Ա.Ի. Իզնատովը, Յու.Ի. Լյապունովը, Ն.Գ. Կադնիկովը, Ա.Ն. Կրասնիկովը, Վ.Ն. Կուդրյավցևը, Ն.Ֆ. Կուզնեցովան, Ե.Գ. Մանիչը, Վ.Դ. Մալկովը, Ա.Վ. Նաումովը, Ա.Ա. Պիոնտկովսկին, Ա.Ի. Ռարոգը, Ֆ.Մ. Ռեշետնիկովը, Յու.Պ. Սմիրնովը, Ա.Ն. Տրայնինը, Ռ.Ս. Օվչինսկին և ուրիշները:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Քրեական օրենսգիրքը, ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների

վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, արտասահմանյան մի շարք երկրների (ԱՄՆ-ի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իսպանիայի, Նիդերլանդների, Մակեդոնիայի, ՌԴ-ի, Բելառուսի, Չինաստանի և այլն) քրեական օրենսդրությունները: Հետազոտության հիմք են ծառայել նաև մարմնավաճառության և սեռական շահագործման կանխաման ուղղված միջազգային իրավական փաստաթղթերը:

Հետազոտության փորձառական (Էմպիրիկ) հիմքը:
 Հետազոտության փորձառական հիմքն են կազմել մարմնավաճառությամբ զբաղվող 42 անձանց, 120 քաղաքացիների շրջանում 2012թ.-ին մեր իրականացրած հարցումների, իրավապահ մարմինների 30 աշխատակիցների, 20 բժիշկների (մաշկավեներոլոգների և գինեկոլոգների) շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքները, մարմնավաճառությամբ զբաղվող 15 անձանց հետ իրականացված հարցազրույցները: Ուսումնասիրվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 132, 132², 166, 261, 262 հոդվածներով 50 դատական գործերով կայացված դատավճիռները, ոստիկանության պաշտոնական վեբկայքում տեղադրված վիճակագրական տվյալները, ՀՀ վիճակագրական տարեգրքերը, մարմնավաճառության վերաբերյալ լրատվամիջոցների հրապարակումները:

Ատենախոսության գիտական նորոշյալն ու պաշտպանության ներկայացվող դրոշյալները: Ատենախոսության գիտական նորոշյալն այն է, որ ՀՀ-ում առաջին անգամ կատարվել է մարմնավաճառությանն առնչվող համակողմանի հետազոտություն: Հետազոտության շրջանակներում տրվել է մարմնավաճառության բնորոշումը, ներկայացվել են մարմնավաճառների բնութագրիչ հատկանիշները, բացահայտվել է մարմնավաճառությունը պայմանավորող գործոնների համակցությունը, ուսումնասիրվել է մարմնավաճառությանն առնչվող արարքների համար պատասխանատվություն սահմանող օրենսդրությունը և մշակվել են առաջարկություններ դրանց կատարելագործման ուղղությամբ, դիտարկումներ են արվել տվյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունների կապակցությամբ: Նշվածի հետ մեկտեղ

առաջարկություններ են մշակվել մարմնավաճառության և դրան վերաբերող բացասական երևույթների կանխման նպատակով:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

- 1) Մարմնավաճառության օրինականացումը ՀՀ-ում ներկա ժամանակաշրջանում աննպատակահարմար է՝ հաշվի առնելով ինչպես հասարակության կողմից դրա հանդեպ բացասական դիրքորոշումը, դրա կանոնակարգման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը, այնպես էլ մարմնավաճառության և սեռավարակների տարածման, հասարակության բարոյալքման հավանականությունը:
- 2) ՀՀ քրեական օրենսգրքում և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում օգտագործված «պոռնկություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «մարմնավաճառություն» բառով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդված 179¹ –ում մարմնավաճառությունը սահմանել հետևյալ բովանդակությամբ. «Մարմնավաճառությունը գործունեության տեսակ է, որով անձը (մարմնավաճառը) մեկ այլ անձի (հաճախորդին) պարբերաբար կամ նման դիտավորությամբ մատուցում է սեքսուալ բնույթի ծառայություններ վարձատրության պայմանով՝ անկախ վարձատրության ձևից և փոխանցման եղանակից»:
- 3) Թեև սոցիալ-տնտեսական գործոնները վճռորոշ նշանակություն ունեն ՀՀ-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձանց վարքագծի մոտիվացիայի ձևավորման գործում, սակայն նրանց կողմից մարմնավաճառությունը դիտարկվում է ոչ թե կենսական անհրաժեշտության խնդիրների լուծման, այլ բարեկեցիկ կյանքի միջոցների ձեռք բերման միջոց, ուստի մարմնավաճառությունը չի կարելի դիտարկել գուտ որպես սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված հիմնախնդիր:
- 4) Նկատի ունենալով մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների կանխման գործում դրանց հստակ օրենսդրական կանոնակարգման կարևորությունը, առաջարկվում

Ե պատասխանատվությունն սահմանել մարմնավաճառության գրառվելուն ոչ միանշանակաբար դրույթներով, այլ և ցանկացած այլ շարժառիթով ներգրավելու, ինչպես նաև հակելու համար և ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 261-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «այլ անձի մարմնավաճառությամբ գրառվելուն ներգրավելը կամ հակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի հոդված 132-ով նախատեսված հանցագործության հատկանիշները»:

5) ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 262-ի դիսպոզիցիան անհրաժեշտ է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «մարմնավաճառությամբ գրառվելու համար հաստատությանն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատության մարմնավաճառությամբ գրառվելու համար օգտագործելը կամ այլ անձի մարմնավաճառությամբ գրառվելու համար բնակարան կամ այլ կացարան տրամադրելը կամ մարմնավաճառությամբ գրառվելուն այլ ձևով նպաստելը...»:

6) Մարմնավաճառության և դրա հետ առնչվող հանցագործությունների կանխարգելումը ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում, որը պետք է ընդգրկի ինչպես կրթական (սեռական դաստիարակության վերաբերյալ կրթության ապահովում դպրոցական ծրագրերի շրջանակներում), սոցիալ-տնտեսական (մանկատների նախին սաներին, անապահով ընտանիքների երեխաներին սոցիալ-տնտեսական աջակցություն), կազմակերպական (անչափահասների համար պոռնոկայքերի հասանելիություն վերացում) այնպես էլ իրավական միջոցառումների (ուսումնական կամ դաստիարակչական հաստատություններում և դրանց հարակից տարածքներում մարմնավաճառության կողմից իրենց ծառայությունների առաջարկման համար առավել խիստ վարչական պատասխանատվության սահմանում, վիկտիմոլոգիական կանխարգելում) իրականացում:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ ՀՀ-ում առաջին անգամ կատարվեց մարմնավաճառության և նրան առնչվող

հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալ ոգիական հարցերին առնչվող համակողմանի հետազոտություն, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության

գործնական

նշանակությունը:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները՝ առաջարկները, մոտեցումները, եզրակացությունները կարող են օգտագործվել մարմնավաճառության և դրան առնչվող հանցագործությունների դեմ պայքարը կարգավորող իրավական ակտերի կատարելագործման, ՀՀ իրավապահ մարմինների կողմից նշված ուղղությամբ կատարվող պայքարի գործընթացի կազմակերպման, ուսումնական, մեթոդական և գիտական գրականության մշակման նպատակով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացված են հեղինակի հրապարակած չորս գիտական հոդվածներում, զեկուցման տեսքով ներկայացվել են ԵՊՀ ուսանողական գիտաշրջանի շրջանակներում, ինչպես նաև դրանք օգտագործվում են կրիմինալ ոգիա դասընթացի դասավանդման ժամանակ:

Ատենախոսության

կառուցվածքը:

Ատենախոսությունը

պատրաստված է ՀՀ ԲՈՅ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

§1. Մարմնավաճառություն և հասկացությունները և դրսևորումները

Մարմնավաճառությունը, որպես բազմաշերտ սոցիալ-իրավական երևույթ, մշտապես գտնվել և շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության առանցքում: Դրա էության, բնորոշ հատկանիշների, դրսևորումների, մարմնավաճառությանը նպաստող գործոն հանդիսացող երևույթների վերաբերյալ վեճերը սկսվել են դարեր առաջ և շարունակվում են մինչև օրս:

Քրեագետների շրջանում վեճերի տեղիք է տալիս նույնիսկ այս երևույթի անվանումը: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ օգտագործվում է ոչ թե «մարմնավաճառություն», այլ «պռնկություն» եզրույթը, սակայն երևույթի բնորոշումը, միևնույնն է, չի բացահայտվում: Թեև «մարմնավաճառություն» և «պռնկություն» եզրույթները հոմանիշներ են, ինչի մասին վկայում է, օրինակ, Ն.Բ.Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանը⁷, այնուհանդերձ բովանդակային ծավալի առումով այս երկու հասկացությունները չեն համընկնում: Մասնավորապես, Ն. Բ. Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանում «պռնիկ» եզրույթը բացատրվում է որպես շնություն, պռնկական արարք, ստորություն, անարգություն և դրսևորող անձ, ծախու անսկզբունք մարդ, իսկ «մարմնավաճառ» եզրույթը՝ որպես իր մարմինը վաճառող, անառակ կին⁸: Նշված բացատրությունից պարզ է դառնում, որ «պռնիկ» բառը ավելի լայն հասկացություն է և բացի քննարկվող երևույթի իմաստից, օգտագործվում է նաև որպես «անսկզբունք, ծախու մարդ» բառերի հոմանիշ: Իսկ «մարմնավաճառ» բառը առաջին հերթին արտահայտում է իր մարմինը վաճառող կնոջ գործունեությունը: Չնայած, մարմնավաճառ բառը նույնպես լիարժեք չի արտահայտում ուսումնասիրվող երևույթը (քանի որ

⁷ Տե՛ս Աղայան Ն.Բ. Արդի Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 982:

⁸ Տե՛ս Աղայան Ն.Բ. Արդի Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1976, էջեր 982, 1225:

այն նշանակում է մարմինը վաճառող կին, իսկ իրավական տեսանկյունից մարմնավաճառ կարող է լինել նաև տղամարդը), այնուամենայնիվ, «մարմնավաճառ», հետևաբար «մարմնավաճառություն» բառը ավելի ամբողջական է արտահայտում քննարկվող երևույթը, քան «պոռնիկ» կամ «պոռնկություն» բառերը: Ուստի, ավելի նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն «մարմնավաճառություն» եզրույթի սահմանումը:

Մարմնավաճառության ծագման և զարգացման պատմության մասին իրավաբանական գրականության մեջ շատ է գրվել⁹, ուստի այս թեմայի շրջանակներում կներկայացնենք մարմնավաճառությունը բնութագրող ժամանակակից տեսակետները:

Մարմնավաճառության իրավական բնորոշումը տրված է 1950թ. մարտի 21-ին ընդունված՝ Երրորդ անձանց կողմից մարդկանց առևտրի և մարմնավաճառության շահագործման դեմ պայքարի միջազգային կոնվենցիայում: Կոնվենցիայի հոդված 1-ի համաձայն՝ մարմնավաճառություն է համարվում վարձատրության դիմաց մի անձի կողմից այլ անձի սեռական ցանկություններին բավարարումը: Սակայն կոնվենցիայում մարմնավաճառության հատկանիշները բացահայտված չեն, տրված չէ նաև «սեռական ցանկություն» բառակապակցության բովանդակությունը:

Մարմնավաճառության հատկանիշների վեր հանման գործը ստանձնել են քրեագետները:

Ա. Ն. Իգնատովը առանձնացնում է մարմնավաճառությունը բնութագրող հետևյալ հատկանիշները. 1) տարբեր անձանց հետ սեռական հարաբերությունների մեջ մտնելը (անբարո սեռական կապեր), 2) դրա դիմաց վարձատրության ստացումը՝ սովորաբար դրամական արտահայտությամբ, 3) հոգևորական անտարբերությունը¹⁰: Յա. Ի. Գիլիսկին որպես մարմնավաճառության հիմնական հատկանիշներ նշում է սեռական հարաբերությունների հանդեպ

⁹ Ст'ю Блох И. История проституции. М., 1994, էջ 24:

¹⁰ Ст'ю Игнатов А.Н. Проблемы правовой борьбы с проституцией: // Проституция и преступность. М., 1991, էջեր 140-141:

անտարբերությունը և դրանց հատուցել իությունը:¹¹

Նշված հեղինակները արդարացիորեն նշում են, որ չնայած նշված հատկանիշների թվացյալ հստակությանը, չափազանց դժվար է իրականում տարանջատել մարմնավաճառությունը, այսպես կոչված, «թեթևաբարո վարքագծից»: Մարմնավաճառները սովորաբար վարձատրվում են փողով, սակայն պատահում են դեպքեր, երբ մարմնավաճառը սեռական հարաբերություն է ունենում նյութական շահ ստանալու նպատակով, որը կրում է ապրանքային արտահայտություն: Ծառայությունների մատուցման վարձատրության տվյալ տեսակը դժվար է տարբերել անբարո կենսակերպ վարող կնոջը՝ հաճախ փոփոխվող «երկրպագուների» կողմից տրվող նվերներից¹²: Կարծում ենք՝ մարմնավաճառությունը թեթևաբարո վարքագծից տարանջատելու հիմքում պետք է դրվի փող կամ ապրանքներ փոխանցելու կամ ծառայությունների մատուցելու նախապես (մինչև սեռական հարաբերության սկսելը) կայացված համաձայնությունը առայն, որ նյութական արժեքները տրամադրվում կամ ծառայությունները մատուցվում են սեռական հարաբերության դիմաց: Թեթևաբարո վարքագծի դեպքում բացակայում է հստակ և նախօրոք սահմանված վարձատրություն ստանալու համաձայնությունը:

Գ. Վ. Օվչիննիկովան կարծում է, որ մարմնավաճառությամբ զբաղվելը ենթադրում է սեռական ծառայությունների պարբերաբար մատուցում¹³: «Զբաղվել» բառի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն ենթադրում է որոշակի գործողությունների կատարում՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Բացի այդ, «զբաղմունք» հասկացության ներքո ի նկատի է ունեցվում որևէ գործունեությամբ զբաղվելը, իսկ գործունեության պարտադիր տարրը՝ նրա տևողությունն է ժամանակի ընթացքում և կրկնվող

¹¹ Ст'ю Гилинский Я. И. Девиантность, преступность, социальный контроль. Избранные статьи. СПб., 2004
էջ 31:

¹² Ст'ю Игнатов А.Н. Проблемы правовой борьбы с проституцией: // Проституция и преступность. М., 1991,
էջ 21:

¹³ Ст'ю Овчинникова Г.В. Ответственность за вовлечение несовершеннолетних в преступную и иную антиобщественную деятельность. Л., 1981, էջ 16:

գործողության ունեները: Մի շարք հեղինակներ մարմնավաճառության բնորոշման մեջ ուղղակիորեն նշում են սեռական բնույթի ծառայության ունեների մատուցման կայունությունը (սիստեմատիկությունը), իսկ սիստեմատիկության տակ նրանք հասկանում են երեք անգամից ոչ պակաս սեռական հարաբերություններ ունենալը ¹⁴: Մեր կարծիքով կարելի է համաձայնել նման մոտեցմանը, հստակեցնելով, սակայն, որ մարմնավաճառությունը հնարավոր է նաև այն դեպքերում, երբ անձը սիստեմատիկաբար սեռական ծառայություններ մատուցելու դիտավորությամբ սեռական հարաբերություն է ունենում դեռևս մեկ անգամ:

Մարմնավաճառության մյուս պարտադիր հատկանիշը համարվում է նյութական շահ ստանալը: Մարմնավաճառության անբաժան հատկանիշն այն է, որ սեռական բնույթի ծառայությունները մատուցվում են վարձատրության դիմաց: Մարմնավաճառությունն չի կարող համարվել այն դեպքը, երբ անձը ամուսնանում կամ համատեղ ապրում է մեկ այլ անձի հետ՝ առաջնորդվելով նյութապես ապահովված լինելու շարժառիթով ¹⁵: Անհրաժեշտ է նշել նաև, որ մարմնավաճառության պարագայում վարձատրությունը կարող է ունենալ ինչպես դրամական, այնպես էլ այլ նյութական արտահայտություն (կենցաղային ապրանքներ, խմիչք, սննդամթերք և այլն): Որևէ նշանակություն չունի նաև վարձատրության փոխանցման պահը (սեռական գործողությունից առաջ, թե հետո): Կարևոր է այն, որ մինչև սեռական հարաբերությունը սկսելը ձեռք բերված լինի վարձատրության վերաբերյալ պայմանավորվածություն: Վարձատրության փոխանցման եղանակները նույնպես կարող են տարբեր լինել. այն կարող է տրվել անմիջապես սեռական ծառայությունների մատուցող անձին, կարող է տրվել միջնորդի միջոցով և այլն:

¹⁴ St' u Кулыгин В.В. Этнокультура уголовного права. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. Владивосток, 2003, էջ 4:

¹⁵ St' u Игнатов А.Н., Дьяченко А.П. Ответственность за проституцию и непосредственно с ней связанные правонарушения: (Сравнительно-правовой анализ) // Сов. Государство и право, 1990, № 8, էջ 68:

Ռ.Պ.Ռականովն գտնում է, որ մարմնավաճառությունը համաձայնություն է չափափաս մարդկանց միջև¹⁶: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ մարմնավաճառությունը սեռական ծառայությունների հարաբերականորեն կայուն մատուցումն է (պրոֆեսիոնալ հիմունքներով) փոխատուցման դիմաց¹⁷:

Ա.Ա.Ստանսկայայի կարծիքով մարմնավաճառությունը վարձատրության դիմաց անբարո սեռական կապն է, որն ուղեկցվում է զգացմունքային անտարբերությամբ¹⁸ : Իսկ ըստ Երոխինայի տեսակետի՝ մարմնավաճառությունը վարձատրության կամ նյութական շահ ստանալու նպատակով սեռական ծառայությունների մատուցումն է¹⁹:

Մ. Ռաբյոտոն մարմնավաճառությունը դիտարկում է որպես արտաամուսնական հարաբերությունների տեսակ, որը հիմնված է զգացմունքների և անձնական համակրանքի վրա: Ըստ նրա՝ «իրական մարմնավաճառ համարվում է այն կինը, ով ստիպված կամ իր ազատ կամքով սեռական հարաբերության մեջ է մտնում առանց որևէ ընտրության, առանց համակրանքի կամ գոնե զգացական կրքի: Այն դեպքում, երբ գոյություն ունի ընտրություն, որը հիմնված է միայն սեռական կրքի, ազդակների վրա առկա է անառակություն, սանձարձակություն, այլասերում, բայց ոչ՝ մարմնավաճառություն՝ այս բառի բուն իմաստով: Անձնական ընտրության բացակայությունը, անտարբերությամբ տրվելը բոլորին և յուրաքանչյուրին՝ ահա սա է ամենաեական և ընդհանուր չափանիշը»²⁰:

Սակայն, միթե՞ կատարվող գործողությունների բնույթը փոխվում է, եթե մարմնավաճառը համակրում է հաճախորդին: Պետք է համաձայնել այն կարծիքի հետ, որի համաձայն՝ զգացմունքային

¹⁶ St' u Раканов Р. П. Проституция и преступность. Изд. Знание. СПб., 2006, էջ 89, Бурлаков В. Н. Современная криминология. Минск, 2006, էջ 90:

¹⁷ St' u Станская А. А. Проституция несовершеннолетних. СПб., 2005, էջ 19:

¹⁸ St' u Криминология/ пор ред. Дж.Ф. Шелли. СПб., 2003, էջ 297:

¹⁹ St' u Ерохина А.Д., Буряк М.Ю. Торговля женщинами в целях сексуальной эксплуатации. Теория и практика борьбы. Владивосток, 2001, էջ 60:

²⁰ St' u Рабюто М. Проституция в Европе с древнейших времён до конца XVIв. // Проституция и её жертвы. М., 1873, էջեր 95-98:

անտարբերությունը չի համարվում քննարկվող երևույթի հիմնարար հատկանիշը: Մարմնավաճառը կարող է ընտրել իր ճաշակին համապատասխան հաճախորդներ և մերժել այն անձանց, ովքեր հակակրանք են առաջացնում նրա մոտ²¹: Այդպես է սովորաբար վարվում մարմնավաճառների էլիտար խավը: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ անկախ համակրանքի առկայությունից կամ բացակայությունից, մարմնավաճառը, ամեն դեպքում, սեռական կապի մեջ է մտնում վարձատրության դիմաց, իսկ առանց դրա՝ դժվար թե նույն կերպ վարվեր:

Մարմնավաճառության էությունը սեռական բնույթի ծառայություններ մատուցելն է: Իսկ ո՞ր վարքագիծը պետք է համարել սեռական բնույթի ծառայությունների մատուցում. դրանք այն արարքներն են, որոնք ուղղված են սեռական պահանջմունքները բավարարելուն: Գրականության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ կինը տրվում է նաև այն դեպքում, երբ սեռական հարաբերություն տեղի չի ունենում, այլ հաճախորդի սեռական բնազդը բավարարվում է այլ անառակաբարո գործողությունների միջոցով²²: Խոսքը գնում է ոչ միայն բնական սեռական հարաբերությունների, այլ սեռական պահանջմունքները բավարարելու ցանկացած այլ եղանակի մասին: Այսինքն՝ այն անձը, ով մագոխիստական կամ այլ խաթարված սեռական գործողություններով բավարարում է հաճախորդի սեռական պահանջմունքները, նույնպես պետք է համարվի մարմնավաճառ:

Ա.Ն. Իգնատովը համարում է, որ մարմնավաճառությունը հնարավոր է նաև առանց մարմնավաճառի և հաճախորդի անմիջական շփման և, որպես մարմնավաճառության առանձին տեսակ, նշում է վիրտուալ մարմնավաճառությունը՝ հեռախոսային, ինտերնետային և

²¹ Ст'ю Игнатов А.Н. Проблемы правовой борьбы с проституцией: // Проституция и преступность. М., 1991, էջ 141:

²² Ст'ю Блох И. История проституции. М., 1994, էջեր 27-29:

այլ տարբերակներով²³: Մենք համաձայն չենք այս տեսակետի հետ, քանի որ դրանում սեռական հարաբերության հասկացությունը անհարկի ընդլայնված է:

Մարմնավաճառության հասկացությունը ճիշտ սահմանելու համար հարկավոր է նախառաջ սահմանել այն հատկանիշների ամբողջությունը, առանց որի մարմնավաճառությունը չի կարող գոյություն ունենալ: Դրանք են՝

- 1) մարմնավաճառության հակաբարոյական բնույթը,
- 2) մարմնավաճառությամբ զբաղվելու կայունությունը (պարբերականությունը),
- 3) սեռական հարաբերությունների հատուցելիությունը,
- 4) սեռական հարաբերությունների արտաամուսնական բնույթը:

Վերոնշյալի հիման վրա կարելի է տալ մարմնավաճառության հետևյալ սահմանումը. «մարմնավաճառությունը գործունեության տեսակ է, որով անձը (մարմնավաճառը) մեկ այլ անձի (հաճախորդին) պարբերաբար կամ նման դիտավորությամբ մատուցում է սեքսուալ բնույթի ծառայություններ վարձատրության պայմանով՝ անկախ վարձատրության ձևից և վարձատրությունը փոխանցելու եղանակից»: Եվ քանի որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է մարմնավաճառության բնորոշումը, մեր կարծիքով նպատակահարմար կլիներ այս սահմանումը ներառել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ մարմնավաճառության համար պատասխանատվություն սահմանող հոդվածում:

Ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ՀՀ-ում մարմնավաճառությունը ի՞նչ դրսևորումներ ունի, այսինքն՝ ինչ դասակարգման է այն ենթարկվում: Այն կատարվում է՝ ելնելով տարբեր չափանիշներից՝ ըստ մարմնավաճառությամբ զբաղվող անձանց հիերարխիայի, ըստ մարմնավաճառների սեռատարիքային կազմի, ըստ մատուցվող

²³ St' u Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006, էջ 33:

սեռական ծառայությունների բնույթի և այլն: Բայց դասակարգման դեռևս հնագույն ժամանակներից առկա ամենատարածված եղանակը հիերարխիկ դասակարգումն է, մասնավորապես, Յին Յունաստանում գոյություն ունեցող մարմնավաճառների վերնախավ և ստորին խավ²⁴:

Ներկայումս աշխարհում ընդունված է մարմնավաճառների հիերարխիկ դասակարգման եռաստիճան համակարգը (ՀՀ-ում առկա վիճակը թույլ է տալիս մեր երկրում ևս կատարել նման դասակարգում): Հիերարխիայի ստորին աստիճանին կանգնած են փողոցային մարմնավաճառները, որոնք գործում են կա՛մ միայնակ, կա՛մ կավատի հսկողությամբ: Երկրորդ՝ միջին մակարդակում գտնվում են բնակարանային, զվարճանքի տարբեր օբյեկտներում և հասարակաց տներում աշխատող մարմնավաճառները: Բնակարանային մարմնավաճառները, որպես կանոն, աշխատում են առանց կավատի և հաճախորդներին հիմնականում ընդունում են իրենց բնակարանում: Հասարակաց տներում աշխատող մարմնավաճառները գործում են կավատի միջնորդությամբ, նրա տրամադրած տարածքում և իրենց վաստակած գումարի որոշակի մասը հանձնում են կավատին: Հիերարխիայի վերին աստիճանին է մարմնավաճառների վերնախավը՝ Էլիտար մարմնավաճառները, որոնք միջնորդների միջոցով կամ առանց դրա պայմանավորվում են հաճախորդների հետ: Շատ հաճախ սկարգի մարմնավաճառները իրենք են ընտրում իրենց հաճախորդներին: Այս խավի մեջ են մտնում երիտասարդ, գրավիչ, հաճախ և՛ կրթված կանայք, ովքեր կարող են մատուցել ոչ միայն սեռական ծառայություններ, այլ և նպաստել հետաքրքիր ժամանցին: Եթե ստորին աստիճանի մարմնավաճառների համար իրենց «մասնագիտությունը» ապրուստ ապահովելու միջոց է, ապա Էլիտարների համար այն բարձր եկամուտներ ստանալու աղբյուր է²⁵:

Ավանդաբար, մարմնավաճառությունը համարվում է զուտ կանացի զբաղմունք: Սակայն, դա ուղղակի մոլորություն է: Տղամարդկանց մարմնավաճառությունը հայտնի է հնագույն

²⁴ St'u Лихт Г. Сексуальная жизнь в Древней Греции. М., 2003, էջեր 274-292:

²⁵ St'u Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006, էջ 26:

Ժամանակներից: Այն լայնորեն տարածված էր Հին Հռոմում, Հունաստանում, Եգիպտոսում և այլուր: Միջնադարյան Եվրոպայում Քրիստոնեության տարածման շնորհիվ խիստ բացասական վերաբերմունք ձևավորվեց համասեռամոլության նկատմամբ, ինչը հանգեցրեց այս երևույթի ժամանակավոր վերացմանը: Սրա հետևանքով, բնականաբար, վերացավ նաև տղամարդկանց մարմնավաճառությունը ²⁶: Այս երևույթը, կարելի է ասել, գոյություն ունի ունենալու հորհրդային Միությունում:

Արտասահմանյան բազմաթիվ երկրներում, օրինակ ՌԴ-ում, քննարկվում է տղամարդկանց մարմնավաճառության հիմնախնդիրը ²⁷: Այն քննարկվում է երկու՝ տղամարդկանց կողմից տղամարդկանց և տղամարդկանց կողմից կանանց մատուցվող ծառայությունների կտրվածքով: Ցավոք, ՀՀ-ում առկա չէ մարմնավաճառության մեջ ներգրավված անձանց, այդ թվում՝ տղամարդ մարմնավաճառների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն, այնուհանդերձ, այլընտրանքային աղբյուրները վկայում են ՀՀ-ում վերջին տարիներին համասեռամոլ տղամարդկանց մարմնավաճառության տարածման մասին: Հայտնի են նաև նրանց հավաքման վայրերը, ինչի մասին բազմիցս գրվել է հայկական մամուլում ²⁸, ինչպես նաև քննարկվող երևույթի մասին նյութեր կան համացանցում ²⁹: Այնուհանդերձ, մեր կողմից 2012-2013 թթ.-ին կատարված փորձագիտական հարցումների համաձայն այն իր ծավալներով զգալիորեն զիջում է կանանց մարմնավաճառությանը, թեև տղամարդ մարմնավաճառները համեմատաբար ավելի բարձր են վարձատրվում, քան իրենց կին գործընկերները:

Պետք է նշել, որ տղամարդկանց մարմնավաճառությունը հասարակության կողմից դիտվում է որպես ավելի ամոթալի երևույթ, քան կանանց մարմնավաճառությունը: Մասնագետները դա բացատրում են գենդերային ստերեոտիպով, որը «թույլ սեռին»

²⁶ Сельченко К.В. Психология сексуальных отклонений. Минск, 2000, էջեր 35-44:

²⁷ St' u Дан Хили. Гомосексуальное влечение в революционной России. М., 2007, էջ 37:

²⁸ St' u Տարոն Մարգարյանն ընդդեմ միասեռականների, «Ժամանակ» օրաթերթ, դեկտեմբեր 23, 2011:

²⁹ St' u www.youtube.com. Համասեռամոլները Երևանում:

վերագրում է տղամարդուն ծառայելու հատկություն, իսկ «ուժեղ սեռին» արգելվում է նույն կերպվարվել³⁰:

Տղամարդկանց մարմնավաճառության մեկ այլ տարատեսակ է զինվորական կամ կուրսանտային մարմնավաճառությունը: Այն տարածված է արտերկրում, մասնավորապես՝ ՌԴ-ում: Ի տարբերություն այլ տղամարդ մարմնավաճառների (համասեռամուկների), 18-19 տարեկան զինվորները ունեն հետերոսեքսուալ (բնական) սեռական կողմնորոշում: Սակայն գումար վաստակելու նպատակով նրանք սեռական կապի մեջ են մտնում այլ տղամարդկանց հետ: Ռուսաստանում նրանց ծառայությունները տատանվում են 50-100-ից մինչև 300 ռուբլու սահմաններում³¹: Բարեբախտաբար, ՅՅ-ում նման դեպքեր չեն գրանցվել, ինչը կարելի է բացատրել հայ հասարակության մտածելակերպի առանձնահատկություններով և ՅՅ զինված ուժերում կարգապահության համեմատաբար բարձր մակարդակով:

Ինչպես նշվեց, տղամարդկանց մարմնավաճառության առանձին տարատեսակ է մարմնավաճառության այն ձևը, երբ տղամարդը վճարի դիմաց սեռական բնույթի ծառայություններ է մատուցում կանանց: Այս երևույթը գոյություն ունի արտասահմանյան բազմաթիվ երկրներում, սակայն Յայաստանում այն գրեթե բացակայում է (առկա մի քանի առանձին դեպքերը բավարար չեն դասակարգման համար):

Հասարակության համար մարմնավաճառության ամենամտահոգիչ տեսակը անչափահասների և մանկական մարմնավաճառությունն է: Մարմնավաճառության նշված տեսակի վտանգավորությունը այն է, որ անչափահասները՝ պայմանավորված այս ոլորտում կյանքի փորձի բացակայությամբ, չեն կարող ամբողջությամբ պատկերացնել մարմնավաճառությամբ զբաղվելու բացասական հետևանքները, մինչդեռ այդ հետևանքները նրանց համար շատ ավելի ծանր են, քան մեծահասակների համար: Պատահական չէ, որ մանկական մարմնավաճառությունն արգելված է բոլոր պետություններում:

³⁰ St'u Сельченко К.В. Психология сексуальных отклонений. Минск, 2000, էջեր 35-44:

³¹ St'u Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006 էջ 28:

Եվ եթե չափահաս մարմնավաճառների հաճախորդները սովորաբար չեն ենթարկվում պատասխանատվության, ապա երեխաների հետ սեռական հարաբերություններն ունենալը համարվում է հանցագործություն և խտրեն պատժվում է: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 141-ը պատասխանատվություն է նախատեսում 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություններն ունենալու համար:

Մանկական մարմնավաճառությունը առավել տարածված է սոցիալ-տնտեսական և իրավական զարգացման ցածր մակարդակ ունեցող պետություններում: Մասնավորապես, երեխաների մարմնավաճառությունը թայլանդում և Ֆիլիպիններում կազմում է սեքս-տուրիզմի բաղկացուցիչ մասը³²: Վերջին տասնամյակների ընթացքում այս երևույթը նկատվում է նաև ԱՊՀ երկրներում: ՀՀ-ում, ցավոք սրտի, նույնպես առկա են անչափահասների (բարեբախտաբար, ոչ մանկահասակների) մարմնավաճառության, դեպքեր: Անչափահաս մարմնավաճառները ներկայացված են մարմնավաճառության հիերարխիայի բոլոր խմբերում (փողոցային, բնակարանային, էլիտար և այլն): Մարմնավաճառների հետ իրականացրած մեր հարցազրույցներից պարզ դարձավ, որ անչափահասները ունեն ավելի մեծ պահանջարկ, ինչի հաշվին էլ վճարվում են համեմատաբար բարձր, քան հիերարխիայի նույն մակարդակին գտնվող չափահաս մարմնավաճառները:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ տարանջատված չէ անչափահասների և մանկական (փոքրահասակների) մարմնավաճառությունը: Տարանջատման համար պետք է նախաառաջ վերլուծել «անչափահաս» և «փոքրահասակ» հասկացությունները: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 24-ի՝ անձի գործունակությունը լրիվ ծավալով ծագում է նրա չափահաս, այսինքն 18 տարին լրանալու պահից: Սրանից հետևում է, որ մինչև 18 տարին լրացած անձինք անչափահաս են: Նույն

³² St'u Ерохина Л.Д. Региональные и культурные факторы существования организованной проституции и торговли женщинами в Юго-восточных странах. Теория и практика общественного развития 2012, №5, էջ 86:

օրենսգրքի հոդված 29-ում «մինչև տասնչորս տարին լրացած անչափահասի» արտահայտության հետ մեկտեղ օգտագործվում է «փոքրահասակ» բառը: Այսինքն տարբերակում է մտցվում մինչև 14 և 14-ից 18 տարեկան անչափահասների միջև: Օրենսգրքում օգտագործված «փոքրահասակ» բառը համարվում է «մանուկ» բառի հոմանիշը:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է անչափահասների մարմնավաճառության ընդհանուր տեսակից առանձնացնել երկու տարատեսակ՝ մանկական մարմնավաճառություն, որի դեպքում մարմնավաճառները մինչև 14 տարեկան անձինք են, և դեռահասների մարմնավաճառություն, որում ներգրավված են 14-ից 18 տարեկան անձինք: Նման բաժանումը կարևոր նշանակություն կարող է ունենալ կրիմինալ ոգիական կանխարգելման միջոցառումներ մշակելիս:

Մարմնավաճառության կազմակերպումը կարող է լինել ինչպես օրինական, այնպես էլ ապօրինի (սովերային): Այս դասակարգումն ակնհայտ է հատկապես այն երկրներում, որտեղ մարմնավաճառությունն օրինականացված է և պաշտոնապես գրանցված մարմնավաճառությունը իրականացվում է հատուկ՝ հասարակաց հաստատություններում: Օրինակ՝ Նիդերլանդներում, Շվեյցարիայում պաշտոնապես գրանցված կին-մարմնավաճառները մարմնավաճառության համար նախատեսված հատուկ թաղամասերում վարձակալում են փոքրիկ սենյակներ և սպասարկում հաճախորդներին: Նրանք իրենց գործունեության համար ունեն հատուկ թույլտվություն և վճարում են հարկեր ³³: Մինչդեռ, պաշտոնապես գրանցված մարմնավաճառներից բացի, այս երկրներում գոյություն ունի նաև վճարովի հիմունքներով սեքսուալ ծառայություններ մատուցող պաշտոնապես չգրանցված անձանց բանակ, ովքեր ներգրավված են ապօրինի մարմնավաճառության մեջ:

Այն երկրներում (օրինակ՝ ՀՀ-ում), որտեղ

³³ St' u Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006 էջ 32:

մարմնավաճառությանն արգելված է, հասարակաց տների գործունեությանը հանցավոր է, ուստի սեռական ծառայությանները մատուցվում են մարմնավաճառի կամ հաճախորդի բնակարանում, հյուրանոցային համարում և այլ վայրերում: Նման երկրներում արգելված մարմնավաճառությանը քողարկվում է օրինական գործունեության տարբեր ձևերի տակ:

Ըստ մարմնավաճառությամբ զբաղվելու կամքի արտահայտման եղանակի մարմնավաճառությունը լինում է կամավոր և հարկադիր՝ հիմնականում շանտաժի, բռնության, սպառնալիքի դրսևորմամբ կամ ստրկության որևէ այլ եղանակով³⁴:

Ինչպես նշել ենք, որոշ հեղինակներ որպես մարմնավաճառության ինքնուրույն տեսակ առանձնացում են վիրտուալ մարմնավաճառությունը՝ իր բազմաթիվ տարատեսակներով: Նրանք իրենց կարծիքը հիմնավորում են բժշկության մեջ ընդունված այն տեսակետով, ըստ որի՝ վիրտուալ սեքսը ոչ թե գրգռում է, այլ բավարարում է մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքները³⁵: Ընդունելով նշված մոտեցման արդարացիությունը, այնուամենայնիվ, կարծում ենք՝ այն չի կարող դրվել մարմնավաճառության դասակարգման հիմքում, քանի որ անառողջ սեռական պահանջմունքները կարող են բավարարվել շատ այլ եղանակներով ևս: Կարծում ենք, նման իրավիճակներում, առավել հաճախ գործ ունենք պոռնոգրաֆիկայի նյութեր կամ առարկաներ ապօրինի տարածելու հանցակազմի հետ, որի համար քրեական պատասխանատվություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 263-ով:

Այսպիսով, հաշվի առնելով գրականության մեջ նշված կարծիքները և Հայաստանում մարմնավաճառության առկա վիճակը, մենք առանձնացնում ենք մարմնավաճառության հետևյալ տեսակները՝

1) Ըստ դրանով զբաղվող սուբյեկտների՝ կանանց, տղամարդկանց (այդ

³⁴ Ст'ю Криминология /Под ред. В.Д. Малькова. М., 2004, էջեր 281-282:

³⁵ Ст'ю Хрестоматия по сексологии. М., 2001, էջ 84:

թվում՝ միասնականների), չափահասների, անչափահասների՝ դեռահասների և մանկական:

2) Ըստ կամքի արտահայտման եղանակի՝ կամավոր և հարկադիր:

3) Ըստ հիերարխիկ բնույթի՝ փողոցային, բնակարանային, հասարակաց տների, Էլիտար:

§ 2. Մարմնավաճառության վիճակը ՀՀ-ում

ՀՀ-ում մարմնավաճառությունը հանցագործությունն է չի հանդիսանում, հետևաբար նշված երևույթի մասին պատկերացում կազմելու համար, որպես աղբյուր ծառայում են վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առկա տվյալները: ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2010 թ.-ին մարմնավաճառների նկատմամբ կազմվել է 149, 2011թ.-ին՝ 288, 2012թ.-ին՝ 184 արձանագրություն, սակայն 2015 թ.-ի միայն 1-ին 6 ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններ են տարվել 2174 մարմնավաճառներ: Հատկանշական է, որ շատ են դեպքերը, երբ միևնույն անձի նկատմամբ մեկ տարվա ընթացքում կազմվել է երկու և ավելի արձանագրություն:

Առաջին հայացքից ստեղծվում է տպավորություն, որ ավանդաբար ՀՀ-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձանց թիվը քիչ է, և միայն 2015 թ.-ին նկատվում է մարմնավաճառությամբ զբաղվող անձանց թվի աճ, սակայն, առավել հավանական է, որ լատենտայնության բարձր մակարդակ ունեցող այս երևույթը պարզապես նախկինում բավարար արձագանքման չի արժանացել և մարմնավաճառներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ ՀՀ իրավապահ մարմինների ջանքերը բավարարողյունքի չեն հանգեցրել: Դրավկայությունն է այն, որ մեր կողմից երևան քաղաքի բնակչության շրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ հասարակությունը այս խնդրում բավականին ցածր է գնահատում իրավապահ համակարգի աշխատակիցների գործունեության

արդյունավետությունը: Այն հարցին, թե «ինչպիսի՞ն է իրավապահ մարմինների դիրքորոշումը մարմնավաճառության հանդեպ», հարցվածների 33%-ը նշել է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները «հարկ» են հավաքում մարմնավաճառներից, 8%-ի կարծիքով՝ նպաստում են մարմնավաճառության տարածմանը, 6%-ի կարծիքով՝ օժանդակում են կալատներին, և միայն 25%-ն է նշել, որ իրավապահ մարմինների աշխատակիցները պատժում են մարմնավաճառներին և կալատներին:

Այն, որ մարմնավաճառների իրական քանակը զգալիորեն գերազանցում է պաշտոնապես կազմված արձանագրությունների թիվը, հաստատվում է նաև փորձագիտական տվյալներով: Ըստ դրանց՝ ՀՀ-ում մարմնավաճառների թիվը անցնում է 1000-ից ³⁶ : Մարմնավաճառության տարածվածության մասին են վկայում նաև քաղաքացիների շրջանում 2012 թ.-ին մեր իրականացրած հարցումների արդյունքները: «Ի՞նչ հաճախականությամբ եք Ձեր շրջապատում տեսնում մարմնավաճառների» հարցին քաղաքացիների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝ «ամեն օր»՝ 56%, «չաբաթը մեկ անգամ»՝ 10%, «ամիսը մեկ անգամ»՝ 25%, «ավելի հազվադեպ»՝ 9%:

Պատասխանների նման բաշխումը վկայում է, որ առօրյայում բնակչությանը հաճախ է հանդիպում մարմնավաճառների, ինչը բավականին մտահոգիչ է. լինելով այդքան հասանելի և տեսանելի՝ մարմնավաճառները, մի կողմից, խթանում են անչափահաս տղաների անառողջ սեռական ցանկությունները, մյուս կողմից՝ նրանք կարող են վատօրինակ ծառայել դեռահաս աղջիկների համար:

Հայաստանում գերակշռում են փողոցային մարմնավաճառները, ինչի մասին վկայում են նաև իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում մեր կողմից իրականացված փորձագիտական հարցման արդյունքները: Այն հարցին, թե «ՀՀ-ում մարմնավաճառության ո՞ր տեսակն է գերակշռում», հարցվածների

³⁶ Տե՛ս www.news.am/ Մամուլել Ավագյան: Մեքս քիզնեսի հայկական առանձնահատկությունները: Մարտի 29-ը, 2012 թ.:

97%-ը պատասխանել է՝ փողոցային, 3%-ը՝ էլիտար: «Որտե՞ղից են հաճախ բերման ենթարկում մարմնավաճառներին» փորձագետների 70%-ը նշել է՝ փողոցից, 26%-ը՝ ժամանցի վայրերից, 4%-ը՝ այլ վայրերից:

Թեև ստացված արդյունքները վկայում են, որ ի համեմատմյունս տեսակների ավելի մեծ է փողոցային մարմնավաճառների թիվը, սակայն ստացված արդյունքները կարող են պայմանավորված լինել մարմնավաճառության մյուս դրսևորումների առավել բարձր լատենտայնությամբ: Փողոցային մարմնավաճառներին հեշտե պահել հսկողության տակ, քանի որ վերջիններս, աշխատելով փողոցում, միշտ տեսանելի են: Մինչդեռ, մարմնավաճառների մյուս խմբերի հանդեպ հսկողություն սահմանելու համար անհրաժեշտ է առավել շատ ջանքեր գործադրել. ինտենսիվ աշխատանք տանել ժամանցի և զվարճանքի օբյեկտներում, համացանցում (վերջին շրջանում շատ մարմնավաճառներ իրենց ծառայություններն են առաջարկում և հաճախորդների հետ կապ են հաստատում համացանցի միջոցով) և այլն:

Մարմնավաճառության վիճակի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների վիճակագրությունը: ՀՀ ոստիկանության պաշտոնական վեբկայքում ՀՀ Ոստիկանության կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի գործում իրականացված գործողություններին վերաբերող վիճակագրական տվյալներից հետևում է, որ թե՛ թրաֆիքինգի, թե՛ մարմնավաճառության մեջ ներգրավվելու հանցավոր արարքների քանակը վերջին տարիներին դրսևորում է նվազման միտում: Մասնավորապես, եթե 2008 թ.-ին ոստիկանության վարույթում եղել է մարդու թրաֆիքինգի (ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 132, 132²) 12, ապա 2015 թ.-ին՝ 8 գործ, շահադիտական նպատակներով անձին պոռնկությամբ զբաղվելուն ներգրավվելու (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 261) և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու (ՀՀ քրեական օրենսգրքի

հոդված 262) ցուցանիշները կազմել են 17 և 14³⁷:

Աղյուսակ 1. Թրաֆիքինգի և պոռնոկոլոյամբ զբաղվելու ներգրավվելու կամ դրան նպաստելու վերաբերյալ ՀՀ Ոստիկանության վարույթում եղած գործեր՝ 2008-2015թթ

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Թրաֆիքինգ – հոդված 132, 132 ²	12	15	11	14	21	16	10	8
Երեխային պոռնոկոլոյան կամ պոռնոկագրական բնույթի նյութերի կամ առարկաների պատրաստմանը ներգրավվելը – հոդված 166	-	-	1	1	2	1	-	1
Պոռնոկոլոյամբ զբաղվելու ներգրավվելը, նպաստելը – հոդված 261,262	17	45	31	32	35	31	12	14

Վերլուծության ենթարկելով մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների վիճակագրությունը՝ չենք կարող չանդրադառնալ քննարկվող երևույթին վերաբերող ամենաձանր հանցագործությանը՝ մարդկանց թրաֆիքինգին: Մասնավորապես, 2011թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 132 (Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը) և 132.2 (Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված

³⁷ Տե՛ս www.Police.am/ Թրաֆիքինգ/վիճակագրություն /2013թ.ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքները, էջ 3; Թրաֆիքինգ / վիճակագրություն / հաշվետվություն 2012, էջ 3; Թրաֆիքինգ / վիճակագրություն / հաշվետվություն 2011, էջ 3:

անձի թրաֆիքինգը կամ շահագործումը) հողվածների հատկանիշներով վարույթ է իրականացվել 14 քրեական գործերով, որոնցից 10-ը վերաբերել են կանանց շահագործմանը պոռնկության նպատակով: Այդ գործերից 6-ը եղել են ներքին թրաֆիքինգի դեպքեր, մինչդեռ 3-ով շահագործումը իրականացվել է ԱՄԷ-ում, 1-ը՝ Թուրքիայում: Նշված դեպքերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 13 զոհեր, որոնցից 12-ը՝ կանայք: Թվով 13 զոհերից 6-ը շահագործման ժամանակ եղել են անչափահաս³⁸:

2012թ.-ի ընթացքում քննարկվող հողվածների հատկանիշներով հարուցված 15 գործերից 11-ը վերաբերել են պոռնկության նպատակով շահագործմանը, այդ գործերից 8-ը եղել են ներքին թրաֆիքինգի դեպքեր, իսկ 3 գործով շահագործումը իրականացվել է Թուրքիայում: Նշված գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 14 զոհեր, որոնցից 2-ը եղել են անչափահաս³⁹:

2013թ.-ի ընթացքում նշված հողվածների հատկանիշներով հարուցվել են 11 քրեական գործեր, որոնցից 4-ը վերաբերել են չափահաս կանանց շահագործմանը պոռնկության նպատակով, 2-ը՝ անչափահասների շահագործմանը: Պոռնկության նպատակով շահագործման գործերից 7-ը վերաբերել են ներքին թրաֆիքինգին, 3-ով շահագործումը իրականացվել է ԱՄԷ-ում: 2013թ.ին հարուցված գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 19 անձինք, որոնցից 13-ը կանայք: 19 անձանցից 11-ը շահագործման ընթացքում եղել են անչափահաս⁴⁰:

Մտահոգիչ է այն, որ նկատվում է զոհերի, հատկապես անչափահասների քանակի տեսակարար կշռի աճ: Թերևս գրանցված հանցագործությունների զոհերի քանակում նրանց թվային նման գերակշռությունը պայմանավորված է նրանով, որ չնայած թրաֆիքինգի բարձր լատենտայնությանը, անչափահասների հանդեպ կատարվող ոտնձգությունների գրանցման առումով իրավապահ

³⁸ Տե՛ս www.Police.am/ Թրաֆիքինգ / վիճակագրություն / հաշվետվություն 2011, էջեր 1-2:

³⁹ Տե՛ս www.Police.am/ Թրաֆիքինգ / վիճակագրություն / հաշվետվություն 2012, էջեր 1-2:

⁴⁰ Տե՛ս www.Police.am/ Թրաֆիքինգ / վիճակագրություն / 2013թ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքները, էջեր 1-2:

մարմինները ավելի հետևողական են, ինչն էլ հանգեցնում է նման պատկերի ձևավորման:

Ինչպես նշվեց, թրաֆիքինգն ունի լատենտայնության բարձր աստիճան՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Նախ, տուժողները վախենում են հանցավորներից և չեն դիմում իրավապահներին, երկրորդ ամպլում են, որ իրենց հանդեպ կատարված սեքսուալ ոտնձգության փաստը հայտնի կդառնա շրջապատին: Վիճակն ավելի է բարդանում արտաքին թրաֆիքինգի դեպքում, քանի որ այս պարագայում հանցագործությունը սկսվելով ՀՀ-ում՝ շարունակվում և ավարտվում է արտերկրում: Բացի այդ, արտասահմանում տուժողները, որպես կանոն, լինում են մեկուսացված վիճակում և դժվարանում են կապ հաստատել հարազատների կամ իրավապահների հետ: Այդ է պատճառը, որ չկան ստույգ տվյալներ արտասահմանում Հայաստանցի մարմնավաճառների քանակի մասին: Բացի այդ, արտագնա մարմնավաճառությունը սերտորեն կապված է նաև անօրինական միգրացիայի հետ, ինչն էլ դժվարություններ է ստեղծում նաև այլ երկրում գտնվելու պարագայում ոստիկանությանը դիմելու առումով⁴¹:

Առանձին հետազոտությունների համաձայն՝ Թուրքիայում մարմնավաճառության շահագործման նպատակով տեղափոխված կանայք հիմնականում բնակվում են ծովափնյա Տրապիզոն, Անթալիա, Մերսին քաղաքների փոքր հյուրանոցներում: Մոտավոր հաշվարկներով, 2005-2006 թթ. այնտեղ էին գտնվում 500-1000 հայ կանայք⁴²: Հայ մարմնավաճառների թիվն ավելի մեծ է արաբական երկրներում: ՀՀ ՉԼՄ-ում հրապարակված տվյալների համաձայն՝ ԱՄԷ-ում, Բահրեյնում և Օմանում 2005 թ.-ին գտնվում էին այդ երկրների սեքս քիզնեսում ներգրավված մոտ 2000 հայ կին⁴³:

Փաստորեն, ըստ կատարված ուսումնասիրությունների՝

⁴¹ St' u Handbook on Establishing Effective Labour Migration Policy in Countries of Origin and Destination. 2006, էջ 23:

⁴² Տե՛ս Ն.Կ. Մնացականյան «Թրաֆիքինգը և անօրինական միգրացիան Հարավային Կովկասում>>: Հույս և օգնություն ՀԿ-Երևան, 2006, էջեր 48-57:

⁴³ Տե՛ս www.hetq.am /Էդիկ Բաղդասարյան «Անապատի գիշերներում», 16 մարտի, 2005:

արտերկրում միայն 2005 թ.-ին եղել է մոտավորապես 2500-3000 հայ մարմնավաճառ, այսինքն 2,5-ից 3 անգամ ավելի շատ քան ՀՀ-ում: Ընդ որում, ԱՄԵ-ում հատկապես մեծ է անչափահաս մարմնավաճառների պահանջարկը, քանի որ որոշ ժողովուրդների (օրինակ՝ հեռավորարևելյան և Պարսից ծոցի երկրների) մոտ կարծիք կա, որ անչափահասի հետ սեռական հարաբերությունը երկարացնում է երիտասարդությունը⁴⁴:

Թրաֆիքինգի գոհեր հիմնականում դառնում են մարմնավաճառները, ամուսնալուծված կանայք, մանկատան սաները⁴⁵: Ցանկանում ենք նշել, որ թրաֆիքինգի ենթարկվածների բնութագիրը էականորեն տարբերվում է մարմնավաճառների բնութագրից, քանի որ նրանք մարմնավաճառությամբ են զբաղվում հարկադրաբար կամ խաբեության ազդեցությամբ, իսկ նրանցից շատերը մինչ այդ ընդհանրապես չեն զբաղվել մարմնավաճառությամբ: Թրաֆիքինգի գոհերին հիմնականում խոստանում են բարձր վարձատրվող աշխատանք արտերկրում (մատուցողուհի, դայակ և այլն), սակայն հասցնելով նպատակակետ երկիր՝ ստիպում են զբաղվել մարմնավաճառությամբ՝ շատ դեպքերում նախորոք վերցնելով գոհերի անձնագրերը⁴⁶:

Կրիմինալ ոգիական գրականության մեջ բազմիցս նշվել է, որ մարմնավաճառների շրջանում բարձր է ինչպես կրիմինալ իգացիան, այնպես էլ վիկտիմիզացիան: Ա. Նաումետովան նշում է, որ մարմնավաճառությունը առանձնահատուկ տեղ է գրավում հատկապես կանանց հանցագործությունների պատճառական մեխանիզմում⁴⁷: Որոշ հեղինակների կարծիքով մարմնավաճառների մեծ մասը արտաքին գրավչությունը կորցնելուց հետո, սկսում է զբաղվել

⁴⁴ Տե՛ս Friman Richard. Immigrants, smuggling and threats to Social orders in Japan. London, 2001, էջեր 294 – 317:

⁴⁵ Տե՛ս www.hetq.am Մհեր Արշակյան / Մանկատան աղջիկները Դուբայում, 17 հոկտեմբերի, 2005:

⁴⁶ Տե՛ս www.hetq.am/ Վարդուհի Զաքարյան «Դուբայը շարունակում է գրավել «հեքիաթային» կյանք փնտրողներին», 10 հոկտեմբերի, 2005:

⁴⁷ Տե՛ս Науметова А. В. Проституция и преступность. Что причина, что следствие ? Бизнес в законе, № 2 2008, էջ 325:

գողություն, կալատություն, գողացված իրերի վաճառքով⁴⁸: Այդ հարցի պատասխանը ՀՀ-ում գտնելու համար, մեր կողմից հարցման են ենթարկվել իրավապահ մարմինների համակարգի 30 աշխատակիցներ: Այն հարցին, թե «ի՞նչ իրավախախտումներ են առավել հաճախ կատարում մարմնավաճառները», հարցվածների 53%-ը պատասխանել է՝ թմրանյութերի օգտագործում և տարածում, 30%-ը՝ գողություն, 13%-ը՝ շորթում և 4%-ը՝ այլ հանցագործություններ: Իրավապահ մարմինների հարցման ենթարկված աշխատակիցների կարծիքով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանցագործություններին, որոնք առավելապես կատարվում են նախկինում մարմնավաճառությամբ զբաղված անձանց կողմից. խոսքը ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 132, 261, 262-ով նախատեսված արարքների մասին է: Բանն այն է, որ մարմնավաճառը, հասնելով որոշակի տարիքի, այլևս ֆիզիկապես չի կարող զբաղվել իր նախկին գործով, իսկ այլ մասնագիտություն, որպես կանոն, չի ունենում, փոխարենը, տարիների ընթացքում կուտակում է այդ զբաղմունքի համար անհրաժեշտ փորձ, որոշակի գումար, տեղեկանում է այդ զբաղմունքի բոլոր գաղտնիքներին ու հմտություններին (մարմնավաճառի և հաճախորդի հոգեբանությունը, հաճախորդի ցանկությունները բավարարելու նրբություններին, մատուցվող ծառայությունների գներին և այլն), ինչն էլ դյուրին է դարձնում այլ անձին մարմնավաճառության ոլորտներգրավելը:

Իրավապահ մարմինների աշխատակիցների դիտարկմամբ, մարմնավաճառները հաճախ հայտնվում են նաև տուժողի կարգավիճակում, հատկապես հաճախորդների կողմից իրենց նկատմամբ կատարված հանցագործությունների դեպքում: Նրանց կարծիքով, մարմնավաճառների հանդեպ կատարվող հիմնական ոտնձգություններն են՝ ծեծը, բռնության այլ դրսևորումները (56%), գողությունը (16%), սեռական ոտնձգությունը (7%), այլ հանցագործությունները (21%):

⁴⁸ St'u Криминолигия / Под ред. В. Д. Малькова. М., 2004, էջեր 282-283, Шпаков А. Е. Проституция как объект криминологического исследования: автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Ростов-на-Дону, 2003, էջ 7:

Հարցի պատասխանն առավել ամբողջականացնելու նպատակով, մեր ուսումնասիրության շրջանակներում հարցված մարմնավաճառներին առաջադրվել են համանման հարցեր: Մասնավորապես, այն հարցին, թե «Հաճախորդները Ձեզ երբևէ ծեծել կամ ձեր նկատմամբ այլ ֆիզիկական բռնություն կատարե՞լ են», 57%-ը տվել է դրական պատասխան: Հարցված մարմնավաճառների 46%-ը դրական պատասխան է տվել նաև այն հարցին, թե «Հաճախորդները Ձեզանից ինչ-որ իրեր գողացե՞լ են» հարցին: Պարզելու համար, թե մարմնավաճառի նկատմամբ որքա՞ն հաճախակի են մեկ այլ մարմնավաճառի կամ կավատի կողմից տեղ գտնող ոտնձգությունները, ընտրանքում ընդգրկված մարմնավաճառներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին. «Երբևէ Ձեր «գործընկերները» Ձեզ ծեծե՞լ են կամ ձեր կամքին հակառակ այլ ֆիզիկական բռնություն կատարել են՝ ստիպելու համար, որ Դուք սեռական ծառայություններ մատուցեք»: Հարցվածների 16%-ը նշել է իր հանդեպ ֆիզիկական բռնության դրևորման մասին, 9%-ը նշել է, որ սեքսուալ բնույթի ծառայություն մատուցելու նպատակով իր հանդեպ կիրառվել է հոգեկան բռնություն, մասնավորապես, սպառնացել են, թե հարազատներին կպատմեն իր զբաղմունքի մասին: Հարկ է նշել, սակայն, որ գործնականում մարմնավաճառների միջև բռնության գործադրումը առավել հաճախ տեղ է գտնում հաճախորդներին «չկիսելու» պատճառով:

Մարմնավաճառների վիկտիմիզացիայի գնահատման առումով կարևոր նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե որքանո՞վ են նրանց վստահում իրավապահ մարմինների աշխատակիցներին և արդյոք հանցավոր ոտնձգության ենթարկվելիս պատրաստ են դիմել վերջիններիս: Այդ նպատակով, հարցված մարմնավաճառներին առաջարկվեց պատասխանել այն հարցին, թե «Եթե ձեր հանդեպ բռնություն գործադրվի կամ այլ ոտնձգություն կատարվի, ու՞մ կդիմեք օգնության խնդրանքով»: Հարցվածների 69%-ը նշել է, որ պատրաստ է դիմել ոստիկանությանը, 11%-ը՝ հասարակական կազմակերպություններին, իսկ 5%-ը՝ բժշկի: «Երբ Ձեր

հանդեպ ունի գոյություն է կատարվել, դիմել է՝ իրավապահ մարմիններին» հարցին դրական է պատասխանել հարցված մարմնավաճառների 59%-ը: Հանցագործության գոհ դարձած, սակայն իրավապահ մարմիններին չդիմած մարմնավաճառները որպես իրենց նման վարքագծի պատճառ նշեցին, թե վախենում էին, որ իրավապահ մարմինների աշխատակիցները իրենց կախոժեն (16%), իրենց հանդեպ անպարկեշտ վերաբերմունք կցուցաբերեն (4%):

Կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ում մարմնավաճառությունը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված բարձր լատենտայնությամբ, հիերարխիկ առումով՝ գերակշռում է փողոցային մարմնավաճառությունը, մարմնավաճառների շրջանում բարձր է վիկտիմիզացիայի մակարդակը:

§3 ՀՀ-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձանց կրիմինալ ոգիական բնութագիրը

Մարմնավաճառությամբ զբաղվող անձանց բնութագիրը ներառում է բազմաթիվ հատկանիշներ, որոնք վերաբերում են նրանց սեռատարիքային կազմին, ընտանեկան դրությանը, կրթական մակարդակին և այլն: Այս հատկանիշները ինքնին քրեածին չեն, դրանք հատուկ են յուրաքանչյուրին: Այնուամենայնիվ, նշված հատկանիշների բացահայտումը ունի կարևոր կրիմինալ ոգիական նշանակություն: Թվարկված հարցերի պատասխանից է կախված քննարկվող երևույթի և նրա հետ կապված հանցագործությունների կանխման արդյունավետ միջոցների մշակման գործընթացը:

Մարմնավաճառներին բնութագրող հատկանիշների շարքում կարևոր դեր ունի մարմնավաճառների սեռատարիքային կազմը: Ոստիկանությունը 2010 թ.-ին մարմնավաճառների նկատմամբ կազմել է 149, 2011թ.-ին՝ 288, 2012թ.-ին՝ 184 արձանագրություն, սակայն այդ

արձանագրություններին և ոչ մեկը չի վերաբերել արական սեռի ներկայացուցչի: Մինչդեռ, մամուլում և համացանցում ներկայացված հրապարակումները վկայում են, որ ՀՀ-ում ինքնուրույն տեղ ունի նաև տղամարդկանց մարմնավաճառությունը: Թեև նրանց թվի մասին ստույգ տվյալներ չկան՝ ոչ ոստիկանությունում, ոչ էլ այլ իրավապահ մարմիններում, սակայն մեր կողմից բժիշկների շրջանում կատարված փորձագիտական հարցման արդյունքները թույլ են տալիս որոշել նրանց մոտավոր քանակը: Ըստ բժիշկ-մաշկավեներաբանների՝ տարեկան իրենց են դիմում մոտ 200 միասեռականներ, որոնցից 50-ը զբաղվում է մարմնավաճառությամբ: Ինչ վերաբերում է կին մարմնավաճառների թվին, ապա ըստ այս նույն հարցումների՝ նրանց թիվը կազմում է շուրջ 500-600 անձ: Իհարկե, ներկայացված տվյալը ամբողջովին չի արտացոլում ՀՀ-ում առկա մարմնավաճառների քանակը, քանի որ բժիշկների մոտ գրանցված են ոչ բոլոր մարմնավաճառները: Մաշկավեներաբան-բժիշկներին դիմում են հիմնականում փողոցներում իրենց ծառայությունները առաջարկող մարմնավաճառները, իսկ մյուսները դուրս են և՛ բժիշկների, և՛ իրավապահ մարմինների աշխատակիցների ուշադրությունից⁴⁹: Այն, որ ՀՀ-ում մարմնավաճառությունը տարածում ունի, վկայում են ՀՀ-ում լրագրողների, հետազոտողների իրականացրած ուսումնասիրություններով ստացված տվյալները, որոնց համաձայն՝ Հայստանում սեքս-բիզնեսի տարեկան շրջանառությունը հասնում է մոտ 50 միլիոն դոլարի: Պատահական չէ, որ ողջ աշխարհում մարմնավաճառության բերած եկամուտները համեմատվում են թմրանյութերի և զենքի ապօրինի շրջանառության արդյունքում ստացված եկամուտների հետ⁵⁰:

Մարմնավաճառությամբ զբաղվող կանանց կրիմինալ ոգիական բնութագիրը բացահայտելու նպատակով 42 մարմնավաճառների

⁴⁹ Տե՛ս www.news.am/ Մամուլի Ավագյան: Սեքս բիզնեսի հայկական առանձնահատկությունները: Մարտի 29-ը, 2012 թ.:

⁵⁰ Տե՛ս Криминология / Под. Ред. А.И. Долговой. М., 2002, էջ 705, Мариновский Р.А. Проституция: Бороться или протвоедействовать ?//Охрана. 2002. № 6, էջեր 46-48, Дьяченко А. Ответственность за сексуальную эксплуатацию женщин и детей // Уголовное право. 2003, № 2, էջ 22:

շրջանում իրականացրել ենք հարցումներ, որից պարզ դարձավ, որ ՀՀ-ում մարմնավաճառությամբ առավելապես զբաղվում են 19-30 տարիքային խմբի ներկայացուցիչները: Մասնավորապես, մեր հարցումներին մասնակցած մարմնավաճառների տարիքային կազմը բաշխվել էր հետևյալ կերպ՝ 15-18 տ.՝ 7%, 19-30 տ.՝ 66%, 31-40 տ.՝ 17%, 41 տ.՝ 10%: 15-ից ցածր տարիքային խմբի ներկայացուցիչները նտրանքում չէին հայտնվել:

Անչափահասների կողմից մարմնավաճառությամբ զբաղվելու ներգրավված լինելու համամասնությունը օբյեկտիվորեն արտացոլվել է նաև փորձագիտական հարցումների արդյունքներում: Այսպես, փորձագիտական հարցմանը ներգրավված իրավապահ մարմինների ներկայացուցիչների կարծիքով անչափահաս մարմնավաճառները կազմում են մարմնավաճառների ընդհանուր թվի 10-15%-ը, թեև հարցմանը ներգրավված բժիշկների տվյալներով տարեկան իրենց է դիմում ընդամենը 10-15 անչափահաս մարմնավաճառ: Ակնհայտ է, որ անչափահասներից շատերը չեն օգտվում բժշկի ծառայություններից, ինչը վտանգ է պարունակում թե՛ իրենց, թե՛ իրենց ծառայություններից օգտվողների առողջության համար:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մինչև մարմնավաճառ դառնալը փաստացի ամուսնալուծված են եղել հարցվածների 11%-ը, պաշտոնապես ամուսնալուծված՝ 27%-ը, իսկ 62%-ը երբևէ ամուսնացած չի եղել: Այս ցուցանիշը հաստատվում է նաև կրիմինալ ոգիական գրականության մեջ ներկայացված տվյալներով⁵¹:

Ապահարգանք բացասաբար է ազդում կնոջ հոգեբանության վրա՝ առաջացնելով ընկճվածության զգացում, հուսահատություն, ապագայի նկատմամբ հավատի կորուստ⁵²: Ամուսնալուծվելուց հետո կնոջ համար ընտանիքի գաղափարը որոշակիորեն արժեզրկվում է,

⁵¹ Ст'ю Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջ 118:

⁵² Ст'ю Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջ 119:

նրա մոտ առաջանում է ներքին վախ կրկին ընտանիք կազմելու առումով: Բացի այդ, հայ հասարակությանը դեռևս բնորոշ է բացասական վերաբերմունքը ամուսնալուծված կանանց նկատմամբ, ինչը դժվարացնում է նրանց նոր ընտանիք կազմելու գործը:

Հայաստանում աղջիկները հաճախ ամուսնանում են վաղ տարիքում՝ մինչև այդ չհասցնելով ձեռք բերել կրթություն, որն է մասնագիտություն և հույսը դնում են ամուսնու վրա (չնայած վերջին տարիներին կանանց առաջին անգամ ամուսնանալու միջին տարիքը բարձրացել է): Ուստի, ամուսնուց բաժանվելուց հետո հոգեկան ծանր ապրումներին գումարվում է նաև սոցիալական դժվար վիճակը, որը հաղթահարելու համար էլ նրանց մի մասը դիմում է մարմնավաճառության: Ամուսնական կյանքի վերաբերյալ պատկերացում ձևավորելու նպատակով օգտակար կլիներ, որ գույգերը մինչև ամուսնության գրանցելը հնարավորություն ունենային ստանալու հոգեբանական և բժշկական տեղեկատվություն ամուսնական կյանք սկսելու վերաբերյալ: Ցանկալի կլինի, որ պետությունը ստեղծի ծառայություն, որը անվճար խորհրդատվություն կտրամադրի ամուսնանալ պատրաստվողներին:

Կրիմինալ ոգիական գրականության մեջ բազմիցս արտահայտվել է այն գաղափարը, որ կրթական ցածր մակարդակը նպաստում է հակահասարակական և հակաիրավական վարքագծի դրսևորմանը, քանի որ անձը, իր մտահորիզոնի, աշխարհայացքի պայմաններում չտեսնելով խնդիրների լուծման այլ ուղիներ, դիմում է հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի⁵³:

Կրիմինալ ոգիական գրականության մեջ արտահայտված այս տեսակետը հաստատվեց նաև մեր կողմից իրականացված հետազոտության շրջանակներում: Մասնավորապես, մեր ուսումնասիրության շրջանակներում հայ տնված մարմնավաճառների 54%-ը ուներ թերի միջնակարգ, 39%-ը՝ միջնակարգ

⁵³ Տե՛ս Կлейберт Ю. А. Психология девиантного поведения М., 2001, էջ 98:

և միայն 7%-ը՝ բարձրագույն կրթությամբ: Ընդ որում, վերջիններս ընտրանքում հայտնված առավել բարձր վարձատրվող մարմնավաճառներն են:

Այն, որ կրթական մակարդակը ուղղակիորեն կապված է աշխատանքի ընտրության հետ, ակնհայտ է նաև մարմնավաճառների նախկինում աշխատանքի փորձ ունենալու հանգամանքը պարզելու նպատակով տրված հարցի պատասխանների վերլուծությամբ: Ըստ այդ արդյունքների՝ մարմնավաճառների ընդամենը 7%-ը ունի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթությամբ: Հատկանշական է նաև, որ մինչև մարմնավաճառությամբ զբաղվելը մարմնավաճառների գերակշռող մասը՝ 85%-ը, երբեք չի աշխատել, 4%-ը աշխատել է պետական կառույցներում, 7%-ը՝ մասնավոր ոլորտում, իսկ 3%-ը զբաղվել է մուրացկանությամբ:

Մարմնավաճառության կանխման համար կարևոր է պարզել, թե որտեղ են մարմնավաճառները մատուցում իրենց ծառայությունները: Մարմնավաճառների 7%-ը իրենց ծառայությունները մատուցում են իրենց բնակարաններում, 52%-ը՝ հյուրանոցներում, 26%-ը՝ սառնաններում, իսկ 15%-ը ծառայություն է մատուցում տարբեր վայրերում: «Ինչպե՞ս եք կապ հաստատում հաճախորդների հետ» հարցին հարցվածներից 44%-ը նշել է՝ «փողոցում», 5%-ը՝ «նախկին հաճախորդների միջոցով», 12%-ը՝ «ընկերների միջոցով», 36%-ը՝ «նախապես զանգահարելով» և 3%-ը՝ «բոլորը միասին»: Ինչպես տեսնում ենք, մարմնավաճառների մեծամասնությունը ծառայությունները մատուցում է հյուրանոցներում (հիմնականում մոթելներում) կամ սառնաններում: Կարծում ենք՝ ոստիկանությունը, հսկողությունը սահմանելով նշված օբյեկտների նկատմամբ, կարող է զգալիորեն կրճատել մարմնավաճառության մակարդակը: Ի տարբերություն ՀՀ-ի, ՌԴ-ում մարմնավաճառներին մերսման սրահներում օգտագործելու պրակտիկան անհամեմատ մեծ տարածում ունի⁵⁴:

Բավականին մտահոգիչ է մարմնավաճառների

⁵⁴ См. и Чернов Р. О. Преступления против морали. Ярославль. 2005, էջ 312:

ծառայություններից օգտվող անձանց տարիքային կազմը: Այն հարցին, թե «ձեր հաճախորդների մեջ հաճախ են լինում 18 տարին չլրացած անձինք», մարմնավաճառների 7%-ը տվել է դրական պատասխան: Մարմնավաճառների հետ հարցազրույցներից պարզ դարձավ, որ հազվադեպ չեն դեպքերը, երբ հաճախորդների տարիքը ցածր է լինում 16 տարեկանից: ՀՀ գործող քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերությունն ունենալու համար, սակայն մարմնավաճառներից շատերը նույնիսկ տեղյակ չեն, որ այդ արարքը հանցագործություն է: Մարմնավաճառների 11%-ը նշում է, որ իրենց հաճախորդները հիմնականում 13-18 տարեկան տղաներն են, 26%-ինը՝ 18-25 տարեկան տղամարդիկ, 56%-ինը 26-50 տարեկան տղամարդիկ, իսկ 7%-ի հիմնական հաճախորդները 51-61 տարեկան տղամարդիկ են:

Այն հարցին, թե «ձեր հաճախորդների մեջ հաճախ են լինում ոչ բնական սեքսուալ պահանջմունքներ ունեցող անձինք» հարցվածների 11%-ը տվել է դրական պատասխան:

Մարմնավաճառությամբ զբաղվող անձանց կրիմինալ ոգիական բնութագրի բացահայտման առումով կարևոր նշանակություն ունի նաև նրանց առողջական վիճակի ուսումնասիրությունը: Մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ մարմնավաճառների 28%-ը նշել են թմրամիջոցների, իսկ 62%-ը՝ ալկոհոլի պարբերաբար գործածման մասին: Ընդ որում, մարմնավաճառների հետ իրականացված հարցազրույցներից պարզ դարձավ, որ թմրանյութի և ալկոհոլի գործածումը նրանց մոտսկիզբ է առել մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավվելուց հետո:

Առանձնահատուկ կարևորվում է մարմնավաճառությամբ զբաղվող անձանց առողջական վիճակի հարցը՝ կապված սեռավարակների տարածման հետ: Հայտնի է, որ մարմնավաճառությունը մեծ դեր է կատարում վեներական հիվանդությունների, նաև ՁԻԱՀ-ի տարածման հարցում⁵⁵: Այն հարցին, թե «սեռական հարաբերության ժամանակ պահպանակ

⁵⁵ Ст'ю Н. А. Сперлядева / Анализ показателей поведенческих рисков лиц, вовлеченных в проституцию/ Социальная политика и социология. № 3. 2006, էջ 116:

օգտագործում էք», հարցվածներից 83%-ը պատասխանել է, որ մշտապես օգտագործում է պահպանակ, 13%-ը՝ երբեմն, իսկ 4%-ը՝ եթե հաճախորդը դեմ չի լինում: Չնայած դրան՝ հարցված բժիշկները նշել են, որ իրենց դիմող հիվանդների 50-70%-ը վարակվել են մարմնավաճառներից:

Բժիշկների կարծիքով, մարմնավաճառների շրջանում սեռավարակների տարածումը առավելապես պայմանավորված է պաշտպանիչ միջոցների չօգտագործմամբ: Նրանց պատասխանների բաշխումն առավել մանրամասն ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Մարմնավաճառների շրջանում սեռավարակների տարածման հիմնական պատճառները

Պաշտպանիչ միջոցներ չօգտագործելը	40%
Սեռական հիգիենայի մասին տեղեկությունների չունենալը	25%
Բժշկին ժամանակին չդիմելը	25%
Այլ	10%

Բժիշկների փորձագիտական հարցման արդյունքները վկայում են, որ մարմնավաճառներն իրենց են դիմել հիմնականում հետևյալ հիվանդությունների դեպքում՝ իլամիդիոզ՝ 40%, Տրիխոմոնիազ՝ 35%, Սիֆիլիս՝ 5%, այլ՝ 20%: Ուշագրավ է, որ ՁԻԱՀ/ՄԻԱՎ համախտանիշի մասին նշեցին հարցվածների միայն 2%-ը, ինչը, սակայն, պետք է կապել ոչ թե այդ հիվանդության բացակայության, այլ դրա ախտանիշների թաքնված լինելու հետ, որի պատճառով հիվանդությունը ախտորոշվում է վարակվելուց երկար ժամանակ անց:

Ընդհանրապես, մարմնավաճառությամբ զբաղվող անձինք խուսափում են բժշկին դիմելուց: Այսպես, մեր հարցման արդյունքների համաձայն՝ մարմնավաճառի մաշկաբանին դիմելու հաճախականությունը դրսևորվել է հետևյալ կերպ. մարմնավաճառների 30%-ի իրենց դիմել են 3 ամիսը մեկ, 10 %-ը՝ 6

ամիսը մեկ, 25% ընդ տարին մեկ, 35%-ը՝ ավելի հազվադեպ: Ինչպես երևում է, մարմնավաճառները բավականին հազվադեպ են դիմում բժշկի: Կարծում ենք, որ ուստիկանություները պետք է հետևի, որ նրանք գոնե ամիսը մեկ անգամ անցնեն բժշկական ստուգում:

Ընդ որում, մարմնավաճառներից շատերը հաճախ կիսատ են թողնում բուժումը: Բժիշկների 60%-ի կարծիքով մարմնավաճառների կողմից բուժումը կիսատ թողնելու պատճառն այն է, որ իրենց թվում է, թե բուժվել են, 20%-ը նշել է գումարի բացակայությունը, 15%-ը՝ աշխատանքի ծանրաբեռնվածությունը, իսկ 5%-ն էլ՝ սեփական անձի նկատմամբ անտարբերությունը:

Պատասխաններից հետևում է, որ մարմնավաճառների կողմից բուժումը ընդհատելու պատճառներից է նաև գումարի բացակայությունը: Այն հարցին, թե «սեռավարակների բուժումը ի՞նչ արժեք ունի», բժիշկների 10%-ը պատասխանել է՝ մինչև 10 000 դրամ, 25%-ը՝ 10 000-25 000 դրամ, 60%-ը՝ 25 000- 50 000 դրամ, 5%-ը՝ 50 000 դրամից ավելի:

Մարմնավաճառների շրջանում մեր իրականացրած հարցումների համաձայն՝ մարմնավաճառների 5%-ը օրական վաստակում է մինչև 10 000 դրամ, 23%-ը՝ 10 000- 25 000 դրամ, 54%-ը 25 000-40 000 դրամ, 18%-ը 40 000 դրամից ավելի: Իհարկե, այստեղ էական դեր է խաղում այն, թե օրական նրանցից յուրաքանչյուրը միջինը քանի հաճախորդ է պատարկում և որքանով է ըստ այդմ բարձրանում նրանց վարակվելու հավանականությունը: Մեր ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ մարմնավաճառների միայն 4%-ն է օրվա ընթացքում սպասարկում մեկ հաճախորդ, մինչդեռ 66%-ը՝ 2-5, իսկ 30%-ը՝ 6-10 հաճախորդ: «Օրական քանի՞ ժամ եք աշխատում» հարցին հարցվածների 4%-ը նշել է մինչև 1 ժամ, 50%-ը նշել է 2-5 ժամ, 30%-ը՝ 6-8 ժամ, 16%-ը աշխատում է 9 ժամից ավելի: «Որքա՞ն ժամանակ է, ինչ զբաղվում եք մարմնավաճառությամբ» հարցին հարցվածների 12%-ը պատասխանել է մինչև 6 ամիս, 7%-ը՝ 6 ամսից 1 տարի, 45%-ը՝ 2-3 տարի, 27%-ը՝ 4-10 տարի, 9%-ը՝ 11 տարուց ավելի:

Մարմնավաճառների անձի կրիմինալ ոգիական բնութագրի

ուսումնասիրության առումով կարևորվում է նրանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների և հատկապես շարժառիթների վերհանումը:

Մարմնավաճառությունն ուսումնասիրող գիտնականներից շատերը որպես երևույթի առաջնային պատճառ նշում են ապրուստի միջոցների բացակայությունը և ծանր սոցիալական վիճակը: Նախորդ դարի 20-30-ական թվականների հետազոտողները ընդհանրապես կարծում էին, որ մարմնավաճառությունը աղքատության հետևանք է և առաջանում է կնոջ կողմից ազնիվ ճանապարհով գումար վաստակելու անհնարինության պատճառով⁵⁶: Գրեթե նույն տեսակետի կողմնակիցն է Վ.Վ.Լիսենկոն, ում կարծիքով՝ «քանի դեռ գոյություն ունի անաշխատունակ կանանց զանգված, որը գոյատևում է հոր կամ ամուսնու միջոցների հաշվին, միշտ առկա է լինելու կանանց կողմից իրենց մարմինը վաճառելու երևույթը»⁵⁷: Ըստ այդ մասնագետների, եթե կինը աշխատելու հնարավորությունն ստանա, նրա մոտ մեխանիկորեն կանհետանա սեփական մարմինը վաճառելու անհրաժեշտությունն ու մղումը:

Միևնույն ժամանակ, մի շարք քրեագետներ, հիմնվելով իրենց կատարած հետազոտությունների վրա, պնդում են, որ աղքատությունը կամ տնտեսական շարժառիթը չի կարող դիտարկվել որպես մարմնավաճառությանը դրդող հիմնական գործոն⁵⁸: Նույնիսկ, եթե աշխատավարձերը բարձրացվեն, միևնույն է մարմնավաճառության պահանջարկն ու առաջարկը միշտ էլ լինելու է: Արդյունքում ուղղակի կբարձրանան «ծառայությունների» գները: Կարծում ենք, որ երկրորդ խումբ գիտնականների պնդումներն ավելի հիմնավոր են:

Ինչ խոսք, տնտեսական ծանր պայմանները լուրջ ազդեցություն են թողնում մարմնավաճառությամբ զբաղվելու վրա, սակայն չի կարելի ասել, որ այդ գործոնը միակն է կամ որոշիչն է երևույթի

⁵⁶ Ст'ю Каров А.Н. Проституция и новый быт. Одесса, 1927, էջեր 9-13:

⁵⁷ Ст'ю Лысенко В.В. Правонарушения в сфере общественной нравственности и полиция России. СПб., 1997, էջ 289:

⁵⁸ Ст'ю Антонян Ю.М. Преступность среди женщин. М., 1992, էջ 189:

առաջացման մեխանիզմում: Աղքատության մեջ ապրում են շատերը, բայց նրանցից ոչ բոլորն են ընտրում մարմնավաճառությամբ իրենց սոցիալական խնդիրները լուծելու ճանապարհը: Անձի՝ որոշման կայացման վրա մեծապես ազդում են նրա հոգեբանությունը, բարոյական արժեքները, աշխարհայացքը, կամքը, անմիջական միջավայրը (ընտանիք, մտերիմ հարազատներ ու ընկերներ), կրթությունը և այլն: Այսինքն, տնտեսականից բացի առկա են մարմնավաճառությունը պայմանավորող բազմաթիվ սոցիալ-հոգեբանական գործոններ, և մեր կարծիքով վերջիններս ավելի որոշիչ են: Ասվածը կարելի է հիմնավորել մի քանի փաստարկներով՝

Թեև մարմնավաճառությունը ավելի մեծ տարածում ունի ցածր կեսամակարդակ ունեցող երկրներում (Լատինական Ամերիկայի և Հարավ-արևելյան Ասիայի պետություններում), նույնը չի կարելի ասել ցածր կենսամակարդակով տարբերվող Իսլամական պետությունների մասին: Դա բացատրվում է նրանով, որ այս երկրներում տիրում են խիստ նահապետական կամ կրոնական նորմերը, որոնք կարգավորում են կանանց վարքագիծը:

Բացի այդ, հարուստ պետություններում (ԱՄՆ, Եվրոպական որոշ երկրներ) նույնպես առկա է մարմնավաճառության բարձր մակարդակ, սակայն այդ երկրներում մարմնավաճառ հանդիսացող անձինք, ի տարբերություն ավելի աղքատ երկրների իրենց «գործընկերների», իրենց ծառայությունները մատուցում են համեմատաբար բարձր գներով:

Մարմնավաճառությունը առավել տարածված է քաղաքային վայրերում, քանի որ գյուղական փակ միջավայրում, որտեղ զգալիորեն բարձր է սոցիալական հսկողության աստիճանը, դժվար է թաքցնել սեփական վարքագծի (հատկապես հակաբարոյական) դրսևորումները⁵⁹:

Եվ վերջապես, պետք է նկատել՝ մարմնավաճառները ոչ միշտ են զբաղվում քննարկվող զբաղմունքով ծայրահեղ կարիքից ելնելով,

⁵⁹ St 'u Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006, էջ 38,41:

այլ այդ ճանապարհն են ընտրում հնարավորինս բարեկեցիկ կյանք վարելու մղումով: Այսպես, մեր կողմից հարցված մարմնավաճառների 85%-ը նշել է, որ երբեք չի աշխատել, մինչդեռ այժմ օրական 10000 դրամից պակաս վաստակում է նրանց միայն 5%-ը: Ինչպես իրավացիորեն նշվում է գրականության մեջ, պետք է տարբերել իրական կարիքը (սնունդ, հագուստ, կացարան և այլն) հարաբերական կարիքից ⁶⁰: Այս ամենից հետևում է, որ, չնայած տնտեսական գործոնները էական նշանակություն ունեն մարմնավաճառությանը զբաղվելու հարցում, սակայն սոցիալական ծանր պայմանները բավարար չեն անձին մարմնավաճառության մղելու համար (եթե չկա ծայրահեղ կարիք): Եվ ինչպես արդարացիորեն ասվել է. «մարմնավաճառները ոչ միշտ են հասարակության զոհերը»⁶¹:

Ասվածը հաստատվում է նաև մեր կողմից իրականացված հարցազրույցների արդյունքներով. դրանց մասնակցած մարմնավաճառների 64%-ը որպես մարմնավաճառությանը զբաղվելու հիմնական գործոն նշեց՝ սոցիալական ծանր վիճակը, 24%-ը՝ ընտանեկան դրությունը, 5%-ը՝ անհաջող առաջին սեռական հարաբերությունը, 5%-ը՝ լավ ապրելու ձգտումը:

Մարմնավաճառությանը զբաղվող անձանց սոցիալ-հոգեբանական բնութագրի առավել հստակ պարզաբանման, մոտիվացիոն ու որոտի վեր հանման նպատակով, նրանց հարց առաջադրվեց, թե ի՞նչ զգացողությունն են ունենում սեռական հարաբերության ժամանակ: Հարցվածների 64%-ը նշել է «անտարբերություն», 29%-ը՝ «ստորացված լինելու զգացողություն», և միայն 7%-ն է նշել, որ հաճույք է ստանում սեռական հարաբերության ժամանակ: Այնուհանդերձ, նրանցից քչերն են իրականում պատրաստ հրաժարվել մարմնավաճառությանը զբաղվելուց:

Այսպես, պարզելու համար, թե որքանով են սոցիալական

⁶⁰ Ст'ю Блох И. Половая жизнь нашего времени и ее отношение к современной культуре. СПб., 1910, էջեր 300-301:

⁶¹ Ст'ю Быкова А.Г. Проституция в городах Западной Сибири // Социологические исследования. 2000, № 5, էջ 85:

պայմանները պատճառ հանդիսանում ԶԶ-ում մարմնավաճառությունը ամբողջովին համար, մարմնավաճառներին առաջարկվեց պատասխանել, թե «եթե ձեզ առաջարկվի մեկ այլ աշխատանք, որի վարձատրությունը կկազմի ձեր վաստակածին մոտ գումար, կդադարե՞ք զբաղվել մարմնավաճառությամբ», դրական պատասխան տվեց հարցվածներից 88%-ը, սակայն պատասխանը բացասական էր, երբ հարցի ձևակերպումը փոխվեց՝ «եթե ձեզ առաջարկվի մեկ այլ աշխատանք, որի վարձատրությունը կկազմի ձեր վաստակածի կեսը, կդադարե՞ք զբաղվել մարմնավաճառությամբ»:

Ուշագրավ է, որ մարմնավաճառությամբ զբաղվող անձանց 92%-ը նշեց, որ պատրաստվում է թողնել մարմնավաճառությունը, երբ հետագա կյանքը շարունակելու համար բավարար գումար վաստակի, սակայն նրանցից ոչ ոք չկարողացավ պատասխանել, թե ինչ նկատի ունի բավարար գումար ասելով:

Մեր ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցազրույցների ընթացքում առավել փորձառու մարմնավաճառները նշում էին, որ, որպես կանոն, մարմնավաճառները աշխատում են այնքան ժամանակ, որքան հնարավոր է (այնքան ժամանակ մինչև ունեն պահանջարկ և ներում է առողջությունը), իսկ մինչ այդ պահը քչերն են դադարում զբաղվել այդ գործով:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ՝

1. ԶԶ-ում մարմնավաճառությամբ առավել հաճախ զբաղվում են կրթական ցածր մակարդակ ունեցող, որևէ մասնագիտության չտիրապետող 19-30 տարեկան ամուսնալուծված կամ չամուսնացած իգական սեռի ներկայացուցիչները:
2. Թեև սոցիալ-տնտեսական գործոնները վճռորոշ նշանակություն ունեն ԶԶ-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձանց վարքագծի մոտիվացիայի ձևավորման գործում, սակայն նրանց կողմից մարմնավաճառությունը դիտարկվում է ոչ թե կենսական առաջին անհրաժեշտության խնդիրների լուծման, այլ բարվոք կյանք վարելու միջոց:

§4. Մարմնավաճառությանը նպաստող գործոնները

Ինչպես և հանցավոր վարքագիծը, այնպես էլ թմրամոլությունը և մարմնավաճառությունը շեղվող վարքագծի տեսակներ են ⁶² : Գոյություն ունեն մարմնավաճառության երևույթը բացատրող մի քանի տեսություններ՝ քրեասոցիոլոգիական, կենսասոցիոլոգիական, անտրոպոլոգիական, սոցիալ-հոգեբանական և տնտեսական⁶³։ Այնուամենայնիվ, իրավաբանական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, որ մարմնավաճառությունը պայմանավորող հիմնական գործոններն են՝ սոցիալ-հոգեբանականը և տնտեսականը։

Մարմնավաճառությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների շարքում մեծ դեր ունի ընտանիքը։ Ամուսնաընտանեկան հարաբերությունների խաթարումը մեծապես նպաստում է մարմնավաճառության առաջացմանն ու տարածմանը ⁶⁴։ Մասնագետները առանձնացնում են ընտանիքի հետևյալ կարևորագույն գործառույթները՝

1. Սեռական հարաբերությունների կանոնակարգում։
2. Բնակչության վերարտադրություն։
3. Սոցիալականացում։ Հին սերնդին փոխարինման եկած նոր սերունդը կարող է ընդունել իր սոցիալական դերը միայն սոցիալականացման արդյունքում. ծնողները երեխաներին են փոխանցում իրենց փորձը, նրանց դաստիարակում են բարոյականության արժեքներով և այլն։

⁶² Տե՛ս Լաբկовская Б.Б. Юридическая психология. СПб., 2000, էջ 6, Вдовина Т.В. Понятие и виды социально-негативного поведения// Научные сообщения, № 1, 2005, էջ 176, Ишанков С. М. Криминология. М., 2000, էջ 329, Гребцов Ю. И. Социология права. СПб., 2001, էջեր 262-267:

⁶³ Տե՛ս Кондратюк Л. В. Антропология преступления. М., 2001, էջեր 107-155:

⁶⁴ Տե՛ս Бабочкин П. И. Социализация молодежи: опыт, проблемы, перспективы// Социально-гуманитарные знания. 2001, № 1, էջ 284:

4. Հոգաճուրջ ունև և պաշտպանուրջ ունև: Ընտանիքը ապահովում է իր անդամների խնամքը, պաշտպանուրջ ունևը և սոցիալական անվտանգուրջ ունևը:

5. Սոցիալական ինքնահաստատումը: Անձի ծննդյան օրինականացումը նշանակում է նրա իրավական և սոցիալական որոշակիացումը: Ընտանիքը սահմանում է անձի սոցիալական կարգավիճակը⁶⁵:

Անհատի ձևավորման և կայացման հարցում վճռորոշ դեր է կատարում ընտանիքի ներգործուրջ ունևը⁶⁶: Ըստ գիտնականների՝ շեղվող վարքագիծը զարգանում է ընտանեկան և կրթական մշակույթի խաթարման արդյունքում⁶⁷: Ընտանիքը ոչ միայն ազդում է անհատի ֆիզիկական, հոգեբանական, մտավոր զարգացման վրա նրա վաղ մանկուրջյան շրջանում, այլ հաճախ կանխորոշում է անձի ողջ հետագա կյանքը⁶⁸: Հենց ընտանիքում է անհատը ուղղակիորեն դաստիարակվում որպես ապագա քաղաքացի, ընտանիքում է անձը ստանում անհրաժեշտ հմտուրջ ունևներ, սովորուրջ ունևներ, օգտակար գիտելիքներ: Ընտանիքն է ձևավորում անհատի աշխարհայացքը, զգացմունքները, բարու և չարի ընկալումը: Հենց այս տարիներն են ըստ էուրջյան կանխորոշում անհատի հետագա զարգացումը. երեխաները դառնում են ծնողների «կրկնօրինակը», քանի որ վերջիններիս վարքագծի բոլոր աննշան դետալները «գործի են անցնում» մանկական հոգեբանուրջ ունևը կառուցելիս⁶⁹:

Վաղ մանկուրջյան տարիքում երեխան հավասարապես ընդօրինակում է շրջապատող միջավայրի ինչպես դրական, այնպես էլ բացասական երևույթները: Երեխային բնորոշ է բարձր զգացմունքայնուրջ ունևը, զգայականուրջ ունևը, կամային

⁶⁵ Տե՛ս В.И. Добрыенков, А.И.Кравченко. Социология:Социальные институты и процессы.Т.3.МГУ, էջեր 30-42 :

⁶⁶ Տե՛ս Харчев А.Г.Становление личности.М.,1972 , էջ 86 :

⁶⁷ Տե՛ս Клейберг Ю. А. Психология девиантного поведения М., 2001, էջ 98.

⁶⁸ Տե՛ս Антонян Ю.М,Самовичев С.Г Неблагоприятные условия формирования личности в детстве. М.,1983,էջ 5,

⁶⁹ Տե՛ս Харчев А.Г.Становление личности.М.,1972 , էջ 26 :

հատկանիշների ձևավորման անավարտ բնույթը⁷⁰, տարբեր հարաբերությունների և իրադարձությունների ուղղակի ընկալումը, ամբողջությամբ ընտանիքի հետ կապվածությունը, ինչն էլ պայմանավորում է երեխայի կախվածությունը կոնկրետ սոցիալական միջավայրից: Հեղինակների մեծամասնության կարծիքով ընտանեկան անբարենպաստ մթնոլորտը նպաստում է նրան, որ երեխայի մոտ մանկությունից ձևավորվում են աղճատված բարոյական համոզմունքներ և իդեալներ, երեխայի մոտ առաջանում և ամրապնդվում են պահանջմունքների բավարարման հակաբարոյական և հակահասարակական միջոցներ⁷¹:

Որպես ընտանեկան ազդեցության բացասական դրսևորումներ են ծնողների կողմից ալկոհոլի չարաշահումը, անընդհատ վեճերը, ընտանեկան բռնությունը, երեխայի հանդեպ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված ուշադրության պակասը: Մասնավորապես, ներկայումս ծնողներից շատերը ընտանիքն ապահովելու համար ստիպված են աշխատել երկու-երեք աշխատատեղերում, ինչի պարագայում ժամանակը չի բավարարում իրենց երեխաների դաստիարակությանը զբաղվելու համար:

Երեխաների հոգեբանության վրա մեծ ազդեցությունն է թողնում ծնողների ապահարգանքը: Հայրը և մայրը զավակների դաստիարակության հարցում լրացնում են միմյանց: Այդ պատճառով էլ ոչ լիարժեք ընտանիքի դաստիարակչական ներուժը մանկավարժական և բարոյահոգեբանական առումով սահմանափակ է⁷²:

Սեռական հասունացման փուլում երեխաներին հատուկ են

⁷⁰ Տե՛ս Авдеев В.А. Правовое регулирование посткриминального поведения несовершеннолетних. Дисс. докт. юрид. наук. Екатеринбург, 2002, էջ 98:

⁷¹ Տե՛ս Кормищиков В.М., Чудин Н.М. Механизм формирования антиобщественной направленности личности несовершеннолетнего правонарушителя. Некоторые вопросы эффективности уголовного законодательства.// Научные труды. Вып. 49. Свердловск, 1976, էջ 147: Жигарев Е.С. Криминологическая характеристика социальных аномалий в среде несовершеннолетних и их предупреждение. М., 1992, էջեր 26-27, Беременность и роды у женщин уподобляющих алкоголь. Фетальный алкогольный синдром. М., 2003, էջեր 15-16:

⁷² Տե՛ս Ильященко А.Н. Семейные факторы социального риска и преступность несовершеннолетних // Российский следователь. 2001. №6. էջ 41, Тихонова Н. Российская семья в начале века. Ситуация удручающая// Воспитание школьников. 2002. № 3, էջ 30:

ազատագրվել ու (էմանսիպացվել ու) և խմբավորվել ու ձգտումները⁷³:
 Եվ այն բանից, թե ինչ պայմաններում կիրառործվեն այդ
 ձգտումները, շատ բան է կախված երեխաների հետագա կյանքի համար:
 Իրենց հասակակիցների շրջանում դեռահաս աղջիկները հաճախ
 գտնում են լիակատար ըմբռնում, որը նրանց պակասում է
 ընտանիքում: Այս միջավայրում նրանք սկսում են օգտագործել
 ալկոհոլ, ծխախոտ, հնարավոր է ունենան իրենց առաջին սեռական
 հարաբերությունը, ինչին նպաստում են պրոնկագրական ֆիլմերն
 ու նյութերը: Վերջիններիս դիտումը ապահովում է համապատասխան
 մթնոլորտը: Դեռահաս աղջիկները, ունենալով սեռական
 հարաբերությունների փորձ, բայց դեռ լիովին չձևավորված
 հոգեբանություն և մտավոր համակարգ, ձգտում են դեպի իրենց
 զուգընկերները՝ ցանկանալով նոր սեռական զգացողություններ:
 Եվ գալիս է մի պահ, երբ նրանք սկսում են ընդլայնել
 զուգընկերների շրջանակը, իսկ նման իրավիճակը մի շարք
 հեղինակներ բնորոշում են որպես «նախամարմնավաճառություն»⁷⁴:

Մասնագետները մարմնավաճառության պատճառ են համարում
 վաղ տարիքում սեռական հարաբերությունները⁷⁵: Վաղ տարիքում
 սեռական հարաբերությունները հղի են բազմաթիվ անցանկալի
 հետևանքներով՝ հղիության վաղաժամ ընդհատում, որը հաճախ
 առաջացնում է անպտղություն, հապճեպ ամուսնությունների
 կայացում, հոգեկան խանգարումների առաջացում⁷⁶:

Յու.Անտոնյանը մարմնավաճառության պատճառներին է դասում
 սեռական առաջին անհաջող կապը կամ սեքսուալ ոտնձգության
 ենթարկվելը⁷⁷: Մ.Ռուսակովի ուսումնասիրության համաձայն՝ ՌԴ-
 ում մարմնավաճառների 50 %-ը 12-14 տարեկանում ենթարկվել է

⁷³ Տե՛ս Ремшмидт Х. Подростковый и юношеский возраст: Проблемы становления личности. М., 1994, էջ 109.

⁷⁴ Տե՛ս Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջ 39:

⁷⁵ Տե՛ս Молодежная проституция и изменение отношение к браку. М. К. Горшков, Ф. Э. Шереги // Мониторинг общественного мнения. № 4, 2010, էջ 216:

⁷⁶ Տե՛ս Анулин В. Ф. Сексуальная революция// Социологические исследования. 2000. № 9. էջ 93:

⁷⁷ Տե՛ս Антоян Ю. М. Криминология. М., 2004. էջ 438:

սեռական բնույթի գործողությունների⁷⁸։ Իհարկե, շատ բան է կախված առաջին սեռական հարաբերության դրդապատճառից և միջավայրից, գուցենկերոջ հոգեբանությունից։ Եվ ինչպես նշում են հետազոտողները, այն աղջիկների մոտ, ովքեր ժամանակից շուտ են սկսել ապրել սեռական կյանքով (հատկապես, եթե դա տեղի է ունեցել պատահական անձանց հետ) կարող է ձևավորվել հարաբերական սեռական անտարբերություն, որի դեպքում հեշտորեն հաղթահարվում են բարոյական արգելքները⁷⁹։

Ամուսնալուծությունները իրենց բացասական ազդեցությունն են թողնում ոչ միայն երեխաների և ծնողների միջանձնային հարաբերությունների վրա, այլ նաև տարածվում են կենսագործունեության մյուս ոլորտների վրա։ Մասնագետները ընդգծում են, որ ամուսնալուծված ծնողների երեխաների մոտ զգալիորեն ցածր են իմացական ընդունակությունները, ցածր է դպրոցական առաջադիմությունը և թույլ է արտահայտված մղումը դեպի ուսումը⁸⁰։ Ի. Դեմենտևան նշում է, որ ոչ լիարժեք ընտանիքներում մեծացած երեխաները հաճախ ստանում են թերի կրթություն և դրա արդյունքում հետագայում ունենում են ավելի ցածր եկամուտներ⁸¹։ Իսկ այդ հանգամանքը, իր հերթին, հետագայում կարող է ազդել անձի՝ հակաօրինական ճանապարհով (այդ թվում մարմնավաճառության միջոցով) նյութական վիճակը շտկելու որոշման կայացման վրա։

Մարմնավաճառի անձի ձևավորման գործում մեծ դեր ունի այն, թե այդ անձինք ինչպիսի ընտանիքում են դաստիարակվել և այժմ ինչ ընտանեկան կարգավիճակ ունեն⁸²։ Մեր ուսումնասիրության շրջանակներում հարցվողներին առաջարկվեց պատասխանել այն հարցերին, թե մինչ չափահաս դառնալն ում հետ են ապրել և

⁷⁸ St'u Русакова М. М. Влияние перенесенного в детстве сексуального насилия на вовлечение женщин в проституцию. // Современные исследования социальных проблем (Электронный журнал) № 5, 2012:

⁷⁹ St'u Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջեր 40-41 :

⁸⁰ St'u Дементьева И.Ф. Негативные факторы воспитания детей в неполной семье // Социологические исследования. 2001.№11, էջ 111:

⁸¹ St'u Райс Ф. Психология подросткового и юношеского возраста. СПб., 2000, էջ 470:

⁸² St'u Харчев А.Г. Становление личности. М., 1972, էջ 26 :

ներկայ ումս ու՞մ հետ են բնակվում: Առաջադրված հարցերի պատասխանները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մարմնավաճառների ընտանիքի բնութագիրը

Մինչև 2 անհատ դառնալը ու՞մ հետ են բնակվել	Ու՞մ հետ են ներկայումս բնակվում
Միայն հոր – 9%	Երեխայի (ների) – 34%
Միայն մոր – 36%	Միայն մոր – 24%
Երկու ծնողների – 19%	Միայն հոր – 4%
Առանց ծնողների – 16%	Երկու ծնողների – 2%
Հարազատ ծնողի և խորթ հոր կամ մոր – 9%	Միայնակ – 9%
Տատիկի, մորաքրոջ, հորաքրոջ, քրոջ – 11%	Քրոջ կամ եղբոր – 4%
-	Ընկերոջ – 2%
-	Ընկերուհիների – 21%

Ակնհայտ է, որ մարմնավաճառությամբ զբաղվողների շրջանում գերակշռում են այն անձինք, ում մանկությունն ընթացել է ոչ լիարժեք ընտանիքում: Մարմնավաճառություները պայմանավորող հանգամանքներից մեկն էլ մեր հասարակության մեջ սեռական դաստիարակության պատշաճ համակարգի բացակայությունն է: Բնակչության շրջանում մեր կողմից կատարված հարցման մասնակիցների պատասխանները փաստում են նշված կարծիքը. հարցվածների 70%-ը նշել է, որ հայ հասարակությունում սեռական կյանքի վերաբերյալ բնակչության գիտելիքները գտնվում են ցածր մակարդակի վրա: Հարցվածներից 50%-ը նշել է, որ սեռական կյանքի մասին ինֆորմացիայի առաջին աղբյուրը եղել է հեռուստացույցն ու համացանցը, մասնակիցներից 16%-ի համար՝ ծնողները, 12%-ի համար՝ ընկերները, ևս 13%-ը այլ պատասխան է նշել և ընդամենը 9%-ի համար է դպրոցը եղել ինֆորմացիայի առաջին աղբյուր:

Սեռական դաստիարակությունը սեռերի սոցիալականացման գործընթացն է, բոլոր այն ուղղություններն ու ազդեցությունները, որոնք օգնում են երեխային դառնալ կին կամ տղամարդ, ընտելացնում երեխային հանրության մեջ ընդունված՝

սեռերի միջև առկա աշխատանքային, հանրային, անձնական կյանքի հարաբերություններին: Իսկ ավելի նեղ իմաստով սեռական դաստիարակությունը պատրաստում է երեխային սեռական կյանքին՝ երեխային տալով դրա վերաբերյալ նվազագույն անհրաժեշտ տեղեկատվություն⁸³:

Անհրաժեշտ է փաստել, որ վերջին շրջանում ՀՀ-ում կատարվել են երեխաների սեռական դաստիարակությանն ուղղված որոշակի քայլեր: Մասնավորապես, դպրոցներում դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որը աշակերտներին որոշակի գիտելիքներ է մատուցում սեռական դաստիարակության վերաբերյալ: Սակայն, այդ գիտելիքները առավելապես վերաբերում են սեռական հիգիենայի և սեռավարակներից պաշտպանվելու հարցերին: Չժխտելով նշված հարցերի արդիականությունը՝ կարծում ենք, որ սեռական դաստիարակության առարկան պետք է ներառի նաև դրույթներ, որոնք ուղղված են ընտանեկան բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: Բացի այդ, ցանկալի է, որ քննարկվող առարկան դասավանդվի պրոֆեսիոնալ մակարդակով՝ բժշկի կամ հոգեբանի կողմից, մինչդեռ դպրոցներում այս առարկան հիմնականում այլ մասնագետներ են դասավանդում:

Մեր կարծիքով սեռական դաստիարակության առարկայի ծրագիրը պետք է ներառի ոչ միայն աղջիկների և տղաների հոգեկան և ֆիզիոլոգիական զարգացման ուսումնասիրություն, այլ և սեռական մշակույթի և գրագիտության ձևավորում, պատրաստի աճող սերնդին ամուսնական և ծնողական պարտականությունները կատարելուն: Ժամանակակից հոգեբանների մեծամասնությունը կարծում է, որ սեռական կրթությունը պետք է հագեցած լինի բարոյական կանոններով, որպեսզի առարկայի ուսումնասիրությունը արդյունավետ լինի:⁸⁴

Բացի դպրոցից երեխաների սեռական դաստիարակության

⁸³ См. у Российской педагогическая энциклопедия // Под ред. В.В. Давыдова. Т.2.М.1996, էջ 166:

⁸⁴ См. у Лявшина Г.Х. Сексуальное воспитание детей и подростков. М., 2003, էջեր 35-40:

հարցում իրենց դերը ունեն ծնողները: Նախնական սեռական դաստիարակությունը սկսվում է ընտանիքում և դրա պատասխանատվությունը կրում են ծնողները: Ցանկալի է, որ ծնողները սեռական հարաբերությունները ընկալեն որպես կյանքի բնական և անբաժան մի մասը, որով սեռական հարաբերությունների նկատմամբ իրենց առողջ վերաբերմունքը կփոխանցեն երեխաներին:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ անձի մոտ հակաիրավական և հակաբարոյական վարքագծի (այդ թվում և մարմնավաճառության) վրա զգալի ազդեցություն է ունենում ընտանիքը: Ոչ լիարժեք ընտանիքներում մեծացած երեխաների աճը նպաստում է մարմնավաճառության տարածմանը⁸⁵: Ասվածը ապացուցվում է նաև մարմնավաճառների շրջանում մեր կողմից իրականացված հարցազրույցների արդյունքներով: Դրանցից պարզ է դառնում, որ մարմնավաճառների մեծ մասը ապրել է ոչ լիարժեք ընտանիքում, իսկ ներկայում էլ ապրում է առանց ամուսնու: Այսպես, հարցումներին մասնակցած 42 մարմնավաճառներից լիարժեք ընտանիքում են մեծացել միայն 19%-ը, իսկ ներկայում նրանցից ոչ ոք ամուսնական կարգավիճակ չունի:

Բարոյական գործոնների շարքում կարևոր դեր ունեն հասարակության մեջ տիրող բարքերը: Վերջինիս վրա էլ մեծ ազդեցություն է թողնում պետության կողմից իրականացվող գաղափարախոսությունը, այսինքն պետության կողմից իրականացվող քաղաքականությունը արժեքների տարածման հարցում: Խորհրդային Միությունում գաղափարախոսական գործունեությունը համարվում էր պետության առաջնային գործառույթներից մեկը:⁸⁶

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո խորհրդային պետական գաղափարախոսությունը վերացվեց, սակայն փոխարինող գաղափարախոսություն չստեղծվեց: Հեղինակները ընդգծում են, որ հետխորհրդային շրջանին բնորոշ գիծը հասարակության

⁸⁵ Տե՛ս Кожевников Е. Нужна государственная семейная политика//Воспитание школьников. 2001, №10, էջ 10:

⁸⁶ Տե՛ս Кочетков А. Воздействие криминальной идеологии на культуру России // Законность. 2001, №10, էջ 41:

անդամների վարքագծի ինքնակարգավորումն է ⁸⁷, ինչն էլ հնարավորություն է ստեղծում ցանկացած, այդ թվում և հակաբարոյական արժեքներ քարոզելու համար: Արդյունքում խաթարվում են հայ հասարակությանը բնորոշ ավանդական արժեքները, իսկ հասարակությունը կամաց-կամաց ավելի հանդուրժող վերաբերմունք է դրսևորում վարքագծի այնպիսի տեսակների նկատմամբ, որոնք ավանդաբար համարվում էին անընդունելի բարոյականության տեսանկյունից (մարմնավաճառություն, մոլեխաղեր, թմրամոլություն և այլն): Ասվածը ապացուցվում է բնակչության շրջանում իրականացված հարցումներով: Այսպես, «ըստ ձեզ, ինչպիսի՞ն է մարմնավաճառի աշխատանքը» հարցին հարցվածների 50%-ը պատասխանել է՝ «եկամտաբեր», 20%-ը՝ «ծանր», 17%-ը՝ «նվաստացուցիչ», 13%-ը տվել է այլ պատասխան: Հարցվածների 40%-ը կողմ է եղել, որ մարմնավաճառությունը օրինականացվի:

Բնակչության 50%-ի կարծիքով մարմնավաճառությամբ զբաղվելու հիմնական պատճառը սոցիալական ծանր դրությունն է, 8%-ի կարծիքով անձի բարոյական կերպարը, 6%-ի կարծիքով հասարակության մեջ առկա բարքերը, 19%-ի կարծիքով՝ պետական հսկողության բացակայությունը, 17%-ը գտնում է, որ մարմնավաճառությամբ զբաղվելու հիմնական պատճառը համացանցով, հեռուստատեսությամբ բաց տեսարաններով ֆիլմերի տարածումն է:

Քաղաքացիների 25%-ի կարծիքով մարմնավաճառի ծառայությունից օգտվում են հետաքրքրությունից, 16%-ի կարծիքով՝ նոր զգացողությունների մղումով, 16%-ի կարծիքով՝ իրենց այլասերված պահանջմունքները բավարարելու համար, 38%-ի կարծիքով մարմնավաճառների ծառայություններից օգտվում են, քանի որ ընտանիքում անձը չի բավարարում իր սեքսուալ պահանջմունքները, 5%-ն էլ այլ պատասխան է նշել: Այն հարցին, թե պետությունը բավարար պայքար իրականացնու՞մ է

⁸⁷ Ст'я Рывкина В.В. Образ жизни населения России: Социальные последствия реформ 90-х годов // Социологические исследования. 2001, № 4, էջ 31:

մարմնավաճառությունը կանխելու համար, բնակչության 62%-ը տվել է բացասական պատասխան:

Ներկայացված տվյալներն, իրոք, մտահոգիչ են. մի կողմից դրանք վկայում են մարմնավաճառություն երևույթի նկատմամբ հասարակության անդամների մոտ հանդուրժողականության վերաբերմունքի ձևավորման մասին, մյուս կողմից՝ մարմնավաճառության կանխման առավել արդյունավետ միջոցառումների փնտրանքները անհրաժեշտության մասին:

Մարմնավաճառության տարածմանն ու քարոզմանն էապես նպաստում է համացանցի զարգացումը: Հայաստանում, ի տարբերություն միջարքայլ երկրների, չի գործում ֆիլտրման մեթոդը, որը պոռնոգրաֆիկ կայքերը որոշ կատեգորիայի օգտագործողների (հատկապես անչափահասների) համար դարձնում է անհասանելի: Այս կապակցությամբ մտահոգություն է արտահայտվել նաև հայկական լրատվամիջոցներում⁸⁸: Հաճախ նաև պոռնոկայքերում տեղադրված է լինում մարմնավաճառների գովազդներ, որոնք պարունակում են մարմնավաճառի լուսանկարը, գտնվելու վայրը, տարիքը, շատ դեպքերում նաև մատուցվող սեռական ծառայությունների արժեքը, հեռախոսահամարը և այլ անհրաժեշտ տվյալներ:

Ընդհանրապես, դժվար է թերագնահատել զանգվածային լրատվամիջոցների դերը մարմնավաճառության քարոզման գործում: Եթե միջև 20-րդ դարի 80-ականների վերջերը լրատվամիջոցներով մարմնավաճառության խնդրի լուսաբանումը ԽՍՀՄ-ում փաստացի արգելված էր, ապա 1980-ականներից սկսած՝ մարմնավաճառությունը և մարմնավաճառները գտնվում են լրագրողների, գրողների, կինոգործիչների, իրավապահների, հոգեբանների, բժիշկների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Սակայն, ցավոք սրտի, հատկապես սկզբնական շրջանում, լրագրողները և մշակույթի գործիչները հիմնականում գրում էին մարմնավաճառների վաստակած

⁸⁸ Տե՛ս Հայաստանում չե՛ն լինում պոռնոկայքերի վերաբերյալ ահազանգեր: «Առավոտ» օրաթերթ: 11.02.12:

եկամուտների մասին: Այդ շրջանում նկարահանվեցին և մեծ ժողովրդականություն ձեռք բերեցին խորհրդային և ամերիկյան մի քանի ֆիլմեր, որոնք ամբողջացրին մարմնավաճառի «գուներ» կերպարը, իսկ նրանց կյանքի տխուր կողմը մնաց ստվերում: Նման քարոզչության զանգվածային գրոհը չէր կարող իր ազդեցությունը չունենալ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրեց նրան, որ համացանցում ձևավորվեց սեռական ծառայությունների վիրտուալ շուկա⁸⁹: Անկասկած, այն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է անչափահաս և երիտասարդ աղջիկների գիտակցության և ենթագիտակցության վրա: Միանշանակ է, որ կանխարգելիչ ազդեցություն կարող է ունենալ հեռուստատեսության մեջ ֆիլմերի և հաղորդումների ցուցադրումը, որոնք կներկայացնեն մարմնավաճառչության պատճառած վնասերը և մարմնավաճառչների կյանքի տխուր ու դժբախտ կողմերը: Անհրաժեշտ է, որպեսզի պետությունը աջակցի և խրախուսի նման ֆիլմերի ու հաղորդումների պատրաստմանն ու ցուցադրմանը:

Հասարակության մտածողության մեջ տարածում են գտնում հանցավոր միջավայրին բնորոշ արժեքներն ու նորմերը, հանցավոր կարծրատիպերը, որոնք արդարացվում են ֆինանսական, բարոյական, քաղաքական և այլ ընկալումներով: Լրատվամիջոցների բացասական հետևանքների նշանակության վերաբերյալ բազմիցս նշվել է քրեագետների կողմից⁹⁰:

Թերևս կարելի է պնդել, որ հասարակական գիտակցության մեջ մարմնավաճառչության նկատմամբ բացասական վերաբերմունքի կորուստը մեծ վտանգ է ներկայացնում հանրության բարոյական ներուժի համար՝ շատ հակաբարոյական երևույթներ դարձնելով սովորական: «Թեթևաբարո» կենսակերպը դառնում է ընդօրինակման առարկա, հատկապես երիտասարդության շրջանում:

Մարմնավաճառչությունը պայմանավորող գործոնների հաջորդ

⁸⁹ St' u Алихаджиева И. С. Преступления, сопряженные с проституцией. М., 2010, էջ 11:

⁹⁰ St' u Лыков В. Поднятие нравов как фактор преступности // Профессионал. 2002, №1(4), էջ 4; Дроздов А.Ю. «Агрессивное телевидение» : Социально-психологический анализ феномена // Социологические исследования . 2001, № 8, էջեր 62-67

խումբը՝ տնտեսականն է: Չգալի թվով գիտնականներ այն կարծիքին են, որ մարմնավաճառության առաջացման հիմնական պատճառը տնտեսական պայմաններն են՝ ճգնաժամը, աղքատությունը, գործազրկությունն և այլն⁹¹: Այս կարծիքը կիսում են նաև հարցված քաղաքացիների 50%-ը:

Մարմնավաճառությունը պայմանավորող տնտեսական բնույթի գործոններն են գործազրկությունը, սոցիալական ծայրահեղ բևեռացումը, աղքատության բարձր մակարդակը: Եվ որպես կանոն, այս գործոնները փոխկապակցված են. աղքատության աճին զուգահեռ, տարբեր սոցիալական խմբերի միջև մեծանում է կյանքի պայմանների անհավասարությունը, խորանում է եկամտային տարբերությունների անդունդը հարուստների ու աղքատների միջև: Ինչպես հայտնի է, աղքատությունն ու անհավասարությունը ուղղակի և անուղղակի ազդեցություն են թողնում անհատի սոցիալական և հոգեբանական վիճակի, հասարակությունում վերջինիս զբաղեցրած դիրքի, անհատի՝ հասարակության նկատմամբ վերաբերմունքի վրա: Եկամուտների անհավասարությունը անձի մոտ առաջացնում է հոգեւոցիալական ցնցում, որը անձին դրդում է հակահասարակական վարքագծի՝ այդ թվում մարմնավաճառության:

ԽՍՀՄ փլուզումը և անցումը շուկայական տնտեսությանը ԱՊՀ բոլոր պետություններում ավելացրեց բնակչության եկամուտների անհավասարությունը՝ մեծացնելով աղքատների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվակազմում: Նշված երևույթները Հայաստանի Հանրապետությունում ավելի խորը արտահայտվեցին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների պատճառով, ինչպիսիք են 1988 թ.-ի ավերիչ երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմը, երկրի շրջափակումը, կառավարման փորձի պակասը, կոռուպցիայի բարձր մակարդակը, տնտեսության մեջ ձևավորված մենաշնորհները և այլն: Բնակչության եկամտային անհավասարության աստիճանը արտացոլող Ջինի գործակիցը 1989 թ.ի 0,25 -ից 1990-ականների երկրորդ կեսին հասավ 0,59-0,60-ի, որի հետևանքով ՀՀ-ն դասվեց եկամտային

⁹¹ Ст'ю Ласс Д.И. По пути ликвидации проституции. М., 1931, էջ 4:

անհավասարության գծով աշխարհի ամենաանհավասարաչափ զարգացող երկրների դասին⁹²:

ՀՀ-ում բարձր է աղքատության մակարդակը: 2012թ.-ի տվյալներով աղքատների թիվը 32,4 % է⁹³: Աղքատությանը նպաստող հիմնական հանգամանքներից է գործազրկությանը, թեև Հայաստանում աշխատաշուկայի ներկայիս պայմաններում զբաղված լինելը դեռևս լիարժեք երաշխիք չէ աղքատության հաղթահարման համար, քանի որ զգալի թվով զբաղված անձինք ի վիճակի չեն ապահովել իրենց ու իրենց ընտանիքի համար անհրաժեշտ նույնիսկ նվազագույն կենսամակարդակի ապահովման միջոցները: Դրամասին է փաստում այն, որ ըստ ՄԱԿ-ի տվյալների 2005 թ.-ի դրությամբ զբաղված բնակչության 24%-ը (նրանց ընտանիքի անդամները) համարվում էին աղքատ:

Մասնագետների կարծիքով գործազրկությանը ուղեկցվում է զանգվածային սոցիալական ճգնաժամով և ֆրոստրացիայով, վաղվա օրվա նկատմամբ հավատքի կորուստով⁹⁴: 2012թ.-ի դրությամբ ՀՀ-ում գործազրկության մակարդակը 17,3%-է⁹⁵: Բացի այդ, աշխատաշուկայում մեծացել է մրցակցությանը կանանց և տղամարդկանց միջև այն աշխատատեղերի համար, որոնք ավանդաբար բնորոշ էին կանանց (հասարակական սննդի ոլորտ, մանրածախ առևտուր և այլն): Մասնավորապես, ոչ վաղ անցյալում հազվադեպ կարելի էր հանդիպել տղամարդ մատուցողների, իսկ այժմ նրանց թիվը բավական մեծ է:

Մարմնավաճառության պատճառ հանդիսացող գործոնների վերլուծությանը վկայում է, որ՝

1. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ-ում գրանցված աղքատության, գործազրկության բարձր մակարդակը, հասարակության խիստ բևեռացումը, նախկին արժեքային համակարգի փլուզումը և միասնական

⁹² Տե՛ս Деловой экспресс // Экономический еженедельник Армении, № 08 (512) 6-12 марта. 2003, էջ 7:

⁹³ Տե՛ս www.armstat.am / Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 109:

⁹⁴ Տե՛ս Криминология // Под ред. А.И. Долговой. М., 2002, էջեր 790-791:

⁹⁵ Տե՛ս www.armstat.am / Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 75:

գաղափարախոսության բացակայությունը, սոցիալ-տնտեսական գործոնների հետևանքով հայկական ավանդական ընտանիքների ձևափոխումը նպաստավոր պայմաններ է ստեղծում մարմնավաճառության զարգացման համար:

2. Մարմնավաճառության ուղին բռնած անձանց շրջանում մեծ թիվ են կազմում ոչ Լիարժեք ընտանիքներում դաստիարակություն ստացած իգական սեռի ներկայացուցիչները:
3. Մարմնավաճառության պատճառ հանդիսացող գործոններից է սեռական դաստիաջակության գործոնն համակարգի բացակայությունը: Հետևաբար անհրաժեշտ է դպրոցական ծրագրերում ներմուծել սեռական դաստիարակություն դասընթացը, որը պետք է դասավանդվի հոգեբանի կամ բժշկի կողմից:

**ԳԼՈՒԽ 2. ՄԱՐՄԼԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՆՑ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

§ 1. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը

Մարդու թրաֆիքինգը վերջին տարիներին լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում, այդ թվում և Հայաստանում: Մարդկանց և երեխաների առևտրով զբաղվողների գործունեության մասշտաբը և նպատակները շատ նման են միջազգային լայն ցանց ձևավորող ահաբեկիչների, թմրավաճառների գործունեությանը⁹⁶: Մարդկանց միջազգային առևտուրը սերտորեն կապված է այլ հանցագործությունների, մասնավորապես՝ խարդախության, շորթման, փողերի լվացման, կաշառակերության հետ⁹⁷: Գիտնականները մարդկանց առևտուրը համարում են ստրկության դրսևորում ժամանակակից պայմաններում⁹⁸:

Մասնագետների պնդմամբ թրաֆիքինգի պարագայում մարդը դառնում է սեփականության օբյեկտ, նրան կատմամբ կիրառվում են սեփականատիրոջ իրավագործություններ⁹⁹: Մարդու թրաֆիքինգի դեմ պայքարին են նվիրված միջազգային մի շարք փաստաթղթեր: Դրանցից հիմնականներն են՝ ՄԱԿ-ի «Ստրկության մասին» 1926թ., «Հարկադիր աշխատանքի մասին» 1930թ., «Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից մարմնավաճառության շահագործման դեմ պայքարի մասին» 1949թ., «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ»

⁹⁶ St' u Ерохина Л. Д. Два лика транснациональной организованной преступности. М., 2005, էջեր 296-305, Матвиенко А.В. Взаимозависимость торговли людьми и терроризма в глобальном мире. СПб 2008, էջեր 273-275, Куликова М. С. Проституция в России. Самара. 2009, էջ 191:

⁹⁷ St' u Иванов А. М. Органозованная преступность на Дальнем Востоке/ Под ред. В. А. Намоканова. Владивосток, 2001, էջեր 105-110, Шалимов У. У. Экономические причины преступлений, связанных с торговлей людьми // Черные дыры в российском законодательстве. М., 2007, № 3, էջեր 204-206, Шелли Луиз. Торговля женщинами. Криминологический ежеквартальный журнал. М., 2003, № 3, էջեր 124-131:

⁹⁸ St' u Громов С. В. Уголовно – правовая характеристика торговли людьми и использования рабского труда. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук М., 2006 էջ 55, Раманова Е. Н. Торговля людьми как международная проблема// Противодействие торговле людьми и исползованию рабского труда. Ставрополь, 2007, էջ 131.

⁹⁹ St' u Торговля людьми. Социокриминологический анализ / Под общ. ред. Е. В. Тюрюкановой и Л. Д. Ерохиной. М., 2002, էջ 5:

2000թ. կոնվենցիաները: 2000թ. դեկտեմբերի 12-ին Իտալիայի Պալերմո քաղաքում ՀՀ-ի կողմից ստորագրվել է ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան և բացառապես «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությունը, որը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2003թ.-ի մարտի 21-ի որոշմամբ: Նշված փաստաթղթերի պահանջներին համապատասխան ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում մարդու թրաֆիքինգի համար (հոդված 132): Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132-ի մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելն է: Իսկ հոդվածի 4-րդ մասի համաձայն 132 և 132.2 հոդվածներով շահագործում են համարվում այլ անձի պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Ինչպես երևում է, հոդված 132-ը սեքսուալ շահագործման հետ մեկտեղ ներառում է նաև շահագործման այլ տեսակներ, սակայն հաշվի առնելով աշխատանքի բովանդակությունը ու կառուցվածքը՝ մենք անդրադառնալու ենք միայն սեքսուալ շահագործման նպատակով մարդու թրաֆիքինգին:

Քրեական իրավունքի տեսությունը՝ որպես քրեական պատասխանատվության միակ հիմք համարում է անձի կատարած արարքում հանցակազմի առկայությունը: Հանցակազմը քրեական օրենքով սահմանված հատկանիշների համակցությունն է, որով էլ պայմանավորված է հանցագործության առկայությունը¹⁰⁰:

Յուրաքանչյուր հանցագործության որակման համար անհրաժեշտ է հետազոտել հանցակազմի բոլոր տարրերն ու

¹⁰⁰ См. Комментарий к Уголовному кодексу Р.Ф. (посттотейный) / Под ред. Н.Г. Кадникова. М., Книжный мир, 2004, էջ 26:

հատկանիշները: Ընդհանուր կանոնի համաձայն՝ հանցագործության որակումը սկսվում է նրա օբյեկտը և օբյեկտիվ կողմը բացահայտելուց¹⁰¹:

Գիտության մեջ տրված են հանցագործության օբյեկտի տարբեր բնորոշումներ: Հեղինակների մի մասը հանցագործության օբյեկտ համարում է հասարակական շահը¹⁰², մյուսները որպես հանցագործության օբյեկտ դիտարկում են այն հասարակական հարաբերությունները, որոնք պաշտպանվում են քրեական օրենքով: Ըստ այդ գիտնականների՝ յուրաքանչյուր հանցագործության օբյեկտը քրեաիրավական հարկադրանքի համակարգի միջոցով պաշտպանվող հասարակական հարաբերություններն են¹⁰³: Ըստ մեկ այլ տեսակետի՝ հանցագործության օբյեկտը պաշտպանվող հասարակական հարաբերություններն են: Հանցագործության օբյեկտը այն թիրախն է, որին հարվածում է ցանկացած հանցագործություն: Այդպիսի թիրախ են հասարակական հարաբերությունները¹⁰⁴:

Տեսության մեջ լայն տարածում է գտել օբյեկտի ուղղահայաց և հորիզոնական դասակարգումը: Ըստ ուղղահայաց դասակարգման՝ դիտարկվում է հանցագործության օբյեկտի քառաստիճան բաժանումը՝ ընդհանուր, սեռային, տեսակային, անմիջական: Մարդու թրաֆիքինգի սեռային և տեսակային օբյեկտը որոշելիս պետք է հաշվի առնել, որ արարքները, որոնք տեղադրված են նույն գլխում, ոտնձգում են միևնույն օբյեկտի դեմ: Քննարկվող հանցագործության սեռային օբյեկտ պետք է համարել անձի՝ հասարակական հարաբերությունների մասնակցի իրավունքներն ու ազատությունները ասպահովող հասարակական հարաբերությունները¹⁰⁵:

Անձի դեմ ուղղված հանցագործությունների

¹⁰¹ Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 1999, էջ 59:

¹⁰² Տե՛ս Никифоров Б.С. Объект преступления. М., 1960, էջ 116:

¹⁰³ Տե՛ս Пионтоковский А.А. Уголовное право. Часть общая. М., 1925, էջ 129:

¹⁰⁴ Տե՛ս Коржанский Н.И. Объект и предмет уголовно-правовой охраны. М., 1980, էջ 27:

¹⁰⁵ Տե՛ս Российское уголовное право. Особенная часть. Учебник под ред. В.Н. Кудрявцева и А.В. Наумова. М., 1997, էջ 28:

վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել տեսակային օբյեկտը, որը ամբողջացնում է միաբնույթ հանցագործությունները: ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 17-ը վերնագրված է՝ անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ : Հետևաբար, այս գլխում գետեղված հանցագործությունների տեսակային օբյեկտ պետք է համարել անձի ազատությունը, պատվի և արժանապատվությունը: Անձնական ազատությունը, այսինքն՝ ինքն իրեն տնօրինելու ազատությունը, մարդու թրաֆիքինգի անմիջական օբյեկտն է: Անձնական ազատությունը հասարակական հարաբերություններն են, որոնք հնարավորություն են ընձեռում մարդուն ազատ տեղաշարժվել և որոշել իր գտնվելու վայրը ¹⁰⁶ : Անձնական ազատության հիմքում ընկած է մարդու հիմնական պահանջմունքներից մեկը՝ տեղաշարժվելու պահանջմունքը, ինչը մարդու՝ որպես կենդանի օրգանիզմի, ֆիզիկական գոյության և զարգացման պայմաններից է: Տեղաշարժման սահմանափակումը բնագրաբար ընկալվում է որպես անազատություն: Բանտը բնութագրվում է ոչ այնքան ճաղերի առկայությամբ և հարմարավետության պակասով, այլ նրանով, որ դամի վայր է, որտեղ մարդը պահվում է իր կամքին հակառակ ¹⁰⁷: Անձնական ազատության և կամքի հասկացությունները անխզելիորեն կապված են, քանի որ ազատության իրագործումը իրենից ներկայացնում է կամաարտահայտության դրսևորում: Այս հարցը ունի նաև պրակտիկ նշանակություն: Դրա պատասխանը առաջացնում է մեկ այլ հարց. կարող է արդյո՞ք անձի ազատության դեմ ուղղված հանցագործություններում տուժող լինել կամքով չօժտված անձը (հոգեկան հիվանդ, նորածին և այլն): Որոշ հեղինակների կարծիքով անհրաժեշտ է, որ տուժողը գիտակցի իր՝ սեփական կամքով տեղաշարժվելու հնարավորությունից զրկվելու փաստը ¹⁰⁸ : Գիտնականների մյուս խումբը նշում է, որ անձնական ազատության

¹⁰⁶ Տե՛ս Шаронов Р. Д. Физическое насилие в уголовном праве. СПб, 2001, էջ 194.

¹⁰⁷ Տե՛ս Кон И.С. В поисках себя . М., 1984, էջեր 97-98:

¹⁰⁸ Տե՛ս Коментарий к уголовному кодексу РСФСР.М., 1974, էջ 274:

իրավունքի իրականացման փաստը արձանագրելու համար տուժողի կողմից այդ փաստը գիտակցելու հանգամանքը որևէ նշանակություն չունի¹⁰⁹ : Երկրորդ մոտեցումը ավելի հիմնավոր է, քանի որ անձնական ազատությունը անձի այլ իրավունքների և ազատությունների հետ մեկտեղ մարդու բնական իրավունքներից է, այսինքն՝ այն պատկանում է մարդուն ծննդյան պահից: Յուրաքանչյուր պետության պարտականությունն է ճանաչել, պահպանել ու պաշտպանել դրանք: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության հոդված 16-ի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Իսկ քրեական օրենսգրքի հոդված 132.2-ը պատասխանատվություն է նախատեսում երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դադեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի համար, ընդ որում՝ սահմանելով ավելի խիստ պատիժ, քան մարդու թրաֆիքինգի համար:

Հանցագործության օբյեկտի ուղղահայաց դասակարգման հետ մեկտեղ գոյություն ունի հորիզոնական դասակարգում: Ըստ այդ բաժանման՝ առանձնացվում են հանցագործության հիմնական անմիջական, պարտադիր լրացուցիչ անմիջական և ֆակուլտատիվ լրացուցիչ անմիջական օբյեկտները: Հիմնական անմիջական օբյեկտը բնորոշվում է նրանով, որ նրան վնաս է պատճառվում առաջին հերթին և այն միշտ մտնում է հանցագործության սեռային օբյեկտի կազմում¹¹⁰: Պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտն վնասը նույնպես պատճառվում է պարտադիր կարգով, սակայն այն չի համարվում տվյալ հանցագործության անմիջական օբյեկտը և չի գտնվում համապատասխան սեռային օբյեկտի հիմքում: Այսպիսով, խոսքը գնում է արարքների մասին, որոնք միաժամանակ ոտնձգում են երկու օբյեկտների դեմ: Այդպիսի արարքներից է քրեական

¹⁰⁹ Ст'ю Бойко Н.В. Ответственность за незаконное лишение свободы по советскому уголовному праву. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Харьков. 1984, էջ 10:

¹¹⁰ Курс уголовного права. Т. 3. Особенная часть. / под ред. Г. Н. Борзенкова и В. С. Комиссарова. М., 2002, էջ 214:

օրենսգրքի հոդված 132-ի երկրորդ մասի 4-րդ կետով նախատեսվածը՝ մարդու թրաֆիքինգը կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այստեղ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը անձի ազատությունն է, իսկ պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ մարդու առողջությունը: Երկօբյեկտ հանցագործությունն է նաև հոդված 132-ի երրորդ մասի երկրորդ կետը՝ մարդու թրաֆիքինգը, որը անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ: Ինչպես երևում է նորմի բովանդակությունից, պարտադիր լրացուցիչ օբյեկտի դերում մարդու կյանքն է: Որոշակի բարդություններ է առաջացնում «այլ ծանր հետևանքներ» արտահայտությունը: Սրա տակ կարելի է հասկանալ առողջությանը պատճառված ծանր վնասը, խոշոր չափերի գույքային վնասը, սեռական անձեռնմխելիության խախտումը և այլն: Այսինքն, այս հանցակազմի պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող է լինել մարդու առողջությունը, սեռական անձեռնմխելիությունը, սեփականության իրավունքը և այլն: Ինչպես նշեցինք, քննարկվող հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը մարդու անձնական ազատությունն է:

Հանցագործության օբյեկտիվ կողմը հանցակազմի այն տարրն է, որը նկարագրված է քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի դիսպոզիցիաներում: Հանցագործության օբյեկտիվ կողմը օրենքով պաշտպանվող շահերի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր և հակաօրինական ոտնձգության գործընթացն է, որը դիտարկվում է արտաքին կողմից ¹¹¹: Օբյեկտիվ կողմի հատկանիշներով հանցագործությունները սահմանազատվում են միմյանցից, իսկ հանցավոր արարքները առանձնացվում են ոչ հանցավորներից: Դրա հետմիասին, ըստ օբյեկտիվ կողմի կարելի է պատկերացում կազմել հանցագործության օբյեկտի, երբեմն էլ՝ սուբյեկտիվ կողմի մասին: Օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվում է հանրորեն վտանգավոր գործողությունը (անգործությունը), արարքի

¹¹¹ Ст'ю Кудрявцев В. Н. Объективная сторона преступления. М., 1960, էջ 9:

հետևանքները և պատճառական կապը, իսկ ֆակուլտատիվ հատկանիշներն են՝ տեղը, ժամանակը, եղանակը և այլն¹¹²: Որոշ հեղինակներ օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարում են միայն արարքը՝ գործողությունը կամ անգործությունը¹¹³: Արարքների ճիշտ որակման համար պետք է պարզել, թե ինչպիսին է հանցակազմի (օբյեկտիվ կողմի) նկարագրման եղանակը: Կան մասնագետներ, ովքեր դեմ են հանցակազմի բաժանմանը՝ ձևականի և նյութականի¹¹⁴: Մասնագիտական գրականության մեջ կատեսակետ, ըստ որի՝ բոլոր հանցագործությունները ունեն իրենց իրավաբանական նշանակությունը, որոնց վրա հասնելը անհրաժեշտ և բավարար է քրեաիրավական պահպանության օբյեկտին իրական (լրիվ ծավալով) վնաս պատճառելու համար: Անհետևանք հանցագործություններ չեն լինում: Իսկ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված են համապատասխան հետևանքներ, թե՛ ոչ՝ երկրորդական հարց է¹¹⁵: Այդ պատճառով էլ գրականության մեջ արտահայտվել է այն միտքը, որ հանցակազմերի դասակարգումը նյութականի և ձևականի չունի գիտական հիմնավորում, գործնական առումով անիմաստ է և, ըստ եության, քրեական իրավունքի կեղծ ձեռքբերում է: Նման կտրուկ մոտեցման վերաբերյալ գիտության մեջ արտահայտվել են բազմաթիվ քննադատություններ¹¹⁶, որին նաև միանում ենք մենք:

Ձևական հանցակազմերում հետևանքները կամ ենթադրվում են, կամ առաջանում են ոչ բոլոր դեպքերում, կամ չունեն նյութական բնույթ, այդ պատճառով էլ չեն կարող հաստատվել դատավարական միջոցներով¹¹⁷:

Մարդու թրաֆիքինգի հանցակազմը ձևական է, քանի որ հոդվածում նյութական, այսինքն ֆիզիկապես տեսանելի և չափելի

¹¹² Տե՛ս Ковалев М. И. Объективная сторона состава преступления // Уголовное право. Под ред. И. Я. Козанченко, З. А. Незнамовой. М. 2000, էջ 145:

¹¹³ Տե՛ս Гаухман Л. Д. Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2001, էջեր 90-91:

¹¹⁴ Տե՛ս Трайнин А. Н. Общее учение о составе преступления. СПб., 2004, 86:

¹¹⁵ Տե՛ս Шаронов Р. Класификация составов преступления на формальные и материальные // Уголовное право. 2000. № 3, էջեր 51-54:

¹¹⁶ Տե՛ս Уголовное право. Общая часть. Учебник под ред. Б.В. Здравомыслова. М., 1998, էջ 104:

¹¹⁷ Տե՛ս Кудрявцев В. Н., Келина С. Г. Состав преступления/ Под ред. В. Н. Кудрявцева и А. В. Наумова. М., 2001, էջ 160:

հետևանքներ նշված չեն: Սակայն, հոդվածի որոշ ծանրացնող տեսակներ կառուցված են նյութական հանցակազմի ձևով, քանի որ նախատեսված են կոնկրետ հետևանքներ, օրինակ՝ հոդված 132-ի երրորդ մասի երկրորդ կետը՝ մարդու թրաֆիքինգը, որը անգգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ:

Հոդված 132-ի դիսպոզիցիայի ուսումնասիրությունն ինչ պարզ է դառնում, որ արարքը կատարվում է գործողությունների միջոցով, արարքի կատարումը անգործությամբ բացառվում է: Մարդու թրաֆիքինգի հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է դիսպոզիցիայում նշված հանրորեն վտանգավոր մի քանի գործողությունների կատարմամբ: Դրանցից ցանկացածի կատարումը առաջ է բերում քրեական պատասխանատվություն: Այսինքն, պատասխանատվություն առաջանում է, եթե հանցավորը շահագործման նպատակով մարդուն հավաքագրում, փոխանցում, թաքցնում, ստանում կամ նրա նկատմամբ կատարում է դիսպոզիցիայում նշված այլ գործողություններից որևէ մեկը: Համապատասխանաբար, մարդու թրաֆիքինգը դասվում է բարդ միասնական հանցագործությունների թվին՝ այլ ընտրանքային գործողություններով¹¹⁸:

Դիսպոզիցիայում նշված օբյեկտիվ կողմի գործողություններից առաջինը հավաքագրելն է: Հավաքագրել ասելով հասկացվում է անձին հակելը իր նկատմամբ գործարք կատարելու թույլ տվողություն տալու համար¹¹⁹: Հավաքագրելու եղանակները տարբեր են՝ սպառնալիք, խաբեություն, խոստումներ և այլն¹²⁰: Որոշ հեղինակների կարծիքով, երբ անձը հավաքագրվում է մարմնավաճառության համար, բայց այն կապված չէ ազատությունից

¹¹⁸ Տե՛ս Уголовное право. Общая и особенная части Под ред. Н.Г. Кадникова. М., 2006, էջեր 67-68:

¹¹⁹ Տե՛ս Чупрова А. Ю. Вербовка как способ торговли людьми. // черные дыры в российской законодательстве. 2007, № 2 էջ 43.

¹²⁰ Տե՛ս Писарев Ю. А. Дискуссия об объективной стороне торговли людьми// общество и право. 2009, № 3, էջ 12

գրկելու հետ, արարքը պետք է որակել հոդված 261-ով ¹²¹ : Հավաքագրելը դրսևորվում է տուժողին տարբեր եղանակներով թրաֆիքինգի (մարդկանց առևտրի) մեջ ընդգրկելով: Օրինակ՝ իբր աշխատանքի նպատակով արտասահման մեկնողների ցուցակում մուտքագրելը, կեղծ աշխատանքային պայմանագրեր կնքելը և այլն: Այն դեպքերում, երբ մարդկանց հավաքագրելու համար հրապարակվում են կեղծ հայտարարություններ կամ գովազդներ, բայց դրանք հանցավորներից անկախ հանգամանքերում խափանվում են, նման արարքները ենթակա են որակման՝ որպես հավաքագրելու միջոցով մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) նախապատրաստություն ¹²²:

Տեղափոխել ասելով պետք է հասկանալ անձին ցանկացած եղանակով մի վայրից մեկ այլ վայր փոխադրելը (տանելը): Արարքի որակման համար որևէ նշանակություն չունի տուժողին տեղափոխելու վայրի հեռավորությունը: Տեղափոխությունը կարող է լինել ինչպես բռնություն գործադրելով, այնպես էլ՝ առանց դրա, ինչպես գաղտնի, այնպես էլ՝ բացահայտ: Հարկավոր է նշել, որ տեղափոխողը պետք է գիտակցի, թե ինչ նպատակով է տեղափոխում մարդկանց: Հանցագործությունը համարվում է ավարտված տուժողին փոխադրելու գործողությունը սկսելու պահից և պարտադիր չէ, որ հանցավորը տուժողին հասցնի մտադրված տեղը:

Թաքցնելը շահագործման նպատակով մարդուն մեկուսացնելը, նրա գտնվելու վայրը շրջապատից գաղտնի պահելն է: Ըստ էության, թաքցնելը անձին փոխադրելու կամ շահագործելու նախապատրաստական փուլն է և, որպես կանոն, նախորդում է դրանց: Շատ գիտնականներ թաքցնելը մարդու թրաֆիքինգի համատեքստում հասկանում են ոչ միայն տուժողին ֆիզիկապես թաքցնելու առումով, այլև ցանկացած գործողություն կատարելով, որը բարդացնում է տուժողին գտնելը (փաստաթղթերից զրկելը,

¹²¹ Տե՛ս Наумов А. В. Разграничение преступлений, предусмотренный, Ст. 127.1 и 240 УК. РФ//Законность. 2007. № 6 էջ 14:

¹²² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Երևանի պետ.համալս. 2004, էջ 192:

արտաքինը փոխելը, տուժողի մասին սուտ տեղեկություններ հայտնելը և այլն)¹²³:

Փոխանցելը և ստանալը մենք դիտարկում ենք որպես փոխկապակցված արարքներ, որոնք կազմում են մարդու թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը: Փոխանցելը իրենցից ներկայացնում է մարդու հատուցելի կամ անհատույց օտարումը, իսկ ստանալը՝ հատուցելի կամ անհատույց ձեռք բերելը: Այս կապակցությամբ որոշ հետազոտողներ նշում են, որ մարդու թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը ներառում է օտարման հետ կապված այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝ վաճառքը, նվիրատվությունը, փոխանակումը և այլն¹²⁴: Փոխանցել ասելով նաև պետք է հասկանալ այն գործողությունների կատարումը, որոնք ուղղված են տուժողին հանձնելուն թրաֆիքինգի մի մասնակցից մյուսին, այսինքն տուժողին անմիջական՝ ֆիզիկապես, հանձնելու գործողությունը: Ընդ որում, տուժողը կարող է հանձնվել ինչպես իրեն ստացող անձին, այնպես էլ վերջինիս ներկայացուցիչին:

Մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը նշանակում է մարդու կամքին հակառակ նրան ներգրավել որևէ աշխատանքի կամ ծառայությունների մատուցման կատարելուն: Հոդված 132-ի ծանոթագրությունը սահմանում է շահագործման տեսակները, որտեղ շահագործման այլ ձևերի հետ նշվում է պոռնկությունն ու սեքսուալ շահագործման այլ ձևերը: Պոռնկության հասկացությանն արդեն անդրադարձել ենք, իսկ սեքսուալ շահագործման այլ ձևերի տակ հասկացվում է սեքսուալ շահագործման ցանկացած եղանակ, որը կապված է պոռնկության հետ, մասնավորապես՝ էրոտիկ ֆիլմերում նկարահանվելը, մերկապարը, սեռական մերսումը և այլն: Կանանց մարմնվաճառության մեջ ներգրավելու միջոցներն են՝ բռնաբարությունը, բռնությունը,

¹²³ Տե՛ս Кибальник А., Соломинко И. Новые преступления против личной свободы // Российская юстиция. 2004. №4, էջ 45:

¹²⁴ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу РФ / Отв. ред. В.И. Радченко. М., 2004, էջ 277:

վաճառքը, արհեստական պարտքի ստեղծումը¹²⁵:

Հոդված 132-ում նշվում են մարդու թրաֆիքինգի կատարման միջոցները (եղանակները): Մասնավորապես, նշվում է, որ թրաֆիքինգը կարող է իրականացվել կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով: Քրեական իրավունքի տեսության մեջ բռնությունը ընկալվում է որպես անձի կամքին հակառակ նրա օրգանիզմի վրա վտանգավոր ու հակաիրավական ներգործություն¹²⁶: Ընդ որում, հոդված 132-ի առաջին մասի առումով բռնությունը պետք է կյանքի կամ առողջության համար վտանգավոր չլինի, հակառակ դեպքում արարքը կորակվի հոդված 132-ի երկրորդ մասի 4-րդ կետով: Պետք է նկատել, որ բռնությունը կարող է կիրառվել ինչպես տուժողի, այնպես էլ այլ անձանց նկատմամբ (տուժողի հարազատներ, ընկերներ, իրավապահ մարմինների աշխատակիցներ և այլն), ինչը արարքի որակման վրա չի ազդում: Տվյալ հանցակազմի դիսպոզիցիայում խոսվում է նաև կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության սպառնալիքի, այսինքն՝ հոգեկան բռնության մասին: Հոգեկան բռնության տակ հասկացվում է՝ այլ անձի հոգեկանի դեմ ուղղված հակաիրավական ներգործությունը՝ նրա դիմադրությունը և կամքը հանցավորի կամքին ենթարկելու նպատակով, որը իրականացվում է ֆիզիկական ուժ կիրառելու սպառնալիքով¹²⁷: Փաստորեն, բռնության գործադրման սպառնալիքը կարելի է բնութագրել որպես անձին ուղղված հակաիրավական հոգեկան ներգործություն՝ դիմադրելուց հրաժարվելու կամ կամքը կոտրելու նպատակով՝ բանավոր կամ այլ կերպ արտահայտված վնաս պատճառելու խոստման ձևով: Սպառնալիքի այլ ձև կարող է լինել առողջությանը վնաս պատճառող առարկաների

¹²⁵ St' u Моларек В. Продаются Natachi. Новая глобальная торговля сеясом/ Пер. с англ. Е. Владимиркой. М., 2008, 11:

¹²⁶ St' u Андреева Л. А. Константинов П. Ю. Личные жестокости преступного поведения на уголовную ответственность. СПб., 200, էջ 47, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации/ Под ред. В. Т. Томина, В. С. Устинова и В. В. Сверчкова. М., 2002, էջ 294:

¹²⁷ St' u Симонов В. И., Шимихин В.Г. Квалификация насильственных посягательств на собственность. М., 1988, էջ 53:

ցուցադրումը (հրազեն, մահակ, կաստետ, դաշույն և այլն) կամ այնպիսի գործողությունների կատարումը, որոնք բացահայտ ցույց են տալիս հանցավորի կողմից բռնություն գործադրելու ցանկությունն ու հնարավորությունը: Սպառնալիքը իր մեջ պետք է պարունակի անհապաղ ուժի կիրառման հնարավորություն կամ անխուսափելիություն: Սպառնալիքը, ինչպես և բռնությունը, կարող է ուղղված լինել նաև այլ անձանց դեմ: Եթե հանցավորը կյանքի կամ առողջության համար վտանգավոր սպառնալիք է հասցնում, ապա արարքը որակվում է հոդված 132-ի երկրորդ մասի 4-րդ կետով:

Մարդու թրաֆիքինգի կատարման եղանակներից է առևանգումը: Հոդված 131-ի համաձայն՝ մարդուն առևանգելը բնորոշվում է խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելով, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Փաստորեն, հոդվածի դիսպոզիցիան նշում է միայն առևանգման կատարման եղանակները, իսկ առևանգման բովանդակությունը բացահայտված չէ: Սակայն, գիտության մեջ առևանգումը ընկալվում է որպես մարդուն՝ իր կամքին հակառակ իր միկրոսոցիալական միջավայրից կտրելը, այսինքն՝ նրան այնտեղից տեղափոխելը՝ դուրս հանելը: Առևանգման ավարտման պահը համընկնում է տուժողին այլ վայր տեղափոխելու հետ: Առևանգման ավարտման պահ համարվում է տուժողին տիրանալը և նրան թեկուզ որևէ ժամանակով այլ վայր տեղափոխելը¹²⁸:

Թրաֆիքինգի իրականացման եղանակներից են՝ այն կատարելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Թրաֆիքինգը խաբեության միջոցով կատարելը այն է, որ կատարվածի փաստացի հանգամանքների վերաբերյալ տուժողը մատնվում է մոլորության: Խաբեությունը լինում է ինչպես ակտիվ, այնպես էլ՝

¹²⁸ См. у Практический комментарий к уголовному кодексу Российской Федерации/ Под общ. Ред. Х. Д. Аликуперова и Э. Ф. Побегайло. М., 2001, էջ 317:

պասիվ: Առաջին դեպքում հանցավորը տուժողին կեղծ տեղեկություններ է հայտնում, իսկ երկրորդ դեպքում հանցավորը չի հայտնում այն տեղեկությունները, որոնք պարտավոր էր հայտնել այդ իրավիճակում: Հանցագործության կատարումը վստահությունը չարաշահելու միջոցով այն է, երբ օգտագործվում է տուժողի և հանցավորի միջև ստեղծված սերտ հարաբերությունները: Առավել հաճախ դրանք օգտագործվում են երեխաների և հոգեկան հիվանդների նկատմամբ:

Իշխանությունը օգտագործելը նշանակում է թրաֆիքինգը իրագործել՝ օգտագործելով պաշտոնեական լիազորությունները: Քննարկվող հանցակազմի առումով իշխանությունը օգտագործելը հասկացվում է՝ անձանց հավաքագրել, փոխանցել, շահագործել կամ կատարել հոգվածով սահմանված այլ գործողություններից որևէ մեկը՝ օգտագործելով պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ:

Մարդու թրաֆիքինգը համարվում է վիճակի խոցելիությունը օգտագործելով կատարված, եթե դա տեղի է ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնց ուժով տուժողը ստիպված է լինում կատարել հանցավորի պահանջներն ու ցուցումները: Խոցելի կարող է դիտարկվել տուժողի ծանր սոցիալական վիճակը, հանցավորից նրա նյութական կամ այլ կախվածությունը և այլն¹²⁹: Մարդու թրաֆիքինգի մյուս եղանակը նրան վերահսկող անձի հետ համաձայնությունն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով կատարելն է: Տուժողին վերահսկող համարվում է այն անձը, ով օրենքի, պայմանագրի, այլ իրավական ակտի կամ որևէ հարաբերությունների ուժով պարտավոր է հսկողություն իրականացնել տուժողի նկատմամբ: Այդպիսիք են՝ տուժողի ծնողները, խնամակալները, հոգաբարձուները, մանկատան կամ հիվանդանոցի տնօրինությունը և այլն: Դիսպոզիցիայում խոսվում

¹²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս. Երևանի պետ. Համալս., 2004, էջ 134:

Է վերահսկող անձի համաձայնությունը ստանալու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսի խոստման մասին: Նյութական օգուտը կարող է լինել դրամական կամ գույքային այլ արտահայտությամբ, պարտքը ներելով կամ այդպիսի խոստում տալով: Այլ օգուտ ասելով՝ հասկացվում է հանցավորի կողմից տուժողին վերահսկող անձի օգտին որևէ գործողություն կատարելը կամ ծառայություն մատուցելը կամ որևէ ինֆորմացիայի տրամադրումը:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է այն տեսակետը, որ հանցակազմ չկա այն դեպքում, երբ տուժողը տալիս է իր համաձայնությունը իր նկատմամբ որևէ գործարք կամ հոդված 132-ով սահմանված այլ գործողություն կատարելու դեպքում: Օրինակ, երբ մի կալատ մարմնավաճառին՝ իր համաձայնությամբ փոխանցում է մեկ այլ կալատի իր գործունեությունը շարունակելու համար¹³⁰: Մենք համամիտ ենք այս կարծիքի հետ, քանի որ տուժողի համաձայնությունը բացառում է նրա ազատության սահմանափակումը, ուստի հոդված 132-ի օբյեկտը այդ դեպքում բացակայում է, այդ պատճառով հանցակազմ չի կարող, եթե իհարկե, տուժողը երեխա չէ կամ չի տառապում հոգեկան խանգարումով: Եթե առկա է տուժողի համաձայնությունը, արարքը պետք է որակել հոդված 261-ով: Մարդու թրաֆիքինգի հանցակազմի մանրամասն վերլուծությունն ու հանցագործության օբյեկտի ճշգրիտ սահմանումը թույլ է տալիս ճիշտ բնութագրել տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները:

Հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշերն են սուբյեկտն ու սուբյեկտիվ կողմը:

Սուբյեկտը ցանկացած հանցակազմի պարտադիր տարրն է, առանց որի հանցավոր գործունեությունը անհնար է: Ռոմանոգերմանական իրավական համակարգում, ի տարբերություն այլ երկրների (ԱՄՆ, Չինաստան, Մեծ Բրիտանիա), իրավաբանական անձը, որպես կանոն,

¹³⁰ St' u Макаров С. Н. Реализация международно-правовых обязательств по борьбе с рабством и работорговлей в уголовном законодательстве России. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2004, էջեր 136-137:

հանցագործության սուբյեկտ է¹³¹։ Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 23-ի՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի։ Օրենքից հետևում է, որ սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը։ Հոդված 24-ի համաձայն՝ մարդու թրաֆիքինգի համար պատասխանատվությունը վրա է հասնում 16 տարեկանից։

Մեղսունակությունը քրեական իրավունքի բարդ խնդիրներից է, որը սերտորեն կապված է «անմեղսունակություն», «սահմանափակ մեղսունակություն», «հոգեկան հիվանդների անպատժելիություն» և այլ կատեգորիաների հետ¹³²։ Ըստ հոդված 25-ի՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագիտական վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործունեության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա։ Ամեղսունակության այս բնորոշումից կարելի է առանձնացնել երկու իրավաբանական և չորս բժշկական չափորոշիչներ¹³³։

Հանցակազմի հաջորդ տարրը սուբյեկտիվ կողմն է։ Սուբյեկտիվ կողմը այնպիսի հատկանիշների ամբողջությունն է, ինչպիսիք են մեղքը, շարժառիթը, նպատակը, էմոցիոնալ վիճակը¹³⁴։ Սուբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշը, որը հատուկ է բոլոր հանցակազմերին, մեղքն է¹³⁵։ Գրեթե բոլոր մասնագետները կարծում են, որ մարդու թրաֆիքինգի դեպքում հանցավորը գործում է բացառապես ուղղակի դիտավորությամբ։ Ինչպես արդարացիորեն նշվում է, անուղղակի

¹³¹ Տե՛ս Никифоров А. С. Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. М., 2002, էջ 7-25:

¹³² Տե՛ս Козаченко Г. В. Невменяемость. СПб., 2002, էջ 77:

¹³³ Տե՛ս Игнатов А. Н., Красиков Ю. А. Курс российского уголовного право. Т.1. Общая часть. М., 2001, էջ 179:

¹³⁴ Տե՛ս Кадников Н. Г. Квалификация преступлений и вопросы судебного толкования. М., Юриспруденция. 2009, էջեր 21-22:

¹³⁵ Տե՛ս Парог А. И. Квалификация преступлений по субъективным признакам. СПб., 2003 էջեր 53-55:

դիտավորությունը ձևական հանցակազմերում բացակայում է ¹³⁶ : Սակայն, հոդված 132-ի 3-րդ մասի 2-րդ կետը՝ մարդու թրաֆիքինգը, որը անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, նախատեսում է նյութական հետևանքներ (մահ կամ այլ ծանր հետևանքներ): Այդ հետևանքների նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգուշություն: Այս պարագայում առկա է մեղքի երկու ձևերով կատարված հանցագործություն, որի դեպքում բուն հանցավոր արարքի նկատմամբ կատարողը դրսևորում է դիտավորություն, իսկ հետևանքների նկատմամբ՝ անզգուշություն: Բայց, ընդհանուր առմամբ, այդպիսի արարքը համարվում է դիտավորությամբ կատարված: Իսկ, եթե հետևանքները մտնում են հանցավորի դիտավորության մեջ, արարքը որակվում է հոդված 132-ի և համապատասխան հոդվածների համակցությամբ: Այս հանցակազմի պարագայում բացառվում է հանկարծակի ծագած դիտավորության և անուղղակի դիտավորության դեպքերը: Հոդված 132-ում որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նշված է հատուկ նպատակ՝ հանցագործության կատարումը շահագործման նպատակով: Այսինքն, անձին պատասխանատվության ենթարկելու համար պետք է ապացուցել, որ նա արարքը կատարել է մարդուն շահագործելու նպատակով: Ակնհայտ է, որ թրաֆիքինգ կատարողները, առաջնորդվելով շահադիտական շարժառիթով, կարող են ունենալ տարբեր նպատակներ: Մասնավորապես, մարդուն հանձնողը (վաճառողը) հետապնդում է շահույթ ստանալու նպատակ հենց մարդուն հանձնելուց և նա անտարբեր է տուժողի հետագա ճակատագրի հանդեպ և ոչ միշտ է գիտակցում, թե ստացողը ինչ նպատակ է հետապնդում ¹³⁷:

Մի շարք հեղինակներ համարում են, որ նման իրավիճակը կարող է թույլ տալ վաճառողին խուսափել պատասխանատվությունից, քանի որ այս դեպքում հանցավորի

¹³⁶ Տե՛ս Дaгeль П.С., Кoтoв Д.П. Субъективная сторона прeстaпyпeния и ee yстoнoвлeния. Вopнeж . 1968, էջ 419:

¹³⁷ Տե՛ս Кислoвa Е.А. Угoлoвнo-пpaвoвыe cpeдcтвa пpoтивoдeйcтвия paбcтвy и тoргoвлe лyдьми. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2005, էջ 104:

դիտավորությունները ուղղված է ոչ թե տուժողին շահագործելուն, այլ նրա նկատմամբ որևէ գործարքի կատարմանը: Տուժողին տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կարող են կատարվել նրան առանց հետագայում շահագործելու նպատակով, այնպես էլ առանց գիտակցելու, որ այդպիսի նպատակով է գործում վերջնական ձեռք բերողը¹³⁸: Խնդրի լուծման համար որոշ քրեագետներ առաջարկում են մարդուն շահագործելու նպատակը հանել դիսպոզիցիայից և այն նախատեսել որպես ծանրացնող հանգամանք¹³⁹:

Մենք գտնում ենք, որ նշված խնդրի լուծման տարբերակ կարող է լինել հոդված 132-ի դիսպոզիցիայի վերաձևակերպումը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ տուժողին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ այդպիսիք խոստանալու կամ տուժողին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու նպատակով այդպիսիք ստանալու միջոցով:

Քննարկվող հանցագործությունները հիմնականում կատարվում է շահադիտական շարժառիթով: Բացառիկ դեպքերում կարող են լինել այլ շարժառիթներ: Որոշ դեպքերում անձը կարող է ստանալ (ձեռք բերել) տուժողին նրան շահագործման վիճակից ազատելու շարժառիթով՝ վերջինիս նորմալ կյանք վերադարձնելով: Բնականաբար, այստեղ հանցագործության մասին խոսք լինել չի կարող, որովհետև առկա է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ (ՀՀ քր.օր.-ի հոդված 44):

Կարևոր գործնական նշանակություն ունի քննարկվող արարքի

¹³⁸ Տե՛ս Кислова Е.А. Уголовно-правовые средства противодействия рабству и торговле людьми. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2005, էջ 104:

¹³⁹ Տե՛ս Смирнов Ю.П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 114:

ավարտման պահը և այլ հանցագործությունների հետ համակցությամբ որակման հարցերի պարզաբանումը: Հայտնի է, որ այս արարքը նկարագրված է ձևական հանցակազմով, ուստի այն ավարտվում է օրենքում նշված գործողությունները կատարելու պահից: Այս հանգամանքը մի շարք հեղինակների հիմք է տվել կարծելու, որ մարդու թրաֆիքինգը կարող է որակվել համակցությամբ մարդուն առևանգելու և ազատությունից ապրիսի գրկելու հանցագործությունների հետ¹⁴⁰: Մեր կարծիքով նման մոտեցումը հիմնավոր չէ, քանի որ հոդված 132-ի համաձայն՝ մարդու թրաֆիքինգի կատարման եղանակներից է նաև առևանգումը, ուստի առևանգումը այս հանցագործության կատարման միջոց է և մտնում է դրա օբյեկտիվ կողմի մեջ: Իսկ ազատությունից ապրիսի գրկելը առևանգման բաղկացուցիչ մասն է, այսինքն՝ մտնում է առևանգման հասկացության մեջ: Բացի այդ, նույնն է այդ հանցագործությունների և թրաֆիքինգի հիմնական անմիջական օբյեկտը: Ուստի, այս արարքները չեն կարող որակվել հոդված 132-ի հետ համակցությամբ, եթե եղել են վերջինիս կատարման միջոց: Մեր համոզմամբ, համակցությամբ չեն կարող որակվել նաև հոդված 132-ը 261, 262 հոդվածների հետ, քանի որ հոդված 132-ը շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու, տեղափոխելու, թաքցնելու, փոխանցելու կամ ստանալու հետ նախատեսվում է նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը: Իսկ ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ շահագործում է համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը: Փաստորեն, շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու ներգրավելը (հոդված 261) և պոռնկությամբ զբաղվելու նպատակով (հոդված 262) նույաբնույթով չեն հոդված 132-ի շրջանակներում:

Հոդված 132-ի երկրորդ մասը նախատեսվում է հանցագործության ծանրացնող հանգամանքները: Նույն արարքը, որը կատարվել է՝

¹⁴⁰ См. и Смирнов Ю.П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 109:

1. Երկու կամ ավելի անձանց նկատմամբ. այս ծանրացնող հանգամանքը ենթադրում է, որ հանցավորի միասնական դիտավորության մեջ մտնում է հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց նկատմամբ: Հակառակ դեպքում գործունենք մարդու թրաֆիքինգի իրականացման երկու և ավելի առանձին դեպքերի (հանցագործությունների) հետ:
2. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
3. Պաշտոնական դիրքը օգտագործելով. մինչ այժմ մշակված չեն հատուկ չափորոշիչներ պաշտոնական դիրքը օգտագործելով վերաբերյալ¹⁴¹: Ա. Շնիտենկովան առաջարկում է պաշտոնական դիրքը օգտագործելով փոխարեն կիրառել պաշտոնական լիազորություններ արտահայտությունը, քանի որ պաշտոնական դիրք բառակապակցությունը չունի հստակ բովանդակություն, այդ պատճառով էլ իրավաբանական գրականության մեջ և արակտիկայում ոչ միանշանակ է մեկնաբանվում¹⁴²: Այս ծանրացնող հանգամանքը թույլ է տալիս խոսել հանցագործության հատուկ սուբյեկտի առկայության մասին: Հատուկ սուբյեկտի դերում հանդես է գալիս պաշտոնատար անձը: Պաշտոնատար համարվում է այն անձը, ով պաշտոն է զբաղացում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում: Որոշ հեղինակների կարծիքով նշված ծանրացնող հանգամանքը առկա է նաև այն դեպքերում, երբ անձը, ձեռնարկատիրական կամ այլ կազմակերպություններում է չարաշահում ծառայողական դիրքը¹⁴³: Նրանք համարում են, որ պաշտոնական դիրքի շահագործումը կարող է արտահայտվել տուժողին պահելով (թաքցնելով) առումով: Տուժողը կարող է պահվել այնպիսի հաստատությունում, որտեղ հանցավորը իրականացնում է իր գործունեությունը որպես ղեկավար: Ամեն դեպքում պետք է

¹⁴¹ Տե՛ս Коментарий к Уголовному кодексу Российской Федерации// Отв. ред. В. М. Лебедева. М., 2007 էջ 95:

¹⁴² Տե՛ս Шнитенкова А. В. Использование служебного положения как квалифицирующий признак преступлений // Протодействие преступлений. М., 2008, էջ 332:

¹⁴³ Տե՛ս Жинкин А. А. Торговля людьми и использование рабского труда. Проблемы квалификации Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Краснодар, 2006, էջ 112:

հաշվի առնել, որ հանցագործության կատարումը պետք է կապված լինի անձի պաշտոնական լիազորությունների հետ, այլապես, արարքը կորակվի հոգվածի առաջին մասով: Հետևաբար ճիշտ կլինի քրեական օրենսգրքում օգտագործել ոչ թե «պաշտոնական դիրք», այլ «պաշտոնական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը» օգտագործելով հասկացությունը:

4. Կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով. կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության հասկացությունը բացահայտելու համար նախ անհրաժեշտ է պարզել հենց բռնության բովանդակությունը: Ընդհանրապես, այս հասկացությունը ներառում է կոնկրետ հանցագործության ժամանակ կատարած բռնի գործողությունները, որոնք վնաս են պատճառել մարդու ֆիզիկական անձեռնամխելիությանը, առողջությանը կամ մահ է պատճառել, կամ էլ այդ գործողությունները ուղղված են եղել նման վնաս պատճառելուն¹⁴⁴: Տեսության մեջ բռնությունը բաժանվում է երկու տեսակի՝ ֆիզիկական և հոգեկան: Օրենքում «բռնություն» եզրույթի տակ հասկացվում է միայն ֆիզիկական բռնությունը: Հոգեկան բռնությունը ընկալվում է որպես ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիք: Այն կարող է ունենալ իրավական նշանակություն, եթե դրա մասին նշված է օրենքում: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132-ի երկրորդ մասի 4-րդ կետի՝ բռնությունն ունի հատուկ նշանակություն՝ այն պետք է վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Գրականության մեջ հանցագործությունը տվյալ ծանրացնող հանգամանքով որակելու կապակցությամբ հեղինակները գրեթե նույն կերպ են արտահայտվում: Ըստ նրանց՝ կյանքի կամ առողջության

¹⁴⁴ Տե՛ս Порфиенко И. П. Уголовно-правовая и криминологическая характеристика похищения человека. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Иркутск, 2007, էջ 65:

համար վտանգավոր բռնություն կիրառելը նշանակում է, որ հանցագործությունը կատարվում է տուժողին ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելով կամ բռնության գործադրմամբ, որը իրական վտանգ է ներկայացնում տուժողի կյանքի կամ առողջության համար: Կյանքի կամ առողջության համար իրական վտանգի մասին կարող են վկայել մարդու կենսական օրգաններին կանխամտածված հարվածներ հասցնելը, տուժողին բարձրությունից գցելը, շնչուղիները փակելը և այլն¹⁴⁵: Հոդված 132-ի երկրորդ մասի 4-րդ կետի առումով բռնությունը նշանակում է առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը: Քանի որ ոչ մեծ ծանրության վնասի դեպքում արարքը կորակվի հոդվածի 1-ին մասով, իսկ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում՝ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նշված հանգամանքն առկա է նաև, երբ հանցավորի գործողություններով ուղղակի վտանգ է առաջացել տուժողի կյանքի կամ առողջության համար կամ, երբ հանցավորը այդպիսի սպառնալիք է արտահայտել և եղել է դրա իրականացման իրական հնարավորություն: Ամեն դեպքում արարքը որակվում է հոդված 132-ի 2-րդ մասով, եթե բռնությունը կամ դրա սպառնալիքը հանդես են գալիս որպես հանցագործության կատարման միջոց, հակառակ դեպքում արարքը ենթակա է որակման հոդվածի 1-ին մասով և համապատասխան հոդվածի համակցությամբ:

5. Ակնհայտ հղի կնոջ նկատմամբ. սա առկա է այն դեպքում, երբ հանցավորը հաստատապես տեղյակ է տուժողի նման վիճակի մասին: Տվյալ հանգամանքի բարձր վտանգավորությունը կայանում է նրանում, որ վտանգի է ենթարկվում ոչ միայն հղի կնոջ կյանքը ու առողջությունը, այլ նաև՝ ապագա երեխայի գոյությունը:

Հայաստանի Հանրապետության սահմանը հատելով՝ անձի

¹⁴⁵ См. у Коментарий к Уголовному кодексу РФ / Под ред. Ю. И. Скуратова и В. М. Лебедева. М., 1996, էջ 284:

տեղափոխումը կազմակերպել ու միջոցով: Խոսելով այս հանգամանքի մասին՝ պետք է նշել, որ այն առկա է, եթե տուժողը դուրս է բերվում ԶՅ տարածքից կամ բերվում ԶՅ: Ընդ որում, նշանակություն չունի տուժողին տեղափոխելու եղանակը՝ ինքնաթիռով, երկաթուղիով, մեքենայով և այլն: Պարտադիր չէ, որ հանցավորը տուժողի հետևի ԶՅ տարածքը: Բավարար է, որ նա կազմակերպի տուժողի՝ ԶՅ սահմանը հատելը: Եթե անձը տուժողին փոխանցում է ստացողին և նախորոք տեղյակ չի լինում, որ նա պետք է տեղափոխվի ԶՅ-ից դուրս, բայց ինքը չի մասնակցում սահմանը հատելուն, այս պարագայում ծանրացնող հանգամանքը առկա է միայն ստացողի արարքում: Մեր կարծիքով արարքը չի կարող որակվել քննարկվող կետով, եթե տուժողը տեղափոխվում է Լեռնային Ղարաբաղ, քանի որ ԶՅ-ն և ԼՂ-ն չունեն սահմանային անցակետեր: Բացի այդ, ԶՅ քաղաքացիների կողմից ԼՂ-ն չի ընկալվում որպես արտերկիր. փաստորեն, այս ծանրացնող հանգամանքի առումով սուբյեկտիվ կողմը բացակայում է, քանի որ հանցավորը չի գիտակցում, որ տուժողին դուրս է բերում ԶՅ-ից:

Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցագործության կատարումը հանցակցության ձևերից է: Ըստ ԶՅ քր. օր. հոդված 37-ի՝ հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը: Այս ծանրացնող հանգամանքի համար անհրաժեշտ է, որ հանցագործությանը մասնակցեն տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող առնվազն երկու անձ: Ըստ հոդված 41-ի՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես, մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին: Այստեղից հետևում է, որ այս ծանրացնող հանգամանքի համար պարտադիր պայման է համակատարողների՝ նախապես պայմանավորված լինելու փաստը: Այսինքն, մինչև հանցագործությունը սկսելը պետք է

պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին, իսկ, եթե հանցավորը հանցագործությանը միանում է հանցափորձի փուլում, ծանրացնող հանգամանքը բացակայում է: Մի քանի անձանց կողմից հանցանք կատարելիս նրանց ջանքերը համատեղվում են և, որպես կանոն, պատճառվում է ավելի մեծ վնաս: Տեսության մեջ նշվել է, որ իրենց գործողությունները միավորելու միջոցով հնարավոր է կատարել այնպիսի հանցագործություններ, որոնք կա՛մ ընդհանրապես չէին կարող իրականացվել առանց այլ անձանց, կա՛մ դրանք միայնակ կատարելը զգալիորեն բարդ կլիներ¹⁴⁶: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես որակել արարքը, եթե դրա կատարմանը մասնակցած երկու անձանցից մեկը եղել է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձ: Այստեղ առկա՞ է հանցակցություն, թե՞ ոչ: Որոշ քրեագետներ նշում են, որ նման դեպքում արարքը նույնպես ենթակա է որակման որպես խմբի կողմից կատարված¹⁴⁷: Բերված տեսակետը իրավացիորեն քննադատության է արժանացել: Որպես հակափաստարկ նշվում է, որ և՛ անմեղսունակները, և՛ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձինք հանցագործության սուբյեկտ չեն: Ուստի, նրանց արարքները հանցագործություն չեն համարվում անկախ դրանում նրանց ունեցած դերից, հետևաբար նրանք հանցակիցներ համարվել չեն կարող: Եվ եթե չկա հանցագործություն, ապա չկա համակատարում՝ այդ թվում նաև հանցավոր խումբ¹⁴⁸:

Հոդված 132-ի 3-րդ մասի 1-ին կետը որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք նախատեսում է կազմակերպված խմբի կողմից արարքի կատարումը: Ըստ հոդված 41-ի 3-րդ մասի՝ հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքների կատարելու համար:

¹⁴⁶ Տե՛ս Владимир В. А. Квалификация похищения личного имущества. М., 1974, էջ 177:

¹⁴⁷ Տե՛ս Попов А. Н. Убийство при отягчающих обстоятельствах. СПб., 2003, էջ 574:

¹⁴⁸ Տե՛ս Թամազյան Ա. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը: Օրենք և իրականություն, #1, հունվար, 2008թ, էջ 3:

Կայունության մասին կարող է վկայել խմբի գոյության երկարատևությունը, խմբի անդամների և հանցավոր գործունեության մեթոդների բնույթը և այլն¹⁴⁹ : Խմբի կայունության հիմնական հատկանիշներն են՝ նախապես պայմանավորվածությունը, կազմակերպվածության բարձր աստիճանը, դերերի հստակ բաշխումը: Այս հատկանիշները, որպես կանոն, թույլ են տալիս հանցագործներին տևական ժամանակ զբաղվել հանցավոր գործունեությամբ և մնալ անպատիժ:

Խոսելով մի խումբ անձանց կողմից մարդու թրաֆիքինգի արարքի որակման մասին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե ինչ ծանրացնող հանգամանքներ են առկա յուրաքանչյուր կատարողի արարքում: Մի հանցակցի գործողություններում առկա ծանրացնող հանգամանքները մեխանիկորեն չի կարելի վերագրել մյուսներին: Մասնավորապես, ներկայացնենք դատական արակտիկայից մեկ դեպք:

2007թ. հունիսին Յ. Յ.-ն, բնակվելով ՅՅ-ում, մարդկանց թրաֆիքինգի՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, ստանալու ինչպես նաև պռնկության շահագործման վիճակի մեջ դնելու և պահելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել ԱՄԷ-ի Դուբայ քաղաքում բնակվող քույրեր Ա. Թ.-ի և Ա. Պ.-ի հետ: Այնուհետև, խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով՝ կարի արտադրամասում բարձր վարձատրվող աշխատանք տրամադրելու կեղծ խոստումով, ամբաստանյալ Յ. Յ.-ն երևան քաղաքում հավաքագրել և Դուբայ է տեղափոխել ՅՅ քաղաքացիներ՝ Ա. Գ.-ին, Գ. Մ.-ին, Լ. Ա.-ին և Ա. Շարոյանին, որտեղ քույրերը՝ Ա. Թադևոսյանը և Ա. Պողոսյանը, ստանալով նրանց՝ տուժողներ Ա. Գրիգորյանին, Գ Մինասյանին, Ն. Ավետիսյանին և Ա. Ծ.-ին, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև վիճակի խոսելիությունը օգտագործելով՝ վերջիններիս ներգրավել են մարմնավաճառության մեջ և ստացել նրանց վաստակած գումարները:

¹⁴⁹ St'u Кондрашова Т. В. Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности. Екатеринбург., 2000, էջ 25:

Դատարանը Հ.Հ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քր.օր.-ի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով¹⁵⁰:

ՀՀ քր. օր.-ի հոդված 132-ի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվություն է սահմանում մարդու թրաֆիքինգի համար, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Սակայն, բերված օրինակից երևում է, որ ամբաստանյալը կապ չի ունեցել բռնության գործադրման հետ: Նա միայն հանձնել է տուժողներին իր հանցակիցներին, վերջիններս էլ տուժողների նկատմամբ բռնության գործադրման սպառնալիք են կիրառել: Փաստորեն, տուժողները գտնվել են քույրերի տիրապետման ներքո և ամբաստանյալ Հ.Հ.-ն նրանց նկատմամբ այդ պահին որևէ իրավասություն չի ունեցել: Ուստի, մեր կարծիքով նշված ծանրացնող հանգամանքը ամբաստանյալ Հ. Հ.-ի արարքում բացակայում է:

Կարևոր նշանակություն ունի մի խումբ անձանց և կազմակերպված խմբի կողմից կատարված արարքների սահմանազատումը: Կայունությունը, որը բնորոշ է կազմակերպված խմբին, հիմնական հատկանիշն է, որով այն տարբերվում է նախնական համաձայնությամբ գործող անձանց խմբից: Իրավագետների մոտ չկա միասնական մոտեցում կազմակերպված խմբի կողմից կատարված արարքների որակման վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ արարքի որակման հարցում նշանակություն ունի հանցագործության մասնակցի ունեցած դերը: Անկախ նրանից՝ մասնակիցը կազմակերպիչ է, օժանդակող, թե կատարող՝ բոլոր մասնակիցները համարվում են համակատարող¹⁵¹: Մյուսների կարծիքով կազմակերպված խմբի անդամներ կարող են լինել միայն համակատարողները¹⁵²: Մեր համոզմամբ իրավացի են երկրորդ մոտեցման կողմնակիցները, քանի որ նրանց տեսակետը բխում է օրենքից: Հոդված 41-ի համաձայն՝

¹⁵⁰ Տե՛ս Դատական գործ № ԵԷԴ / 0158 / 01/ 11:

¹⁵¹ Տե՛ս Андреева Л. А. Квалификация убийств совершенных при отягчающих обстоятельствах. СПб., 1998, էջ 27:

¹⁵² Տե՛ս Кругликов Л. Л. Преступления против личности. Ярославль, 1998, էջ 25:

հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքների կատարելու համար: Օրենքում ուղղակիորեն նշվում է «կատարել» բառը, այսինքն՝ առնվազն երկու հոգի պետք է իրականացնեն հանցագործության օբյեկտիվ կողմը ամբողջությամբ կամ մասնակիորեն: Բացի այդ, կազմակերպված խումբը նախնական համաձայնությամբ գործող խմբից տարբերվում է ընդամենը կայունությամբ, այդ պատճառով էլ արարքի որակման կանոնների տարբերությունն չի կարող լինել ¹⁵³ :

Հաջորդ առավել ծանրացնող հանգամանքը արարքի կատարումն է, որն անգգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ: Այս հանգամանքը հանցավորին վերագրելու համար պետք է պարզել, թե տուժողի մահը կամ այլ ծանր հետևանքները թրաֆիքինգի հետևա՞նք են, թե՞ ոչ: Այսինքն, հանցանքի և նշված հետևանքների միջև գոյություն ունի պատճառական կապ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ ոչ միշտ է բացահայտվում հանցավորի հոգեբանական վերաբերմունքը տուժողի մահվան և այլ ծանր հետևանքների հանդեպ: Անհրաժեշտ է հիշել, որ հետևանքների հանդեպ հանցավորը պետք է դրսևորի անգգուշություն, այլ ապես արարքը կվորակվի նաև հոգված 104-ով: Այլ ծանր հետևանքներ կարելի է համարել տուժողի ինքնասպանությունը, ծանր հիվանդությունը, հոգեկան խանգարումը, նյութական խոշոր վնասը և այլն:

Հոդված 132.2-ը՝ երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը, պատասխանատվություն է սահմանում շահադիտական նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը

¹⁵³ Տե՛ս Թամազյան Ա. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը: Օրենք և իրականություն, #3, մարտ, 2008թ, էջ 7:

ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու համար: Ինչպես երևում է վերոնշյալից, հոդված 132.2-ը ի տարբերություն հոդված 132-ի, արարքի կատարման եղանակներ չի նախատեսում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հոդված 132.2-ով նախատեսված արարքի տուժողները այնպիսի անձինք են, ովքեր զրկված են իրենց արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից, այսինքն՝ նրանց նկատմամբ հոդված 132.2-ով նախատեսված գործողությունները ցանկացած եղանակով կատարելու դեպքում նրանց ազատությունը սահմանափակվում է: Սակայն, հոդված 132.2-ի դիսպոզիցիայից հստակ չէ, թե իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքը վերաբերում է միայն հոգեկան խանգարում ունեցողներին, թե՝ նաև երեխաներին: Բացի այդ, արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից կարող են զրկված լինեն ոչ միայն երեխաներն ու հոգեկան խանգարում ունեցողները, այլ նաև ուրիշները: Մասնավորապես, իրենց արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից կարող են զրկվել այն անձինք, ովքեր գտնվում են ալկոհոլային հարբածության մեջ, թմրանյութերի կամ հիպնոսի ազդեցության տակ: Անձը կարող է զրկվել նման հնարավորությունից նաև որոշ ծանր հիվանդությունների (ոչ հոգեկան) և հիվանդագին վիճակների դեպքում:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար հարկավոր է փոփոխություններ կատարել հոդված 132.2-ում: Առաջարկում ենք նախ հոդվածը վերնագրել որպես՝ *իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դեկլարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ*

շահագործումը: Իսկ հոդված 132.2-ի դիսպոզիցիան առաջարկում է նքսահմանել այսպես. « *իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցել ու կամ դադեկավարել ու հնարավորությունն ից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը...*»: Առաջարկվող փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն կառաջանահոդված 132-ում որպես ծանրացնող հանգամանք նախատեսել հետևյալ կետը՝ *նույն արարքը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ:*

Օրենսդրի կողմից պատասխանատվություն է նախատեսվել նաև շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունն ից օգտվել ու համար, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունն ից օգտվողի համար և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են քրեական օրենսգրքի հոդվածներ 132 և 132.2-ով նախատեսված հանցագործության հատկանիշները: Որպես նշված հանցակազմի ծանրացնող հանգամանք, օրենսդիրը նախատեսում է նույն արարքի կատարումը անչափահասի, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցել ու կամ դադեկավարել ու հնարավորությունն ից զրկված անձի, ակնհայտ հղի կնոջ կամ երկու կամ ավելի անձանց նկատմամբ:

§ 2 Անձին մարմնավաճառություն ներգրավելը կամ դրան նպաստելը

Մարմնավաճառություն հետ կապված հանցագործություններից է նաև երեխային մարմնավաճառությամբ զբաղվել ու ներգրավելը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 166-ի համաձայն՝ 18 տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկություն կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստել ու հետ կապված գործողություններ կատարել ու ներգրավելը, եթե բացակայում են

սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով հատկանիշները ...:

Այս հանցագործության օբյեկտի վերաբերյալ իրավագետների շրջանում կան տարակարծություններ: Մի խումբ հեղինակների կարծիքով երեխային պռնկության ներգրավելու արարքի օբյեկտը հասարակական կարգն է և անչափահասների դաստիարակության շահերը ¹⁵⁴ : Մյուսների կարծիքով այս հանցագործության անմիջական օբյեկտը հասարակական կարգն է ¹⁵⁵:

Մեր կարծիքով տարածայնությունների պատճառն այն է, որ քննարկվող հանցագործությունը երկօբյեկտ է: Բացի այդ, ՀԽՍՀ 1961թ. քրեական օրենսգրքում հոդված 231-ը՝ անչափահասին հանցավոր գործունեության, հարբեցողության մեջ ներգրավելը, նախատեսված էր հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող գլխում: Գործող օրենսգրքում հոդված 166-ը սահմանված է գլխում 20-ում, որը պատասխանատվություն է սահմանում ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների համար: Սրանից հետևում է, որ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը երեխայի նորմալ զարգացմանը և դաստիարակությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ բարոյականությունն է:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ մայրությունը և մանկությունը, ընտանիքը գտնվում են պետության պաշտպանության տակ: Այս դրույթը բխում է միջազգային ակտերից: Երեխայի անձի ձևավորման հիմնական պարտականությունը կրում է ընտանիքը: Այն, ինչ երեխան մանուկ հասակում սովորում է ընտանիքում, նա պահպանում է ողջ հետգալյանքի ընթացքում: Ընտանիքի՝ որպես դաստիարակության ինստիտուտի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ երեխան այնտեղ գտնվում է իր կյանքի զգալի ժամանակահատվածում, և անձի վրա իր ազդեցության տևողությամբ

¹⁵⁴ Ст'у Гришанин П. Ф., Владимиров В. А. Преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения. М., 1967, էջ 48:

¹⁵⁵ Ст'у Данышин И. Н. Уголовно-правовая охрана общественного порядка. М., 1973, էջ 147:

դաստիարակության ոչ մի ինստիտուտ չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Ընտանիքը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոն երեխայի զարգացման հարում: Երեխայի անձի ձևավորման վրանրադրական ազդեցությունը կայանում է նրանում, որ երեխայի հանդեպ ոչ ոք ավելի շատ ուշադրություն չի դարձնում, քան ընտանիքի անդամները: Ընտանիքը երեխային ապահովում է շփման այն նվազագույն մակարդակը, առանց որի նա չէր կարող դառնալ անձնավորություն: Դրա հետ միասին, ընտանիքից բացի ոչ մի այլ սոցիալական ինստիտուտ չի կարող ավելի մեծ վնաս հասցնել երեխայի դաստիարակությանը: Ուստի, սոցիալական պաշտպանությունը և խնամքը նաև իրավական պաշտպանությունը, որոնք իրականացվում են պետության և ծնողների կողմից, պայմանավորված են նրանով, որ երեխան գտնվում է ֆիզիկական և հոգեկան առումով ոչ հասուն վիճակում:

Ինչպես նշեցինք, հոդված 166-ը գետեղված է քր. օր.-ի գլուխ 20-ում՝ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Զրեագետները տարբեր կերպ են արտահայտվում այս գլխի հանցագործությունների տեսակային օբյեկտի վերաբերյալ: Ոմանք նշում են՝ այս գլխի հանցագործությունների տեսակային օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են ընտանիքի պաշտպանության, ծնողների (որդեգրողների) օրինական իրավունքների, անչափահասների նորմալ ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացման հետ¹⁵⁶: Մյուսների համոզմամբ տեսակային օբյեկտի դերում հանդես են գալիս անչափահասների ֆիզիկական, մտավոր, բարոյական, նորմալ զարգացումն ապահովող նյութական և ոչ նյութական պայմանները, ինչպես նաև չափահաս, բայց անաշխատունակ երեխաների և ծնողների նորմալ գոյությունը¹⁵⁷:

Մեր կարծիքով իրավացի են այն հեղինակները, ովքեր այս գլխի հանցագործությունների տեսակային օբյեկտ համարում են այն

¹⁵⁶ См. Уголовное право. Особенная часть /Под ред. И. Я. Козаченко, З. А. Незнамовой, Г. П. Новоселова. М., 1998, էջ 169:

¹⁵⁷ См. Уголовное право РФ. Особенная часть / Под ред. Б. В. Здравомыслова. М., 1996, էջ 115:

հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են անչափահասների նորմալ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև երեխաների անձի՝ հասարակության պահանջներին համապատասխան զարգացումը ¹⁵⁸ : Մեր համոզմամբ գլուխ 20-ի հանցագործությունների տեսակային օբյեկտը արտահայտում է երկու խումբ հասարակական հարաբերություններ՝ ընտանիքի շահերը ապահովող և երեխայի շահերը ապահովող: Տվյալ հանցագործության անմիջական օբյեկտի հետ կապված նույնպես տրվել են տարբեր բնորոշումներ: Ըստ մեզ, ամենաընդունելի ն այն բնորոշումն է, որի համաձայն՝ քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտը անչափահասի նորմալ ֆիզիկական և բարոյական դաստիարակությունը ապահովող հասարակական հարաբերություններն են ¹⁵⁹ : Երեխաներին և պատանիներին ներգրավելով հակահասարակական գործողությունների (պոռնկության) ոլորտ՝ չափահասը մեծ ազդեցություն է թողնում անչափահասի՝ դեռ չծնված գիտակցության վրա, նպաստում է նրա՝ հակահասարակական հակումներով անձի ծնվորմանը: Պատահական սեռական կապերը անչափահաս տարիքում խիստ բացասաբար են աղդում անձի օրգանիզմի և հոգեբանության վրա: Անվիճելի է, որ երեխային, ով ներգրավված է մարմնավաճառության մեջ՝ զբաղվելու, հասցվում է ֆիզիկական և հոգեկան վնաս, տեղի է ունենում բարոյալքում: Սա է պատճառը, որ այս հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը անչափահասի ֆիզիկական և բարոյական նորմալ զարգացումն ապահովող հասարակական հարաբերություններն են:

Այս հանցակազմի օբյեկտիվ կողմը հնարավոր է կատարել միայնակ տիվ գործողությունների միջոցով, անգործությամբ հանցագործության կատարումը հնարավոր չէ: Տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը վերլուծելու համար անհրաժեշտ է բացահայտել հոգվածի դիսպոզիցիայում նշված «երեխա», «պոռնկություն»,

¹⁵⁸ Տե՛ս Уголовное право России. Особенная часть / Под ред, А. И. Рарога. М., 1996, էջ 97:

¹⁵⁹ Տե՛ս Кладков А., Суспицина Т. Вовлечение несовершеннолетнего в совершение преступления и иных анти общественных действий // Уголовное право. 2002, №3, էջ 26:

«պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ», «ներգրավել» հասկացությունների բովանդակությունը: ՀՀ քրեական օրենսգրքում տրված է պոռնկություն բառի հասկացությունը: Մեր կարծիքով պոռնկություն բառը օգտագործվում է որպես մարմնավաճառության բառի հոմանիշ, որի էությունն արդեն իսկ բացահայտվել է աշխատանքի 1-ին գլխի շրջանակներում:

Հոդված 166-ում նշվում է պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելու մեջ երեխային ներգրավելու մասին: Պոռնոգրաֆիկ նյութեր ասելով հասկացվում է տպագիր, կինո կամ վիդեո նյութերը, պատկերները կամ պոռնոգրաֆիկ բնույթի այլ առարկաները¹⁶⁰: Ըստ Մ. Լեբեդևի կարծիքի՝ պոռնոգրաֆիկ նյութերը գեղագիտական, գրաֆիկական, գրական, երաժշտական և այլ ստեղծագործություններն են, որոնց բովանդակությունը կայանում է սեռական հարաբերությունների մանրամասների կոպիտ նատուրալ իստական ներկայացումը¹⁶¹: Հանցագործությունների որակման հարցում հաճախ են սխալ ներթույլ տրվում «ներգրավել» եզրույթի ոչ ճիշտընկալման պատճառով: Քրեագետները ներգրավելը բնորոշում են որպես հակահասարակական գործունեությամբ (պոռնկությամբ) զբաղվելու մտադրության առաջացման կամ այդպիսի մտադրության ամրապնդման հարուցումը այլ անձի կողմից¹⁶²: Մեր համոզմամբ ներգրավելը դա՛յլ անձի մոտորոշակի գործողություններ կատարելու հարուցումն (առաջացում) է: Այսինքն, ներգրավելը ունի դրդման հատկանիշ, իսկ որոշման կայացման ամրապնդումը ինտելեկտուալ օժանդակություն է: Դրդելու և մտավոր օժանդակության տարբերությունը այն է, որ առաջինն առաջացնում է որոշակի գործողություններ կատարելու մտադրություն, իսկ երկրորդը ամրապնդում է արդեն իսկ գոյություն ունեցող մտադրությունը: Բացի այդ, ոչ ոք չի կարող

¹⁶⁰ Տե՛ս Наумов А. В. Российское уголовное право. Курс лекций. М., 2004, էջ 471:

¹⁶¹ Տե՛ս Коментарий к Уголовному кодексу РФ/ Под ред. В. М. Лебедева. М., 2002 էջ 593, Уголовное право Российской Федерации. Особенная часть/ Под ред. А. И. Рарога. М., 2001, էջ 370:

¹⁶² Տե՛ս Минковский Г. М., Брускин Г. З. Общая характеристика вовлечения несовершеннолетних в преступную деятельность и иное антиобщественное поведение // Проблемы борьбы с вовлечением несовершеннолетних и антиобщественное поведение. М., 1981, էջ 6:

հստակ նշել մտադրության վրա ազդելու չափը, այսինքն անձի՝ որոշակի գործողություններ կատարելու մտադրության վրա մեկ այլ անձ ինչ ազդեցություն է թողել և արդյոք նա չէր կատարի տվյալ արարքը՝ առանց այդ ազդեցության:

Երեխային մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավելու եղանակները տարբեր են: Հոդվածի դիսպոզիցիայում չի նշվում երեխային մարմնավաճառության ներգրավելու եղանակները, ուստի երեխային ցանկացած եղանակով ներգրավելը պետք է որակել հոդված 166-ով, եթե, իհարկե, բացակայում են հոդված 132.2-ի հատկանիշները: Այսպիսով, հոդված 166-ի 1-ին մասի առումով ներգրավման հիմնական եղանակները պետք է համարել հետևյալները՝

- Համոզելը. Անձին ներշնչվում է մարմնավաճառությամբ զբաղվելու անհրաժեշտության միտքը:
- *Կաշառելը*. Սա մարմնավաճառությամբ զբաղվելու հակելն է նյութական օգուտի խոստման միջոցով՝ օրինակ, գույքային պարտավորություններից ազատելը,
- *Խաբեությունը*. Այսինքն, հանցավորի իրական մտադրությունների առնչությամբ տուժողին մոլորության մեջ դնելը,
- *Այլ եղանակներ*. (օրինակ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելը)¹⁶³:

Ընդհանուր առմամբ, համամիտ լինելով ներկայացված եղանակների դրսևորումներին, գտնում ենք, որ այս արարքը հնարավոր չէ կատարել խաբեության միջոցով, այդպիսի արարքը անհրաժեշտ է որակել հոդված 132.2-ով, քանի որ խաբեության պարագայում տուժողի կամքը անտեսվում է, նա ըստ էության, ընկնում է շահագործման վիճակի մեջ: Նույնը կարելի է ասել նաև տուժողի նյութական կախվածությունը օգտագործելու կապակցությամբ: Բայց, այստեղ կարևոր նշանակություն ունի

¹⁶³ Ст'ю Феди́к Е. Н. Ответственность за действия связанных с проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург. 2003, էջ 85:

նյութական կախվածության բնույթն ու աստիճանը: Եթե տուժողը ամբողջությամբ կախվածության մեջ է հանցավորից, այսինքն առանց դրանա, ըստ էության, չի կարող գոյատևել, այս դեպքում արարքը կորակվի հոդված 132.2-ով:

Մարմնավաճառությամբ զբաղվելու ներգրավելը բռնության գործադրման կամ դրասպառնալիքով, որակվում է հոդված 166-ի 3-րդ մասով: Ա. Շեդրինայի կարծիքով այս հանցագործության կատարման եղանակ կարող է լինել պոռնկագրական բնույթի և (կամ) առարկաների տարածումն ու գովազդը¹⁶⁴: Դժվար է համաձայնել այս մոտեցմանը, քանի որ այդպիսի նյութերի և առարկաների տարածումը հանցագործությունն չէ (եթե ապրիլի չեն տարածվել), բացի այդ դրանք ուղղված չեն կոնկրետ անձանց և միայնակ առանց այլ գործոնների ուղեկցությամբ, չեն կարող անձի մոտ առաջացնել մարմնավաճառությամբ զբաղվելու մտադրություն:

Հոդված 166-ի դիսպոզիցիան որևէ նշում չի պարունակում արարքի կատարման անգգուշության կամ դիտավորության մասին: Հետևաբար, տվյալ հանցագործության մեղքի ձևը պարզելու համար անհրաժեշտ է մեկնաբանել տվյալ նորմը: Գրականության մեջ և պրակտիկայում¹⁶⁵ ընդունված է համարել, որ երեխային հակահասարակական գործունեության, այդ թվում՝ մարմնավաճառության ներգրավելու գործողությունները կարող են կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, հանցավորը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է մարմնավաճառության մեջ և ցանկանում է դա:

Օրենսդիրը չի նշում հոդված 166-ով նախատեսված հանցագործության նպատակն ու շարժառիթը: Որպես կանոն, այս հանցագործության կատարման հիմքում ընկած է շահը՝ մարմնավաճառությունից նյութական օգուտ ստանալու ցանկությունը: Սակայն, հնարավոր են նաև այլ դրդապատճառներ,

¹⁶⁴ Ст'ю Шедрина А. К. Некоторые вопросы ответственности за вовлечение несовершеннолетних в анти общественную деятельность // Проблемы Советского уголовного права и криминологии. Вып 28. Свердловск, 1975, էջ 132:

¹⁶⁵ Ст'ю Судебная практика по уголовным делам. Под ред. О. М. Оглобина. М., 2001, էջ 163:

օրինակ՝ որևէ մեկին ծառայություն մատուցելու (լավություն անելու) ցանկությունը, տուժողի արժանապատվությունը ոտնահարելու մղումը և այլն: Ծարժառիթները, որով ղեկավարվում է հանցավորը, ինչպես նաև նրա հետապնդած նպատակը, արարքի որակման հարցում նշանակություն չունեն, բայց կարող են հաշվի առնվել պատիժ նշանակելիս:

Երեխային մարմնավաճառության ներգրավելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերլուծությունը պահանջում է հանցավորի՝ տուժողի տարիքի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի ճշգրտում: Հենց տարիքային առանձնահատկությունն է պատճառը, որ տվյալ հանցակազմը տեղադրված է օրենսգրքի գլուխ 20-ում, տարիքային հատկանիշով է այս հանցակազմը սահմանազատվում հոդված 261-ով նախատեսված արարքից: Անչափահասի վերջնականապես չձևավորված բնավորությունը, նրա դյուրահավատությունը, կախվածությունը չափահասներից, նրանց դարձնում է ավելի խոցելի, քան չափահասներին: Արարքը որակելիս պետք է պարզել հանցավորի պատկերացումները համապատասխանում են տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշներին, թե՛ ոչ: Հոդված 166-ի դիսպոզիցիան բավականաչափ հստակ է՝ «Երեխային ներգրավելը...»: Այս հանգամանքը պարտադիր պետք է արտացոլվի հանցագործի գիտակցության և կամքի մեջ: Հարկավոր է, որ հանցավորը գիտակցի, թե ներգրավում է հենց անչափահասի: Պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն դեպքում, երբ տուժողի տարիքի վերաբերյալ հանցավորը թեև չունի ստույգ տեղեկություններ, բայց ենթադրում է կամ հիմնավոր կասկածներ ունի, որ պոռնկության մեջ է ներգրավում անչափահասի: Իսկ այն դեպքում, երբ կատարողը պոռնկության է ներգրավում անչափահասի՝ կարծելով, թե վերջինս չափահաս է, ապա արարքը կորակվի հոդված 261-ով:

Անդրադառնալով սույն հանցակազմի կառուցվածքին՝ անհրաժեշտ է նշել, որ այն ձևական է: Հոդվածի դիսպոզիցիայում նշված չեն պարտադիր հետևանքներ: Չնայած, ինչպես և ցանկացած

հանցագործությունն, տվյալ արարքը նույնպես ունի հետևանքներ: Անչափահասի ներգրավումը մարմնավաճառության մեջ նրա վրա թողնում է բազմաթիվ հետևանքներ՝ նրա մոտ առաջանում են վատ սովորություններ, հակում հակահասարակական գործունեության հանդեպ, բարոյականության անկում, նորմալ զարգացման ու դաստիարակության խաթարում և այլն: Ուղղակի այս հետևանքները առարկայական չեն, հնարավոր չէ դրանք նյութապես չափել: Ըստ մեզ՝ հանցագործության ավարտման պահ պետք է համարել տուժողի՝ մարմնավաճառության մեջ ներգրավման պահը, այսինքն, երբ տուժողը սկսում է զբաղվել մարմնավաճառությամբ: Ըստ էության, հանցագործության ավարտման պահը համընկնում է անչափահասի կողմից առաջին հաճախորդին սպասարկելու հետ: Հանցագործության ավարտման պահ չի կարելի համարել տուժողի մարմնավաճառությամբ զբաղվելու վերաբերյալ համաձայնություն տալը, քանի որ այդ պահին նա դեռ մարմնավաճառության մեջ ներգրավված չէ, փաստորեն չի զբաղվում այդպիսի գործունեությամբ: Այս ամենից հետևում է, որ հնարավոր է նաև հանցափորձ: Մասնավորապես, այն դեպքում, երբ հանցավորը իրենից կախված ամեն ինչ անում է (համոզում, նյութապես շահագրգռում, սպառնում և այլն) անչափահասին մարմնավաճառության ներգրավելու համար, սակայն հանցավորից անկախ պատճառներով անչափահասը չի ներգրավվում մարմնավաճառության մեջ (դրսևորում է համառություն կամ այն կանխվում է իրավապահ մարմինների կամ այլ անձանց կողմից): Փաստորեն, մեղավորը կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները, բայց իրենից անկախ հանգամանքներով հանցագործությունը ավարտին չի հասցվում՝ երեխան չի ներգրավվում մարմնավաճառության մեջ: Բերված օրինակը լիովին համապատասխանում է ՀՀ քր. օր-ում տրված հանցափորձի սահմանմանը: Մասնավորապես, ըստ հոդված 134-ի՝ հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն

ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունը ավարտին չի հասցվել անձի կամ քից անկախ հանգամանքներով:

Հոդված 166-ի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը: Կարծում ենք, որ օրենսդրի կողմից այս հանգամանքի սահմանումը արդարացված է: Կարելի է պնդել, որ երեխայի դաստիարակության հարցում նրա իրավունքների խախտումը այն անձանց կողմից, ում վրա իրավական և բարոյական նորմերով դրված է երեխայի խնամքի և դաստիարակության պատասխանատվությունը, պարունակում է ավելի մեծ հանրային վտանգավորություն, քան այդ իրավունքների խախտումը այլ անձանց կողմից: Երեխայի ներգրավումը մարմնավաճառության մեջ ծնողի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը, համարվում է ծանրացնող հանգամանք նաև այն պատճառով, քանի որ նրանք փաստացի և իրավաբանորեն հսկողություն են իրականացնում երեխայի վրա, ուստի նրանց համար անհամեմատ ավելի հեշտ է երեխաներին ներգրավել հակահասարակական գործունեության, այդ թվում նաև մարմնավաճառության մեջ: Միևնույն ժամանակ, երբ երեխան ներգրավվում է պոռնկության մեջ ծնողի կամ այլ հարազատի կողմից, դա ավելի մեծ վնաս է հասցնում նրա հոգեբանությանը:

Անհրաժեշտ է պարզաբանել այս նորմում նշված «այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պատասխանատվությունը» արտահայտությունը: Ըստ մեզ, այդ անձանց դերում կարող են լինել երեխայի խորթ ծնողները, որդեգրողները, հոգաբարձուն, խնամակալը, մանկատան աշխատակիցները և այլն: Այդ դերում կարող են հանդես գալ նաև երեխայի տատիկը, պապիկը և այլ հարազատները, եթե երեխայի դաստիարակությամբ ժամանակավորապես նրանք են զբաղվում, օրիանակ՝ այն դեպքերում, երբ ծնողները հիվանդ են կամ մեկնել են գործուղման:

Հոդվածի 3-րդ մասում սահմանված են առավել ծանրացնող հանգամանքները՝

1. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են երկու կամ ավել անձանց նկատմամբ: Ծանրացնող այս հանգամանքը առկա է, երբ հանցավորը գիտակցում է, որ մարմնավաճառության է ներգրավում երկու կամ ավելի անչափահասների: Իսկ եթե ներգրավածներից մեկը չափահաս է, արարքը պետք է որակել սույն հոդվածի առաջին մասի և հոդված 261-ի համակցությամբ: Ուստի, ավելի ճիշտ կլիներ սույն հոդվածում «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» արտահայտության փոխարեն օգտագործել «երկու կամ ավելի անչափահասների նկատմամբ» բառակապակցությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքին արդեն անդրադարձել ենք նախորդ պարագրաֆում: Միայն նշենք, որ այս հոդվածում բռնության տակ պետք է հասկանալ առողջությանը միջին կամ ոչ մեծ ծանրության վնասի պատճառումը կամ ծեծը: Իսկ եթե բռնությունը եղել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր, ապա արարքը կվորակվի հոդված 166-ի 1-ին մասի և համապատասխան հոդվածի համակցությամբ:

Մեր կարծիքով որոշակի խնդիր կանա՞ն հոդված 166-ի սանկցիայի առումով: Հոդվածի 1-ին մասում սահմանված է մեկից հինգ տարի ժամկետով ազատազրկում: Հոդված 261-ի համար պատասխանատվություն է սահմանված մեկից երեք տարի ժամկետով: Փաստորեն, երկու հոդվածների սանկցիաների ստորին շեմը սկսվում է մեկ տարուց, ինչը արդարացված չենք համարում, քանի որ հոդված 166-ը ունի ավելի բարձր հանրային վտանգավորություն: Նաև չափազանց մեծ է հոդված 166-ի սանկցիայի միջակայքը, ինչը կարող է բարդություններ առաջացնել պատիժ նշանակելիս: Այս

խնդիրները լուծելու համար առաջարկում ենք վերանայել հոդված 166-ի սանկցիայի ստորին շեմը:

Անձին մարմնավաճառության ներգրավելու կամ դրան նպաստելուն են վերաբերում նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 261-ում և 262-ում տեղ գտած արարքները՝ շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությանմբ զբաղվելուն ներգրավելը և պոռնկությանմբ զբաղվելուն նպաստելը: Նշված հանցակազմերը նախատեսած են ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 25-ում՝ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շրջանակներում: Հոդված 261-ի տեսակային օբյեկտը հասարակական կարգը և բարոյականությունն է: Իսկ հանցագործության անմիջական օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնց բովանդակությունը կազմում է քաղաքացիների սեռական ու ռոտի բարոյական վարքագիծը 166: Հանցագործության օբյեկտի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է պարզել բարոյականության բովանդակությունը: Բարոյականությունը հասարակական հարաբերությունների համակցությունն է, որը տվյալ հասարակության մեջ կանխորոշում է բարու և չարի, պարկեշտության և անպարկեշտության, արդարության և անարդարության մասին պատկերացումները¹⁶⁷:

Այս հանցագործության օբյեկտիվ կողմը հնրավոր է կատարել միայն ակտիվ գործողություններով: Անձին պոռնկության մեջ ներգրավել ասելով՝ պետք է հասկանալ ցանկացած գործողությունների կատարումը, որոնք ուղղված են այդ պահին մարմնավաճառությամբ չզբաղվող անձի մոտ մարմնավաճառությամբ զբաղվելու ցանկության առաջացմանը: Ներգրավելը կարող է լինել առաջարկելու, համոզելու, նյութապես շահագրգռելու, ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու միջոցով¹⁶⁸: Որոշ

¹⁶⁶ Տե՛ս Смирнов Ю.П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 134:

¹⁶⁷ Տե՛ս Уголовное право России. Особенная часть. Учебник / Отв. ред. А. И. Рарог. М., 2001, էջ 368:

¹⁶⁸ Տե՛ս Уголовное право России. Общая и особенная части. Учебник для вузов / Под общ. ред. Доктора юридических наук, профессора Н. Г. Кадникова. М., 2006, էջ 657:

գիտնականներ գտնում են, որ խաբեության միջոցով անձին մարմնավաճառության մեջ ներգրավել հնարավոր չէ ¹⁶⁹ : Մենք նույնպես կիսում ենք այս տեսակետը: Քանի որ, այդ պարագայում առկա են հոդված 132-ի հատկանիշները, փաստորեն՝ տեղի է ունենում խաբեության միջոցով անձանց հավաքագրում՝ պոռնկությամբ զբաղվելու համար: Օրինակ՝ եթե տուժողին առաջարկում են մատուցողի աշխատանք, բայց նրան տեղափոխում են այլ վայր և հայտնում, որ վերջինս պետք է սեռական բնույթի ծառայություններ մատուցի: Տվյալ դեպքում առկա է ոչ թե հոդված 261-ով նախատեսված հանցակազմը, այլ՝ հոդված 132-ով նախատեսվածը:

Մեր կարծիքով այս հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ չի մտնում անձին մարմնավաճառության զբաղվելը շարունակելու և հարկադրելը, այն պատճառով, որ ներգրավել մարմնավաճառության մեջ նշանակում է ներգրավել այնպիսի անձի, որը տվյալ պահին այդ գործունեությամբ չի զբաղվում: Այդպիսի գործողությունները պետք է որակվեն՝ ելնելով ներգրավված անձին տրվող սպառնալքի բնույթից: Չնայած արդարացված կլիներ հոդված 261-ի դիսպոզիցիան լրացնել «անձի՝պոռնկությամբ զբաղվելը դադարեցնելու և խոչնդոտելը» արտահայտությամբ: Ընդ որում, այստեղ խոչնդոտելու եղանակները համընկնում են ներգրավվելու եղանակներին: Այսինքն, խոչնդոտել հնարավոր է ինչպես բռնության գործադրման, այնպես էլ առանց դրա՝ համոզելու, նյութապես շահագրգռելու և այլ եղանակներով:

Քրեական պատասխանատվության հարցի լուծման համար որևէ նշանակություն չունի, թե քանի անգամ է անձը սեռական կապի մեջ մտել: Չնայած մի շարք քրեագետների կարծիքով արարքի որակման համար նշանակություն ունի մարմնավաճառությամբ զբաղվելու սիստեմատիկությունը՝ ոչ պակաս երեք անգամ սեքսուալ բնույթի

¹⁶⁹ Ст' u Смирнов Ю.П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 136:

հարաբերությունն ունենալը ¹⁷⁰ : Չնայած, մարմնավաճառության մեջ զբաղվելը ենթադրում է սիստեմատիկություն կամ նման նպատակ, սակայն այս հանցակազմը ավարտված համարելու համար բավարար է, որ անձը թեկուզ մեկ անգամ վճարի դիմաց սեքսուալ բնույթի հարաբերության մեջ մտնի: Անձին հնարավոր է ներգրավել մարմնավաճառության մեջ նաև այն ժամանակ, երբ նա դադարել է զբաղվել մարմնավաճառության, սակայն հանցավորի գործողություններով կրկին վերադարձել է իր զբաղմունքին ¹⁷¹ : Պոռնկության մեջ զբաղվելուն ներգրավելու օբյեկտիվ կողմը բնության գրեթե ցանկացած կարելի շրջանցել հանցագործության կատարման եղանակի հարցը: Հանցագործության կատարման եղանակը հնարք է, մեթոդ, տակտիկական գործողությունների ամբողջություն, որոնց օգնությամբ հանցավոր արարքը ավարտվում է հաջողությամբ կամ անհաջողությամբ ¹⁷²:

Հոդված 261-ի նախորդ խմբագրությամբ հանցագործության կատարման եղանակը դիտարկվում էր որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Հանցագործության կատարման եղանակների թվում օրենսդիրը նախկինում նշում էր բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, անձի կամ նրա մերձավորի մասին անվանարկող տեղեկությունների հրապարակման սպառնալիքը, անձի կախյալ վիճակն օգտագործելը, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ հափշտակելու սպառնալիքը, խաբեությունը:

Գիտնականները տարբեր մոտեցումներ ունեն այս հանցագործության ավարտման պահի հետ կապված: Նրանց մի մասը կարծում է, որ տվյալ արարքը ավարտված է համարվում անձին մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավելուն ուղղված գործողությունների կատարման պահից, քանի որ այս հանցակազմը

¹⁷⁰ Ст'ю Мельниченко А. Г., Родочинский С. Н. Уголовное право. Общ. И особ. части. Ростов-на-Дону, 2002, էջ 462:

¹⁷¹ Ст'ю Уханова Н. Ответственность за вовлечение в занятие проституцией, организацию или содержание притонов для занятия проституцией // Уголовное право. 2002, №4, էջ 48:

¹⁷² Уголовное право. Общая часть. Учебник для вузов/ Отв. ред. И. Я. Козанченко и З. А. Незнамова. 2-е изд. М., 2000, էջ 165:

ըստ իր կառուցվածքի ձևական է¹⁷³: Մենք էլ ենք գտնում, որ այս հանցակազմը ձևական է, սակայն կարծում ենք, որ այս հանցագործությունը ավարտվում է, երբ անձը ներգրավվում է մարմնավաճառության մեջ (թեկուզ մեկ անգամ վճարի դիմաց սեռական հարաբերություն է ունենում): Պետք է նշել նաև, որ ձևական հանցակազմի պարագայում հանցափորձը նույնպես հնարավոր է: Գրականության մեջ էլ արտահայտվել է այդ տեսակետը, որի համաձայն՝ ձևական հանցակազմով հանցագործության փորձը տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը (գործողությունը) չի կատարվում մինչև վերջ և հանցավորի կամքից անկախ պատճառներով ընդհատվում է¹⁷⁴: Բացի այդ, արդեն նշել ենք, որ ներգրավելը ենթադրում է որևէ գոծունեությամբ զբաղվելը, գոնե այն սկսելը:

Խոսելով այս հանցագործության սուբյեկտիվ կողմի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ այն հնարավոր է կատարել միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, հանցավորը գիտակցում է, որ մեկ այլ անձի ներգրավում է մարմնավաճառության մեջ և ցանկանում է դա: Եթե նա ներգրավում է անչափահասի և գիտակցում է դա, ապա արարքը կորակվի հոդված 166-ով: Այս հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նպատակը: Հոդված 261-ում սահմանված է հանցագործության կատարման շահադիտական նպատակը: Այս տեղից հետևում է, որ հանցակազմը առկա է, երբ հանցավորը անձին ներգրավում է մարմնավաճառության մեջ՝ նպատակ հետապնդելով վերջինիս գոծունեությունից ստանալ նյութական օգուտ: Մեր կարծիքով շահադիտական նպատակի նախատեսումը դիսպոզիցիայում արդարացված չէ: Ճիշտ է, այս հանցագործությունը հիմնականում կատարվում է շահադիտական նպատակով, սակայն չի բացառվում արարքի կատարումը այլ նպատակներով ևս: Մասնավորապես, հանցավորի նպատակը կարող է լինել ներգրավված անձին ստորացնելը, արատավորելը, նա կարող է ներգրավել անձին, նրան

¹⁷³ См. у Коментарий к Уголовному кодексу Российской Федерации. М., Зерцало, 1998, էջ 572:

¹⁷⁴ См. у Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևան, 2003, էջ 253;

հետագայում որևէ գործողություն կատարելու նպատարով կամ այլ նպատակով: Սակայն, տուժողի համար նշանակություն չունի, թե իրեն ներգրավողը ինչ նպատակ է հետապնդել: Ուստի, ավելի արդարացված կլիներ «շահադիտական նպատակով» արտահայտությունը հանել հոդվածի առաջին մասից, իսկ հոդվածն էլ վերնագրել որպես՝ մարմնավաճառության զբաղվելու ներգրավելը:

Մյուս կողմից էլ հոդվածում նշված շահադիտական նպատակի առկայությունը կարող է խնդիրներ առաջացնել ապացուցման գործընթացում և թույլ տալ հանցավորներին խուսափել պատասխանատվությունից: Հաճախ անձանց մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավողները (կավատները) գումարի իրենց բաժինը վերցնում են հաճախորդներից կամ այն հաստատություններից, որտեղ մարմնավաճառները մատուցում են իրենց ծառայությունները: Այս պարագայում մարմնավաճառները կարող են նույնիսկ տեղյակ չլինեն դրամասին:

Դատական պրակտիկան ուսումնասիրելիս առնչվում ենք դեպքերի, որտեղ դատարանը չի կարողացել կողմնորոշվել 261 և 262 հոդվածների սահմանազատման հարցում: Մասնավորապես, քննարկենք ԼԴ/ 0176/01/09 դատական գործը: Վանաձոր քաղաքի բնակիչ ամբաստանյալ Ս.Զ.-ն, աշխատելով Վանաձորի Պրիզ տաքսի ծառայությունում որպես վարորդ, հաճախորդներ տեղափոխելու ընթացքում ծանոթացել է Գուգարք գյուղի բնակիչ Թ.Թ.-ի հետ, ապա մի քանի անգամ պատվիրված վայր տեղափոխելուց հետո, տեղեկանալով, որ վերջինս մարմնավաճառ է, անձնական շահ ստանալու նպատակով, 2008թ.-ի հունիսի 28-ին նրան տեղափոխել է Վանաձորի Մալիբու շոգեբաղնիք, որտեղ վերջինս Հ.Մ.-ի և նրա՝ ինքնությունը չարգված ընկերոջ հետ սեռական հարաբերություն է ունեցել, իսկ դրա դիմաց ստացած 40 հազար դրամից 2000 դրամը հանձնել է Ս.Զ.-ին՝ որպես պոռնկությամբ զբաղվելու միջնորդ հանդիսացող անձի: Դատարանը ամբաստանյալ Ս.Զ.-ին մեղավոր է

ճանաչել ՀՀ քր.օր.-ի հոդված 261-ի 1-ին մասով¹⁷⁵:

Մեր կարծիքով ամբաստանյալի արարքը հարկավոր է որակել հոդված 262-ով: Քանի որ գործում նշված է տուժողի՝ մարմնավաճառ լինելու մասին և դա հայտնի է եղել հանցավորին: Ինչպես արդեն նշել ենք, հնարավոր չէ մարմնավաճառությանը ամբ զբաղվելու ներգրավել այն անձին, ով այդ պահին զբաղվում է մարմնավաճառությամբ: Ամբաստանյալի գործողությունները միջնորդություն է, այսինքն՝ նա նպաստում է անձի մարմնավաճառությամբ զբաղվելուն, որը համապատասխանում է հոդված 262-ի հատկանիշներին:

Մեկ այլ գործով նույն դատարանը նմանատիպ արարքը որակել է հոդված 262-ով: Այսպես, Ա.Մ.-ն 2008թ. հունիսից աշխատել է Պրիզ տաքսի ծառայությունում որպես վարորդ: Աշխատանքի ընթացքում նա ծանոթացել է մարմնավաճառներ Ա.Ա.-ի, Մ.Բ.-ի, Ս.Ա.-ի, Ա.Պ.-ի և Մ.Բ.-ի հետ: Ա. Մ.-ն, տեղեկանալով վերջիններիս մարմնավաճառությամբ զբաղվելու մասին, տաքսու վարորդի ծառայությունից զատ, գույքային օգուտ ստանալու նպատակով, հիշյալ մարմնավաճառների հետ եկել է համաձայնության և 2008թ.-ի հունիսից մինչև 2009թ.-ի մայիսը, իր ծանոթ տղամարդկանց պատվերով իրեն ամրացված մեքենայով նշված մարմնավաճառներին սեռական հարաբերություն ունենալու նպատակով պարբերաբար տարել է տարբեր խորտկարաններ ու շինություններ մարմնավաճառությամբ զբաղվելու համար, նրանց ծանոթացրել է մարմնավաճառ պատվիրած տղամարդկանց հետ և իր ծառայությունների դիմաց նրանցից ստացել ինչպես տաքսու ուղեվարձը, այնպես էլ գույքային օգուտ՝ մասնավորապես, թեյավճարներ, բջջային հեռախոսի լիցքավորման քարտեր և այլ իրեր, այդպիսով՝ նպաստելով մարմնավաճառությամբ զբաղվելուն: Դատարանը ամբաստանյալին մեղավոր է ճանաչել ՀՀ քր.օր.-ի հոդված 262-ի 1-ին մասով¹⁷⁶:

Հոդված 261-ի 2-րդ մասը նախատեսում է հանցագործության

¹⁷⁵ Տե՛ս Դատական գործ № ԼԴ/ 0176/01/09:

¹⁷⁶ Տե՛ս Դատական գործ № ԼԴ/ 0168/01/09:

ծանրացնող հանգամանքերը՝ արարքի կատարումը՝

1. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
2. Պաշտոնական դիրքն օգտագործելով,
3. Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
4. Ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
5. Երկու կամ ավելի անձանց նկատմամբ:

Իսկ հոդվածի 3-րդ մասում սահմանված է հանցագործության առավել ծանրացնող հանգամանքը՝ արարքի կատարումը կազմակերպված խմբի կողմից:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 262-ը պատասխանատվություն է սահմանում պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելու, ղեկավարելու կամ պահելու կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելու կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու համար, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132 և 132.2 հոդվածներով նախատեսված հատկանիշները:

Այս հանցագործության օբյեկտը համընկնում է հոդված 261-ով նախատեսված հանցակազմի օբյեկտի հետ:

Մինչև հանցագործության օբյեկտիվ կողմի քննարկմանն անցնելը, հարկ ենք համարում պարզաբանել հոդվածում օգտագործված «հաստատություն», «բնակարան», «կացարան» հասկացությունները:

Հաստատություն ասելով պետք է հասկանալ ցանկացած տեսակի կազմակերպարարական կառույց կամ շինություն (փակ կամ բացօթյա)՝ հյուրանոց, բար, մոթել, բաղնիք և այլն: Քրեական իրավունքի գիտության մեջ ընդունված է բնակարան համարել այն շենքը կամ շինությունը, որը հատկապես նախատեսված է մարդկանց մշտական կամ ժամանակավոր բնակության համար (առանձնատուն, բնակարան, հյուրանոց, ամառանոց, հանգստյան տուն, առողջարան,

տնակ և այլն): Բնակարան են համարվում նաև դրանց համալրող մասերը, որոնցում մարդիկ բավարարում են իրենց տարբեր պահանջմունքերը կամ, որտեղ պահվում է գույք (նկուղ, տանիք, պառչգամբ, տան ներսում կամ կից ավտոտնակ և այլն): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 6-ի 46-րդ կետում տրված է «բնակարան» հասկացության պարզաբանումը, որում բնակարան է համարվում նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ծառայողական, անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

«Կացարան» բառը իրավաբանական գրականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում: Որոշ հեղինակների կարծիքով՝ կացարան պետք է համարել այն վայրը, որը քողարկված է տեղի վարչական մարմինների ուշադրությունից, հատուկ հարմարեցված է անառակության համար և հասանելի է թեկուզ և սահմանափակ թվով անձանց համար, որոնք գալիս են այդտեղ իրենց սեռական կիրքը բավարարելու համար¹⁷⁷: Ըստ մեկ այլ կարծիքի՝ կացարան պետք է համարել ցանկացած վայր, որը ստեղծված, հարմարեցված կամ տրամադրված է մարմնավաճառությամբ զբաղվելու համար¹⁷⁸: Երկրորդ սահմանումը, կարծում ենք, առավել հիմնավոր է:

Իրավաբանական գրականության մեջ հաստատությունն ստեղծելը ներկայացվում է որպես գործողություն՝ ուղղված հաստատություն հիմնելուն, օրինակ՝ կառուցում, վարձակալում, շինության հարմարեցում, դրանցից օգտվելու ցանկություն ունեցող անձանց ներգրավում և այլն¹⁷⁹:

ՀՀ քր. օր.-ի հոդված 38-ի 3-րդ մասի համաձայն կազմակերպիչ է համարվում այն անձը, ով կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, ինչպես նաև ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք: Դրանից

¹⁷⁷ Տե՛ս Զրոշева 3. М. Некоторые вопросы уголовно-правовой борьбы с содержанием притонов разврата и сводничеством. Ташкент, 1989, էջ 84:

¹⁷⁸ Տե՛ս Федик Е. Н. Ответственность за действия связанных с проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2003, էջ 95:

¹⁷⁹ Տե՛ս Левицкий Г. А., Кузьмин А. А. Ответственность за преступления, связанные с наркоманией. М., 1981, էջ 60:

կարելի է եզրակացնել, որ պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ղեկավարելը մեկ կամ մի քանի անձանց գործողություններն են՝ ուղղված հաստատության գործունեությունն ապահովելուն: Հաստատության կազմակերպիչների գործողությունների բնույթը կարող է լինել բազմազան՝ սեռական ծառայություններ մատուցող «անձնակազմի» ընտրություն, հաճախորդներ գտնելուն ուղղված գործողություններ, հաստատությանը անհրաժեշտ պարագաներով ապահովում և այլն: Ղեկավարման գործառնությունները կարող են բաժանվել մի քանի անձանց միջև, մասնավորապես՝ մեկը հետևում է մարմնավաճառներին, մյուսը փնտրում է հաճախորդներ, երրորդը կատարում է անհրաժեշտ գնումները և այլն: Այս դեպքում նշված անձինք գործում են որպես համակատարողներ, նրանց արարքն էլ որակվում է հոդված 262-ի 3-րդ մասով և հոդված 38-ի վրահղում չի արվում:

Հաստատություն պահող կարող է լինել նա, ում, սեփականության կամ տնտեսության տակ է գտնվում շինությունը կամ տարածքը, որտեղ վճարի դիմաց մատուցում են սեռական ծառայություններ: Հաստատություն պահելու համար անհրաժեշտ է հաստատել, որ անձը հաստատությունը տրամադրում է սիստեմատիկորեն: Հաստատության մեկանգամյա տրամադրումը մարմնավաճառությամբ զբաղվող անձի հետ սեռական հարաբերություն ունենալու համար չի պարունակում հանցակազմ: Հաստատություն պահելը այն գործողությունն է, որով իրականացվում է շինության կամ այլ վայրի տրամադրումը պոռնկությամբ զբաղվելու համար: Այս Հանցակազմը ձևական է:

Ըստ քրեական օրենսգրքի հոդված 28-ի՝ մեղքը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով: Իսկ հոդված 29-ի համաձայն հանցանքը կարող է կատարվել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Սակայն նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ուղղակի և անուղղակի դիտավորության առկայությունը կապում են հանրորեն վտանգավոր հետևանքների հանդեպ հանցավորի դրսևորած

վերաբերմունքի հետ: Ըստ հոդված 29-ի 4-րդ մասի՝ եթե օրենքն ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը չի կապում հանցավոր արարքի որոշակի հետևանքների առաջացման հետ, հանցանքը համարվում է դիտավորությանմբ կատարված, եթե կատարող անձը գիտակցել է իր արարքի հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկացել է կատարել դա: Սրանից հետևում է, որ քննարկվող արարքը հնարավոր է կատարել միայն դիտավորությանմբ: Փաստորեն, անկախ նշված հանգամանքերի վրա հասնելուց հանցավորը գիտակցում է իր կատարած արարքի վտանգավորությունը և ցանկանում է դա կատարել:

Հոդված 262-ի դիսպոզիցիայում օգտագործված է «...կամ գույքային օգուտ տաանլ ով՝ արձնկությանմբ զբաղվել ուն այլ ձևով նպաստելը» արտահայտությունը, ինչից հետևում է, որ օրենսդիրը հոդվածում նշված գործողությունների մի մասի (հաստատությունն ստեղծելու, պահելու, ղեկավարելու և այլնի) կատարման համար չի նախատեսում գույքային օգուտ ստանալու նպատակ, իսկ մարմնավաճառությանմբ զբաղվել ուն այլ ձևով նպաստելու համար նախատեսում է այդպիսի նպատակ, ինչը արդարացված չէ: Այդ պատճառով ավելի ճիշտ ենք համարում հոդված 262-ի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. «մարմնավաճառությանմբ զբաղվելու համար հաստատությունն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատությունն մարմնավաճառությանմբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի մարմնավաճառությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան տրամադրելը կամ մարմնավաճառությամբ զբաղվել ուն այլ ձևով նպաստելը...»: :

Իրավաբանական գրականության մեջ նշվել է, որ մարմնավաճառությանը նպաստել ուն առնչվող գործերով կարող են ներգրավվել այն ՀԼՄ-ների ղեկավարները, որտեղ տեղադրված են

մարմնավաճառների գովազդներ¹⁸⁰։ Բերված տեսակետը արդարացված է այն պարագայում, երբ ՉԼՄ-ների ղեկավարները գիտակցում են, որ իրենց տեղադրած գովազդը վերաբերում է մարմնավաճառությանը;

Հաճախ հոդված 262-ով նախատեսված արարքը որակելիս հղում է արվում հոդված 38-ի վրա։ Այսինքն, արարքը որակելիս դատարանը համարում է, որ այն հնարավոր է կատարել նաև հանցակցությամբ։ Մեր կարծիքով այս հանցակազմը հնարավոր է կատարել համակատարման եղանակով, հանցակցության այլ ձևերը գրեթե բացառվում են։ Վերլուծենք հետևյալ դատական գործը։ Ամբաստանյալ Կ.Մ.-ն Բագրատունյաց պողոտայի 2/22 հասցեում 2006թ.-ին ստեղծել է «Գոռ-Անգելինա» համալիրը և հանդիսանալով «Գոռ-Անգելինա» ՍՊԸ –ի տնօրեն՝ 2009թ.-ի մայիսից մինչև 2010թ.-ի մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում անձամբ կազմակերպել է նույն հյուրանոցային համալիրի աշխատանքները և մշտապես գտնվել հյուրանոցում։

2009թ. մայիսից Կ.Մ.-ն համալիրի կահավորված առանձնասենյակները պարբերաբար տրամադրել է հյուրանոցի մոտակայքում հաճախորդներին սպասող մարմնավաճառներին՝ իրենց հաճախորդների հետ սեռական հարաբերությունն ունենալու համար և հետևել է մարմնավաճառների հյուրանոց այցելելու հաճախականությանը, իսկ մյուս ամբաստանյալ Յու.Մ.-ն, հանդիսանալով նույն հյուրանոցի բարմեն, մարմնավաճառներին՝ իրենց հաճախորդների հետ սեռական հարաբերությունն ունենալու համար տրամադրած առանձնասենյակների դիմաց մեկ ժամի համար գանձել է 3000 ՀՀ դրամ և գումարները փոխանցել Կ.Մ.-ին։

Դատարանը Կ.Մ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օր.-ի 262 հոդվածի 1-ին մասով, իսկ Յու.Մ.-ին՝ ՀՀ քր. օր.-ի 38-262 հոդվածի 1-ին մասով՝ նրա գործողությունները համարելով օժանդակություն¹⁸¹։

Գտնում ենք, որ դատարանը ճիշտ է կողմնորոշվել տվյալ արարքի որակման հարցում։ ՀՀ քր. օր.-ի հոդված 38-ի 5-րդ մասի

¹⁸⁰ Տե՛ս Шибанова Е. В. Виявление и исследование преступлений, связанные с проституцией. М., Юрлитинформ, 2007, էջեր 64-65։

¹⁸¹ Տե՛ս Դատական գործ № ԵՇԴ / 0035/01/10։

համաձայն՝ օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվությամբ կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները: Ինչպես տեսնում ենք, Յու.Մ.-ն չի կատարել օժանդակողին բնորոշ գործողություններից որևէ մեկը: Նա տրամադրել է առանձնասենյակները մարմնավաճառներին և նրանց հաճախորդներին, ստացել գումարները և դրանք փոխանցել համալիրի սեփականատիրոջը: Փաստորեն, նա նպաստել է մարմնավաճառությամբ զբաղվելուն, իրականացրել է հոդված 262-ով սահմանված արարքը: Նա պետք է դիտարկվի որպես կատարող: Իսկ եթե նրան համարենք կատարող, այդ դեպքում նրան Կ.Մ.-ի արարքը պետք է որակել հոդված 262-ի 2-րդ մասի 1-ին կետով (պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ):

Իսկ հաջորդ օրինակում դատարանը արարքը իրավացիորեն է որակել հոդված 38-262-ով: 2010թ. մայիսի 7-ին Ա.Բ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 262 հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2009թ.-ի հունվար-փետրվար ամիսներին գույքային օգուտ ստանալու նպատակով նպաստել է Հ. Մ.-ի կողմից պոռնկությամբ զբաղվելուն, իսկ Ա.Վ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 38-262 հոդված 1-ին մասով այն բանի համար, որ նա 2009թ.-ի հունվար-փետրվար ամիսներին խորհուրդներ և տեղեկություններ տալով՝ օժանդակել է Ա.Բ.-ին՝ Հ.Մ.ի կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն: Դատարանը ամբաստանյալ Ա.Բ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օր.-ի 262 հոդվածի 1-ին մասով, իսկ ամբաստանյալ Ա.Վ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օր.-ի 38-262 հոդվածի 1-ին

մասով¹⁸²:

Խոսելով հոդված 261-ով և հոդված 262-ով նախատեսված արարքների համակցությամբ որակման մասին՝ պետք է նշենք, որ այդպիսի որակումը հնարավոր է: Մասնավորապես, երբ հանցագործը անձին ներգրավում է մարմնավաճառությամբ զբաղվելու (համոզելու, նյութապես շահագործելու և այլ եղանակով) մեջ, բացի այդ վճարի դիմաց տրամադրում է նրան տարածք մարմնավաճառությամբ զբաղվելու համար:

Ուսումնասիրելով հոդվածներ 261, 262-ով կայացված դատական ակտերը, նկատում ենք, որ դատարանը չափազանց շատ է կիրառում տուգանք պատժատեսակը¹⁸³: Մեր կարծիքով նման միտումը վտանգավոր է, քանի որ այս հոդվածներով մեղավոր ճանաչված անձինք իրենց գործունեությունից բավականին մեծ եկամուտ են ստանում և նրանց համար դժվար չէ տուգանք վճարելով՝ շարունակել իրենց գործունեությունը; Փաստորեն, տվյալ պարագայում պատիժը լիովին իր նպատակին չի ծառայում:

Հոդված 262-ի 2-րդ մասում սահմանված են հանցագործության ծանրացնող հանգամանքները՝ նույն արարքը, որը կատարվել է՝

1. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
2. Պաշտոնական դիրքն օգտագործելով,
3. Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
4. Ակնհայտ հղի կնոջն օգտագործելով,
5. Երկու կամ ավելի անձանց օգտագործելով,
6. Անչափահասին օգտագործելով,
7. Հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով:

Իսկ հոդվածի 3-րդ մասում սահմանված է հանցագործության առավել

¹⁸² Տե՛ս դատական գործ № ԵԱԴԴ / 0039/ 01/10:

¹⁸³ Տե՛ս Դատական գործեր № ԳԴ/0051/01/11, ՇԴ/ 0074/01/11, ԵՄԴ/0023/01/11, ԵԿԴ/ 0336/01/11, ԼԴ/0143/01/10 և այլն:

ծանրացնող հանգամանքը՝ նույն արարքի կատարումը կազմակերպված խմբի կողմից: Թվարկված ծանրացնող հանգամանքներն արդեն վերլուծել ենք, միայն ավելացնենք, որ հոդված 262-ի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերը բացակայում են հոդված 261-ում, ինչը տարօրինակ է և մեր կարծիքով դրանք պետք է սահմանվեն նաև հոդված 261-ում:

§3 Մարմնավաճառության հետկապված այլ հանցագործություններ

Մարմնավաճառության հետ սերտորեն առնչվում են այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը, վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը, սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ և անառակաբարո գործողությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 123-ը պատասխանատվություն է սահմանում այլ անձի մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու համար: Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելու համար այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին: Իսկ հոդված 124-ով պատասխանատվություն է սահմանված այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելու համար այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին:

Հոդված 124-ով նախատեսված հանցակազմի օբյեկտի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ վեճեր չկան: Այս հանցակազմի օբյեկտը ընդունված է համարել հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են այլ անձի

առողջությունը վեներական հիվանդությամբ վարակվելուց կամ այլ կերպասած ապահովում են այլ անձի առողջությունը ¹⁸⁴:

Նույնը չի կարելի ակնհայտ հոդված 123-ով սահմանված արարքի հիմնական անմիջական օբյեկտի մասին: Այս հարցը խնդրահարույց է քրեական իրավունքի տեսության մեջ: Մասնավորապես, Լ.Ա. Պռոխորովը և Մ.Լ. Պռոխորովան կարծում են, որ իմունային անբավարարության վիրուսով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու դեպքում հանցագործության օբյեկտը տուժողի առողջությունն է ¹⁸⁵: Իսկ, օրինակ՝ Վ.Ի. Չուբկովը առողջությունից բացի նշում է նաև մարդու կյանքի մասին՝ իր տեսակետը հիմնավորելով նրանով, որ, որպես կանոն, այս հիվանդությունը ավարտվում է մահվան ելքով ¹⁸⁶: Երրորդ խումբը այս հանցակազմի օբյեկտ է համարում միայն մարդու կյանքը՝ համարելով, որ այս հիվանդությունը վաղ թե ուշ հանգեցնում է մարդու մահվան ¹⁸⁷:

Մեր կարծիքով իրավացի են այն հեղինակները, ովքեր համարում են, որ այս հանցակազմը ունի երկու անմիջական օբյեկտ: Հիմնական անմիջական օբյեկտը մարդու առողջության պաշտանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտը մարդու կյանքի պաշտանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: ՄԻԱՎ-ը բնութագրվում է սկզբում ՄԻԱՎ հարուցիչով վարակվելով, հետագայում ՁԻԱՀ հիվանդության առաջացման հնարավորությամբ (հնարավոր է շատ տարիներ անց), իսկ ՁԻԱՀ-ով հիվանդանալու պարագայում մարդու մահը անխուսափելի է ¹⁸⁸:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այս արարքների ավարտման պահը ճշտգրիտ սահմանելը: Հոդված 123-ի առաջին մասով

¹⁸⁴ Տե՛ս Коробеев А. И. Преступные посягательства на жизнь и здоровье человека. М. Юрлитинформ, 2012, էջ 265:

¹⁸⁵ Տե՛ս Прохоров Л. А., Порохорова М.Л. Уголовное право. М. Юрист, 1999, էջ 260:

¹⁸⁶ Տե՛ս Зубков В. И. Ответственность за преступления против личности по законодательству России. М., Норма. 2005, էջ 151:

¹⁸⁷ Տե՛ս Уголовное право. Особенная часть. Отв. Ред. И. Я. Козаченко, З. А. Незнамова, Г. П. Новоселов. М. Норва – Инфра, 2000, էջ 95:

¹⁸⁸ Տե՛ս Можайская Л. А. Социально правовые проблемы профилактики ВИЧ- инфекции / СПИДа. Автореф. канд. юрид. наук . Екатеринбург, 1993, էջեր 6-7:

նախատեսված արարքի (վարակելու ակնհայտ ենթարկելը) օբյեկտիվ կողմը նկարագրված է ձևական հանցակազմով, ուստի այս արարքը ավարտված է համարվում, երբ ՄԻԱՎ վարակակիրը կատարում է գործողություններ, որոնք պատենցիալ վտանգ են ստեղծում այլ անձին վարակելու համար, օրինակ՝ առանց պաշտպանիչ միջոցների սեռական կապի մեջ է մտնում այլ անձի հետ՝ անկախ այն հանգամանքից նրա զուգընկերը կվարակվի, թե՛ ոչ: Հարկ է նշել նաև, որ անձը պատասխանատվությունից ազատվում է այն դեպքում, երբ պահպանել է նախագոչության համապատասխան միջոցները, օրինակ՝ սեռական հարաբերության ժամանակ օգտագործում է պաշտպանիչ միջոցներ: Սակայն զուգընկերոջը միայն վարակի առկայության մասին տեղեկացնելը չի կարող բավարարել ինել պատասխանատվությունից ազատվելու համար:

Հոդված 123-ի 2-րդ մասի և հոդված 124-ով նախատեսված արարքները ավարտված են համարվում, երբ տուժողները փաստացի վարակվում են համապատասխան հիվանդություններով: Կարծում ենք՝ ավելի նպատակահարմար է այս հանցակազմերի դիսպոզիցիաները շարադրել ձևական հանցակազմով, ինչը կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն: Ուստի, առաջարկում ենք հոդված 123-ի 2-րդ մասը հանել քրեական օրենսգրքից և խտացնել հոդվածի 1-ին մասի սանկցիան: Առաջարկում ենք նաև հոդված 124-ի դիսպոզիցիան շարադրել այսպես. «Այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը...»: Այս փոփոխությունները ավելի զգոն կդարձնեն ՄԻԱՎ հարուցիչով և վեներական հիվանդություններով տառապող անձանց՝ հատկապես մարմնավաճառներին, որպեսզի նրանք հետևեն իրենց սեռական ուրորտի առողջությանը և սեռական հարաբերության ժամանակ օգտագործեն պաշտպանիչ միջոցներ: Բացի այդ շատ բարդ է ապացուցել, թե անձը երբ և կոնկրետ ումից է վարակվել ՄԻԱՎ հարուցիչով և վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով: Հավանաբար, սա է պատճառը, որ վերջին տարիներին այս հանցակազմերով գործեր դատարաններում գրեթե

չեն քննվել: Մասնավորապես, 123 հոդվածով վերջին 5 տարիներին ոչ ոք չի դատապարտվել, իսկ հոդվ. 124-ով կայացվել է միայն մեկ դատավճիռ և այն էլ 2010թ.-ին¹⁸⁹: Մասնագետների կարծիքով ՄԻԱՎ հարուցչի ինկուբացիոն շրջանը կարող է տևել 2-3 շաբաթից մինչև 6 ամիս, իսկ որոշ դեպքերում մինչև 1 տարի¹⁹⁰:

Մարմնավաճառության առնչվող մյուս հանցագործությունները ՀՀ քրեական օրենսգրքի 141 և 142 հոդվածներով նախատեսված արարքներն են: Հոդված 141-ը պատասխանատվություն է սահմանում 18 տարին լրացած անձի կողմից ակնհայտ 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու համար կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար ակնհայտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ՝ քրեական օրենսգրքի 138 կամ 139-րդ հոդվածներով կամ 140-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում: Հոդվածի դիսպոզիցիայից պարզ է դառնում, որ հանցանքը կատարելու համար անհրաժեշտ է, որ հանցավորը հստակ գիտակցի տուժողի 16 տարին լրացած չլինելու հանգամանքը, և սեռական հարաբերությունը պետք է տեղի ունենա տուժողի համաձայնությամբ՝ հակառակ դեպքում արարքը կորակվի հոդված 138-ով կամ 139-ով: Ի տարբերություն գործող օրենսգրքի, ՀԽՍՀ 1961թ. քրեական օրենսգիրքը պատասխանատվություն էր նախատեսում 16 տարեկան չդարձած կամ արբունքի չհասած անձի հետ սեռական հարաբերության համար: Դիսպոզիցիայի նման կառուցվածքը մեր կարծիքով արդարացիորեն քննադատվել է քրեագետների կողմից: Ըստ նրանց՝ դատական պրակտիկայում հաճախ բարդություններ էին առաջանում արբունքի հասնելու, այսինքն սեռական հասունության հասած լինելու հանգամանքը սահմանելու հետ կապված: Լինում էին նաև օբյեկտիվ մեղսայնացման դեպքեր: Հաճախ հանցավորը ի վիճակի չէր լինում հասկանալ, թե արդյոք տուժողը հասել է արբունքի, թե՛

¹⁸⁹ Տե՛ս www.court.am/ գրադարան/ դատական պրակտիկայի նյութեր:

¹⁹⁰ Տե՛ս Nazarenko, G. L Kishkun A. A. Clinical assessment of results of laboratory resarchers. 2nd second prod th stereotipic. M. Medicine, 2002, էջ 356:

ոչ¹⁹¹: Բացի այդ այս հանգամանքը պահանջում էր յուրաքանչյուր կոնկրետ դեպքով հատուկ փորձաքննության անցկացում՝ պարզելու համար, թե տուժողը հասել է արբունքի, թե՝ ոչ: Ինչպես գրում է Կախին, դա օրենսդրության բացթողումն էր, քանի որ ըստ էության տեղի էր ունենում օբյեկտիվ մեղսայնացում սուբյեկտիվ կողմը հիմնավորել չկարողանալու հետևանքով: Քրեական օրենսգրքում հստակ տարիքի ամրագրումը իրավական կարգավորման լուրջ ձեռքբերում է¹⁹²:

Հոդված 142-ը պատասխանատվություն է նախատեսում տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կամ տասնվեց տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար: Փաստորեն, հոդվածի դիսպոզիցիան ելնելով տուժողի տարիքից՝ հանցագործության սուբյեկտի համար սահմանում է տարբեր տարիքներ: Մեր համոզմամբ միայն տուժողի տարիքը բավարարչ է հանցագործության սուբյեկտի համար տարիք սահմանելու հարցում: Այս արարքի հակաիրավականության և հանրային վտանգավորության աստիճանի ոչ ակնհայտ լինելու պատճառով, կարծում ենք՝ հարկավոր է հանցագործության սուբյեկտ համարել 18 տարին լրացած անձանց: Այդ պատճառով առաջարկում ենք հոդված 142-ի դիսպոզիցիայի երկրորդ հատվածը հանել քրեական օրենսգրքից:

Քննարկվող հանցակամերի հետ կապված հետաքրքրություններ կայացնող մյուս հարցը առնչվում է այս արարքները միմյանցից և սեռական բնույթի այլ հանցագործություններին սահմանազատմանը և այլ արարքների հետ համակցությամբ որակելուն: Որոշ հեղինակներ համարում են, որ եթե անառակաբարո գործողությունները նախորդում են բռնաբարությանը, կատարվածը

¹⁹¹ Ст'ю Уголовное право. Особенная часть. Отв. Ред. И. Я. Козаченко, З. А. Незнамова, Г. П. Новоселов. М., ИНФРА-М, НОРМА, 1998, էջ 138:

¹⁹² Ст'ю Кахий М. В. Соотношение изнасилования и полового сношения и иных действий сексуального характера с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста// Вопросы ювенальной юстиции. 2007. #5, էջ 22:

առաջացնում է բռնաբարության և անառակաբարո գործողությունների համակցություն¹⁹³։ Սակայն կան հեղինակներ, ովքեր այլ կարծիքի են։ Օրինակ՝ Յու. Ա. Օստրովեցկայան պնդում է, որ անառակաբարո գործողությունների վերաճելը բռնաբարության կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների պարագայում արարքը հարկավոր է որակել միայն հոդված 138-ով կամ 139-ով։ Այստեղ ևս հանցակցությունը բացակայում է¹⁹⁴։

Կարծում ենք՝ այս հարցերին ճիշտ պատասխանելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սուբյեկտիվ կողմի՝ հատկապես հանցավորի մտադրության ձևավորման պահի վրա։ Անառակաբարո գործողությունները կորակվեն հոդված 138-ի կամ 139-ի հետ համակցությամբ այն դեպքում, երբ մեղավորի մոտ տուժողի հետ սեռական հարաբերությունն ունենալու մտադրությունը առաջացել է անառակաբարո գործողություններ կատարելուց հետո կամ դրա ընթացքում։ Մինչդեռ, եթե հանցավորը ի սկզբանե ցանկացել է բռնաբարել տուժողին, ապա անառակաբարո գործողությունները այդ դեպքում դառնում են բռնաբարության հանցակազմի բաղկացուցիչ մասը՝ նրա սկզբնական փուլը և համակցությունը տվյալ պարագայում բացակայում է։ Նույն կերպ պետք է վարվել նաև 141 և 142 հոդվածների որակման հարցում։ Եթե հանցավորը անառակաբարո գործողություններ է կատարում 16 տարին չլրացած անձի հետ, որից հետո նրա մոտ մտադրություն է առաջանում սեռական հարաբերությունն ունենալ այդ անձի հետ, տվյալ դեպքում այդ արարքները կվորակվեն համակցությամբ։ Իսկ հոդված 141-ը համակցությամբ չի կարելի որակել 138, 139 հոդվածների հետ, եթե խոսքը միևնույն տուժողին է վերաբերում, քանի որ այս հանցակազմերը ի տարբերություն հոդված 141-ի ենթադրում են սեռական հարաբերությունն տուժողի կամքին հակառակ։ Այստեղ համակցությունը որպես կանոն բացակայում է այն պատճառով, որ

¹⁹³ Տե՛ս Дыдо А. В. Изнасилование : проблемы уголовно-правовой квалификации: Дисс. Канд. Юрид. Наук. Владивосток. 2008, էջ 182:

¹⁹⁴ Տե՛ս Островецкая Ю. А. Развратные действия : проблемы квалификации.//Вестник Южно-Уральского государственного университета. Серия Право. Выпуск 24, 2010, # 38 էջ 64;

հնարավոր չէ տուժողը նույն սեռական ակտի ընթացքում միարժամանակ և ցանկանա, և դեմ լինի սեռական հարաբերություն ունենենալուն: Այդ արարքները համակցությամբ կորակվեն, եթե տեղի է ունեցել 2 սեռական ակտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ, որոնցից մեկը եղել է տուժողի կամքին հակառակ: Մեր կարծիքով 16 տարին չլրացած անձի հետ մեկ սեռական հարաբերությունը (ակտը) կարող է առաջացնել 138 և 141 հոդվածների համակցություն միայն այն դեպքում, երբ սեռական հարաբերությունը սկսվել է տուժողի համաձայնությամբ, բայց հարաբերության ընթացքում վերջինս փոխում է իր մտադրությունը և հանցավորին հայտնում կամ այլ կերպացույց է տալիս, որ չի ցանկանում շարունակել սեռական ակտը: Ընդ որում, արարքը նաև հոդված 138-ով որակելու համար անհրաժեշտ է, որ մեղավորը հստակ գիտակցի, որ գործում է տուժողի կամքին հակառակ և ֆիզիկապես հնարավորություն անենա դադարեցնելու սեռական ակտը;

Խնդրահարույց են նաև այս հանցակազմերի որոշ ծանրացնող հանգամանքները: Մասնավորապես, հոդված 141-ի 2-րդ մասի առաջին կետը և հոդված 142-ի 2-րդ մասի 2-րդ կետը պատասխանատվություն են սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է 21 տարին չլրացած անձի կողմից: Մեր կարծիքով հանցավորի տարիքային տարբերությունը (հատկապես այդքան փոքր՝ 3 տարվա), չի կարող ունենալ այնպիսի վճռորոշ նշանակություն, որ այն ազդի արարքի որակման վրա: Անհասկանալի է, թե ինչու պետք է 21 տարեկան անձի հետ սեռական հարաբերությունը կամ անառակաբարո գործողությունները ավելի մեծ վնաս պատճառեն տուժողին, քան նույն գործողությունները որոնք կատարվել են 18 տարեկան անձի կողմից՝ այն դեպքում, երբ խոսքը միևնույն գործողությունների մասին է: Իսկ եթե օրենսդիրը 21 տարին նշելով՝ առաջնորդվել է հանցավորի սեռական հասունացման աստիճանը հաշվի առնելով, հարկ է նշել՝ որպես կանոն 18 տարեկան անձը արդեն հասած է լինում սեռական հասունացման մակարդակին, բացի այդ, տվյալ հանգամանքը կապված է ոչ միայն տարիքային, այլ նաև անհատական

առանձնահատկություններին՝ գենետիկ տվյալներ, ֆիզիկական
ակտիվություն, սննդակարգ և այլն: Ընդ որում, հոդված 141 –ի 2-րդ
մասը, ի տարբերություն առաջին մասի, էականորեն խիստ պատիժ
սահմանում՝ ընդհուպ միջև 10 տարվա ազատազրկում: Մեր կարծիքով
այս հարցերի կապակցությամբ ավելի ճիշտ մոտեցում է ցուցաբերել
ՌԴ օրենսդիրը՝ ՌԴ քրեական օրենսգրքում սահմանելով այսպիսի
նորմ. «Այն դեպքում, եթե տուժողի և հանցավորի միջև տարիքային
տարբերությունը 4 տարուց պակաս է, վերջինիս նկատմամբ
ազատազրկման ձևով պատիժ չի նշանակվում սույն հոդվածի
առաջին և հոդված 135-ի 1-ին մասի համար»: Այս մոտեցումը
համարում ենք ավելի խելամիտ, քանի որ տվյալ դեպքում հանցավորի
տարիքը չի ազդում արարքի որակման վրա, այլ այն հաշվի է առնվում
պատիժ նշանակելիս: Այնուամենայնիվ, կարծում ենք առավել
նպատակահարմար կլիներ ոչ թե հաշվի առնել տուժողի և հանցավորի
միջև տարիքային տարբերությունը, այլ ազատազրկման ձևով
պատժից ազատել որոշակի տարիքի՝ օրինակ հենց մինչև 21 տարին
չլրացած անձանց: Հստակ տարիքի սահմանումը արդարացի մոտեցում
է, քանի որ տարիքային տարբերությամբ առաջնորդվելու
պարագայում հնարավոր է՝ մի դեպքում անձը ազատվի
ազատազրկումից, իսկ մեկ այլ գործով այն չտարածվի նույն տարիքի
անձի վրա, ինչը կարելի է համարել մարդասիրական վերաբերմունքի
դրսևորում երիտասարդների և պատանիների հանդեպ: Ու խոսի,
առաջարկում ենք հոդված 141 –ում ավելացնել այսպիսի դրույթ.
«Հոդված 141-ի առաջին մասով և հոդված 142-ի առաջին մասով
նախատեսված արարքները առաջին անգամ կատարած անձի նկատմամբ
ազատազրկման ձևով պատիժ չի նշանակվում, եթե հանցանք
կատարելու պահին վերջինիս 21 տարին չլրացած չլինում»:

Հոդված 141-ը որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է
արարքը, որը կատարվել է 14 տարին չլրացած անձի նկատմամբ: Այս
ծանրացնող հանգամանքի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ
այն տարածվում է 12 տարին չլրացած անձանց վրա, ինչի հետդժվար է
համաձայնել: Քանի որ իրավաբանական գրականության մեջ բազմիցս

արտահայտվել է այն միտքը, որ մինչև 12 տարեկան անձի նկատմամբ սեռական հարաբերությունը պետք է որակել որպես բռնաբարություն կամ այլ բռնի սեռական գործողություններ՝ հաշվի առնելով, որ կապված տարիքից, այդպիսի անձը գտնվում է անօգնական վիճակում, այսինքն՝ չի կարող գիտակցել իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը¹⁹⁵։ Այսպիսի դրույթ նախատեսված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138-ում։ Ուստի, առաջարկում ենք հոդված 141 –ում որպես ծանրացնող հանգամանք նախատեսել նույն արաքը, որը կատարվել է 12-ից 14 տարեկան անձի նկատմամբ։ Նման կարգավորումը թույլ կտա խուսափել որակման հետկապված բարդություններից։

Քննարկվող երկու հոդվածներում էլ որպես ծանրացնող հանգամանք նշված է արարքի կատարումը միևնույն անձի նկատմամբ պարբերաբար։ Հարկ է նշել, որ պարբերաբար ասելով հարկավոր է հասկանալ արարքի կատարումը 3 և ավելի անգամ։ Ընդ որում, 3 և ավելի անգամ պետք է կատարվի միևնույն արարքը։ Այսինքն, եթե հանցավորը 2 անգամ 16 տարին չլրացած նույն անձի հետ սեռական հարաբերություն ունենա, այնուհետև նույն անձի նկատմամբ 2 անգամ էլ անառակաբարո գործողություններ կատարի, ապա այս ծանրացնող հանգամանքը բացակայում է, և այդ արարքները պետք է որակել հոդված 141-ի առաջին մասի և հոդված 142-ի առաջին մասի համակացությամբ։

Հոդված 142-ի 2-րդ մասի 6-րդ կետը պատասխանատվություն է սահմանում անառակաբարո գործողությունների համար՝ էլեկտրոնային ցանցի կիռարմամբ։ Այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը տեղին չենք համարում, քանի որ մեր կարծիքով անառակաբարո գործողությունների կատարումը էլեկտրոնային ցանցի կիռարմամբ օժտված չէ ավելի մեծ հանրային վտանգավորություն, քան նույն գործողությունների կատարումը

¹⁹⁵ Ст'ю Островецкая Ю. А. Развратные действия : проблемы квалификации.//Вестник Южно-Уральского государственного университета. Серия Право. Выпуск 24, 2010, # 38 (214) էջ 63-66;

տուժողի հետ անմիջական կոնտակտի միջոցով կամ նրա ներկայությամբ:

Կարծում ենք՝ 141 և 142 հոդվածներում որպես ծանրացնող հանգամանք պետք է նախատեսել նույն արարքի կատարում 2 և ավելի անձանց նկատմամբ:

Ավարտելով այս հանցակազմերի ծանրացնող հանգամանքների վերլուծությունը՝ նշենք, որ հոդված 141-ի 2-րդ մասի սանկցիան չափազանց խիստ է: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների համար սահմանված է 4-10 տարվա ազատազրկում: Համեմատության համար նշենք, որ նույն ափսի պատիժ է նախատեսված նաև 138, 139 հոդվածների ծանրացնող տեսակների համար, մինչդեռ այդ հոդվածները վտանգավորության և ծանրության տեսանկյունից համեմատելի չեն հոդված 141-ի հետ: Մեր համոզմամբ հոդված 141-ի 2-րդ մասի սանկցիան վերանայման (մեղմացման) կարիք ունի:

Հետաքրքիր է նաև այն, որ ուսումնասիրվող հոդվածներով վերջին տարիներին ոչ մի կին չի դատապարտվել: Այսպես, 2014թ.-ի ընթացքում հոդված 141-ով դատապարտվել 34, իսկ հոդված 142-ով՝ 3 նաձ, և նրանց մեջ ոչ մի կին չկա¹⁹⁶:

Կարծում ենք՝ սա պայմանավորված է հասարակության և նույնիսկ իրավապահ մարմինների աշխատակիցների մոտ առկա այն թյուր պատկերացմամբ, որ այս հանցակազմերով կատարողներ պետք է լինեն տղամարդիկ, իսկ տուժողներ՝ կանայք: Մինչդեռ, հենց մարմնավաճառները նշում են, որ իրենց հաճախորդների շրջանում լինում են անչափահասներ՝ այդ թվում 16 տարին չլրացած տղաներ: Բացի այդ, մեր կողմից հարցված քաղքացիներից շատերը նշում են, որ առաջին անգամ մարմնավաճառի ծառայությունից օգտվել են 14-18 տարեկան հասակում: Հարկ է նշել, որ մեր կատարած հարցազրույցների ժամանակ մարմնավաճառներից շատերը հայտնում էին, որ իրենք տեղյակ չեն որ 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալը հանցագործություն է: Ուստի, ճիշտ

¹⁹⁶ Տե՛ս www.court.am/ գրադարան/ դատական պրակտիկայի նյութեր:

կլիներ, որ իրավապահ համակարգի աշխատակիցները այս հարցին առանձնահատուկ ուշադրություն դարձնեին և մարմնավճաների հետ բացատրական աշխատանքներ կատարելիս հստակ բացատրեին, որ մինչև 16 տարեկան անձանց հետ սեռական հարաբերությունը օրենքով պատժելի է:

§1. Մարմնավաճառության դեմ պայքարը ըստ միջազգային և արտասահմանյան երկրների օրենսդրության

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված առաջինի երկրորդ մասի համաձայն՝ քրեական օրենսգիրքը հիմնվում է ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա: Այդ պատճառով միջազգային իրավական ակտերի մանրակրկիտ հետազոտության և վերլուծության անհրաժեշտություն է առաջանում: Կարևոր է նաև ուսումնասիրել արտասահմանյան երկրների օրենսդրությունը, որը առնչվում է քննարկվող ոլորտին: Դա հնարավորություն կընձեռի այլ պետությունների օրենսդրության հաջողված փորձը կիրառել Հայաստանի Հանրապետությունում: Անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային իրավունքի նորմերի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանված միայն մարմնավաճառության հետ հարաբերակցվող հանցագործությունների համար, իսկ մարմնավաճառությամբ զբաղվելը պատժելի արարք չէ: Սակայն, միջարք պետությունների քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է նախատեսում և՛ մարմնավաճառությանը նպաստող արարքների, և՛ հենց մարմնավաճառությամբ զբաղվելու համար:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին լայն տարածում ստացավ մարդկանց շահագործման այնպիսի տեսակը, ինչպիսին է սեռականը: Միջազգային հանրությունը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել կանանց և երեխաների սեռական շահագործման (այդ թվում նաև մարմնավաճառությամբ զբաղվելու եղանակով) խնդրին: 1899թ.-ի հունիսին Լոնդոնում կայացավ առաջին գործող «Անառակության նպատակով կանանց վաճառքի հարցով միջազգային կոնգրեսը»: Կոնգրեսին մասնակցեցին Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և այլ երկրների

պատվիրակությունները, ինչպես նաև տարբեր պետություններից և կազմակերպություններից բազմաթիվ հասարակական գործիչներ¹⁹⁷։ Մասնակիցները ընդգծեցին, որ կանանց վաճառքը լայն տարածում ունի տարբեր երկրներում։ Արձանագրվեց այն փաստը, որ հանցավորների դատական հետապնդումը բարդ, հաճախ նույնիսկ անհնար է օրենսդրության անկատարության պատճառով։ Կարելի է հիշատակել այլ կոնֆերանսներ ևս, որոնց ընթացքում հնչել են կոնկրետ առաջարկներ կանանց առևտրի կանխարգելման վերաբերյալ։ Մասնավորապես, Փարիզի 1902թ-ի կոնֆերանսը՝ «հանցավոր առևտրի իրական կանխարգելման մասին»։ Միջազգային պայմանագիրը (այն հայտնի է որպես «սափտակ ստրկուհիների» առևտուր անունով), որը ստորագրվել է 1904թ-ին, իսկ 1910թ.-ի մայիսի 4-ին սափտակ «ստրկուհիների» առևտրի հարցով ընդունվեց միջազգային կոնվենցիա։ Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվեցին կանանց և երեխաների առևտրի համար սահմանել քրեական պատասխանատվություն, այդ թվում, եթե հանցակազմի մեջ մտնող առանձին արարքները կատարվել են տարբեր պետությունների տարածքներում¹⁹⁸։

Շատ պետություններ մարմնավաճառությունը համարում էին սեռական շահագործման եղանակ և առաջարկում միջոցառումներ ձեռնարկել դրա դեմ, ինչը հնարավորություն տվեց ընդունել այդ ոլորտին վերաբերող հիմնարար միջազգային փաստաթղթերից մեկը։ Խոսքը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից մարմնավաճառության շահագործման դեմ պայքարի մասին կոնվենցիան է¹⁹⁹։ Ըստ այս կոնվենցիայի հանցագործությունն է համարվում հասարակաց տների ստեղծումը և ղեկավարումը, դրանց ֆինանսավորումը, ինչպես նաև տարածքի վարձակալության հանձնելը՝ այն մարմնավաճառությամբ

¹⁹⁷ St'u Аболиционизм, его развития и сущность. / Дерюжницкий Б. Ф. Полицейское право. Пособие для студентов. СПб., 1903 / All pravo.ru-2004:

¹⁹⁸ St'u Международно-правовые основы борьбы с незаконной миграцией и торговлей людьми: Сб. док. / Сост В. С. Овчинский. М., Инфра, 2004, էջեր 77-79:

¹⁹⁹ St'u Противодействия торговли людьми. Сборник нормативных правовых документов / Под ред. Н. И. Абукириной. М., 2004, էջեր 24-31:

գբաղվելու համար օգտագործելու նպատակով: Կարևոր է նաև, որ կոնվենցիայի հոդված 16-ի համաձայն՝ դրամադամ պետությանն են պարտավոր են անպայման անդրադառնալ մարմնավաճառության զոհերի սոցիալական վերականգնման (ռեաբիլիտացիայի) հարցին: Մ.Բուրյակի կարծիքով կոնվենցիան ուղղված էր մարմնավաճառության՝ որպես երևույթի հետապնդմանն ու վերացմանը²⁰⁰: ՀՀ-ն վերոհիշյալ կոնվենցիայի պահանջներին համապատասխան նորմեր ներմուծեց ներպետական օրենսդրության մեջ, որոնցով պատասխանատվություն է նախատեսվում մարմնավաճառությամբ զբաղվելուն և նպաստելուն ուղղված արարքների համար: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 261-ը և 262-ը պատասխանատվություն են սահմանում համապատասխան արարքն կոչությամբ զբաղվելուն ներգրավելուն և արնակոչությամբ զբաղվելուն նպաստելու համար: Սակայն, հիշատակված կոնվենցիայի՝ մարմնավաճառության զոհերի սոցիալական վերականգնման (ռեաբիլիտացիայի) հարցին վերաբերող պահանջը, կարելի է ասել, այդպես էլ չիրագործվեց, քանի որ այդ ուղղությամբ ՀՀ-ում մինչ այժմ որևէ շոշափելի քայլ չի կատարվել: Միգուցե, պատճառը պետության ոչ բարենպաստ տնտեսական վիճակն է, քանի որ մարմնավաճառության զոհերի սոցիալական վերականգնման միջոցառումները պահանջում են ֆինանսական միջոցներ:

Մարմնավաճառության վերացմանն ուղղված միջազգային իրավական ակտերից է ՄԱԿ-ի 1993թ.-ի դեկտեմբերի 20-ին ընդունած կանանց խտրականության, դրանց վաճառքի և մարմնավաճառության հարկադրելու դեմ պայքարի մասին կոնվենցիան: Կոնվենցիայի հոդված 6-ի համաձայն՝ մասնակից պետությանն են ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցառումները՝ ներառյալ օրենսդրական, կանանց վաճառքի բոլոր տեսակների և կանանց մարմնավաճառության շահագործման վերացման համար:

²⁰⁰ St' u Буряк М. Ю. Торговля людьми и борьба с ней(криминологические и уголовно – правовые аспекты) Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук.Владивосток, 2005, էջ 104:

Սեռական շահագործման դեմ պայքարին առնչվող նորմեր են ամրագրված երեխայի իրավունքների մասին 1989թ.-ի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայում: Այս ոլորտին վերաբերող հաջորդ իրավական ակտը ՄԱԿ-ի Անդրազգային և ազգային հանցավորության դեմ կոնվենցիան է: Կոնվենցիան լրացվեց Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու վերացման մասին արձանագրությամբ (Պալերմոյի արձանագրություն): Արձանագրության հոդված 3-ի համաձայն՝ մարդկանց առևտուրը բնութագրվում է որպես շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, հանձնելը կամ մարդուն բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով փոխանցելը, հանձնելը կամ ստանալը՝ առևանգելու, խարդախության, խաբեության, իշխանությունը չարաշահելու կամ կախյալ վիճակը օգտագործելու կամ անձին վերահսկող անձին կաշառելու միջոցով՝ նրա վստահությունը ստանալով: Ընդ որում, փաստաթղթում հատուկ ընդգծված է, որ գոհի համաձայնությունը ծրագրված շահագործման համար նշանակություն չունի, եթե նրա նկատմամբ կիրառվել է նշված ներգործություններից որևէ մեկը: Մոտավորապես հենց այսպիսի բովանդակություն ունի նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132-ը, որը պատասխանատվություն է նախատեսում մարդու թրաֆիքինգի համար:

Մարդկանց առևտրի դեմ պայքարի հարցում մի շարք քայլեր են ձեռնարկվել ԵԱՀԿ-ի կողմից: Մասնավորապես, 2003թ.-ի դեկտեմբերի 22-ին ընդունվեց «Երեխաների սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի մասին» շրջանակային որոշումը: Այս իրավական ակտի նպատակը քրեական պատասխանատվության միջոցով երեխաների պաշտպանությունը ու ժեղացնելն է հանցավոր արարքներից, որոնք կապված են երեխայի սեռական շահագործման (հոդված 2) և մանկական պոռնոգրաֆիայի (հոդված 3) հետ: Շրջանակային նորմերը ամրագրում են համապատասխան հանցագործությունների հատկանիշները և սանկցիաները, որոնք պետք է ընդհանուր լինեն Եվրոպական Միության ողջ տարածքում:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում մեծ դեր ունի 1989թ.-ի նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, իսկ 2005թ.-ին ուժի մեջ է մտել Երեխայի իրավունքների մասի ՄԱԿ-ի կոնվենցիայի Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը: Արձանագրության համաձայն՝ անդամ պետություններում արգելվում է մանկավաճառությունը, երեխաների մարմնավաճառությունը, մանկական պոռնոգրաֆիան, ինչպես դանախատեսված է սույն արձանագրությամբ (հոդված 1):

Մարմնավաճառության դեմ պայքարի հարցում կարևոր է նաև ՀՀ-ի և ԱՄԷ-ի միջև 2009թ.-ի դեկտեմբերի 5-ին կնքված փոխըմբռնման հուշագիրը: Հուշագրի առաջին հոդվածի համաձայն՝ կողմերը ձեռնարկում են ազգային բոլոր միջոցներն ու ընթացակարգերը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարելու, դրա զոհերին պաշտպանելու և նրանց անհրաժեշտ օգնություն տրամադրելու համար: Հուշագրի կարևորությունը հատկապես կայանում է նրանում, որ ԱՄԷ-ն նպատակակետերկիր է համարվում Հայաստանից իրականացվող սեռական թրաֆիքինգի համար:

Ինչպես նշել ենք, կարևոր նշանակություն ունի արտասահմանյան երկրների օրենսդրության ուսումնասիրությունը: Հայաստանի իրավական համակարգը ավելի մոտ է ռոմանոգերմանականին, որը բնութագրվում է նրանով, որ իրավունքի հիմնական աղբյուրը համարվում է օրենքը²⁰¹: Այդ պատճառով ուսումնասիրությունը կսկսենք Մայրցամաքային Եվրոպայի երկրների օրենսդրությունից: Քննարկվող երևույթի հետ կապված հանցագործությունները բավականին մանրամասն կարգավորված են Գերմանիայի օրենսդրությամբ: Գերմանիայի քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի (հոդված 232), մարդկանց առևտրին օժանդակելու (233 a), երեխաների առևտրի

²⁰¹ St' u Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть. Монография / Под общ. и науч. ред. д. ю. н. проф. С. П. Щербы. М., издательство «Юрлитинформ», 2009, էջեր 29-43:

(հոդված 236) համար: Հոդված 232-ի առաջին մասի համաձայն՝ այլ անձին մարմնավաճառությամբ զբաղվելու կամ մարմնավաճառությամբ զբաղվելը շարունակելուն հարկադրելը, որը կատարվել է անօգնական վիճակը օգտագործելով, կամ անձին ստիպելը, որպեսզի թույլ տա իր նկատմամբ կատարել սեռական բնույթի գործողություններ՝ պատժվում է 6 ամսից 10 տարվա ազատազրկմամբ: Մարդկանց առևտրին օժանդակելու տակ Գերմանիայի օրենսդրությամբ հասկացվում է մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը և ստանալը: Այն պատժվում է 6 ամսից 5 տարի ժամկետով: Ըստ Գերմանական օրենսդրության՝ գոյություն ունի տարանջատում սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի և աշխատանքային շահագործման նպատակով մարդկանց առևտրի միջև: Մասնավորապես, Գերմանիայի քրեական օրենսգրքում գոյություն ունի առանձին հոդված, որը պատասխանատվություն է սահմանում աշխատանքային շահագործման նպատակով մարդկանց առևտրի համար (հոդված 233): Տուժողի նկատմամբ ներգործության միջոցները (բռնության գործադրումը, դրա սպառնալիքը, խաբեությունը, տուժողի անօգնական և խոցելի վիճակի օգտագործումը, խարդախությունը) Գերմանիայի օրենսդրությամբ հանցակազմի պարտադիր հատկանիշներ են:

Մարդկանց առևտրի և ստրկավաճառության համար պատասխանատվություն է նախատեսված Նիդերլանդների Թագավորության օրենսդրությամբ ևս: Ըստ Նիդերլանդների քրեական օրենսգրքի հոդված 274-ի՝ անձը ենթակա է քրեական պատժի, եթե իր կամ այ անձի շահերից ելնելով՝ զբաղվում է ստրկավաճառությամբ կամ դիտավորությամբ մասնակցում է այլ անձի ստրկավաճառությանը: Նիդերլանդներում, ի տարբերություն ՀՀ-ի և մի շարք այլ երկրների, մարմնավաճառությունը թույլատրված է 1998թ.-ի հունվարի 1-ից, երբ այն սահմանվեց որպես օրինական մասնագիտություն: Նույնիսկ օրենքով մարմնավաճառների համար գործում է սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, կավատությանը

և մարմնավաճառությունը նպաստելը արգելված է: Հոդված 250-ի առաջին մասի համաձայն՝ պատասխանատվություն է նախատեսվում այլ անձին մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելու համար, որը կատարվել է ֆիզիկական կամ այլ բռնության, սպառնալիքի, իշխանությունը չարաչափելու, մոլորության մեջ գցելու կամ այլ գործողություններով, որոնք հանցավորի կարծիքով կստիպեն տուժողին զբաղվել մարմնավաճառությամբ: Հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է սահմանում այլ պետության տարածքում մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելու նպատակով անձին հավաքագրելու, տիրանալու, առևանգելու համար: Հոդվածի երրորդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն գործողությունների համար, որոնք կատարվել են անչափահասի նկատմամբ: Բացի այդ, պատասխանատվության է ենթակա նա, ով գիտենալով կամ կասկածելով, որ անձը հարկադրված է եղել զբաղվել մարմնավաճառությամբ, վերցնում է այդ արարքը իր հսկողության տակ: Նիդերլանդների օրենսդիրը պատիժ է սահմանում նրանց համար, ովքեր թեև չեն եղել մարդկանց առևտրի մասնակիցներ, բայց որևէ օգուտ են ստացել տուժողների մարմնավաճառությամբ զբաղվելուց: Այս նորմը, ըստ էության, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 262-ի՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը, համարժեքն է: Քրեական նորմերի իրագործման հարցում կարևոր դեր է կատարում Արտասահմանցիների մասին Նիդերլանդների օրենքը, որը մարդկանց առևտրի զոհերի և գործով վկաների համար ապահովում է կացության օրինական կարգավիճակի տրամադրում մինչև դատավարության ավարտը: 1988թ.-ին ընդունվել է օրենք, որը իրավունք է տալիս սեռական շահագործման զոհերին ժամանակավորապես ապրել Նիդերլանդներում: Կասկածը արդեն բավարար է, որ պեսզի անձին տրվի ապրելու իրավունք, մինչև կորոշվի՝ նամարդկանց առևտրի զոհ է, կամ կարող է վկայություն տալ դատարանում: Դատական գործնթացի ժամանակ այդ անձինք օգտվում են սոցիալական բոլոր երաշխիքներից, ստանում

իրավական, բժշկական, հոգեբանական օգնություներ: Նմանօրինակ իրավական ակտը անհրաժեշտություներ կանան 33-ում, ինչը կնպաստի սեռական շահագործման գոհերի շահերի պաշտպանությանը և դրա հետ կապված հանցագործություներին բացահայտմանը: Մինչդեռ 33-ում սեռական շահագործման, և ընդհանրապես մարդու թրաֆիքինգի գոհերի պաշտպանությանն ուղղված արդյունավետ միջոցառումներ պետության կողմից չեն իրականացվում: Թրաֆիքինգի գոհերի շահերի պաշտպանությամբ զբաղվում են առանձին հասարակական և միջազգային կազմակերպություներ, ինչը բավարար չէ այս հարցում լուրջ առաջընթաց ապահովելու համար:

Ավստրիայի քրեական օրենսգրքի հոդված 104-ի առաջին մասը 10-20 տարվա ազատազրկում է նախատեսում ստրկավաճառության համար: 2004թ-ին քրեական օրենսգրքում մարդկանց առևտրի համար պատասխանատվություներ սահմանող նորմ է ավելացվել (հոդված 104 a): Հոդվածի առաջին մասը մինչև երեք տարվա ազատազրկում է սահմանում նրանց համար, ովքեր հանցավոր եղանակների օգտագործմամբ հավաքագրում, թաքցնում կամ այլ եղանակով ստանում, տեղափոխում, փոխանցում կամ որևէ մեկին առաջարկում են այլ անձի՝ սեռական կամ աշխատանքային շահագործման կամ օրգանները վերցնելու նպատակով: Օրենքը հանցավոր եղանակ է համարում մոլորության մեջ գցելը, իշխանություներ չարաշահելը, տուժողի անօգնական կամ խոցելի վիճակի օգտագործումը, հոգեկան հիվանդության վիճակի օգտագործումը, անձի նկատմամբ հսկողություներ ստանալու նպատակով նրան վերահսկող անձին օգուտ տալը կամ ստանալը: Նշված արարքի կատարումը բռնության գործադրմամբ դիտարկվում է որպես հանցագործության ծանրացնող հանգամանք: Հետաքրքիր նորմ է պարունակում Ավստրիայի քրեական օրենսգրքը (հոդված 217-ի 2-րդ մաս), որը պատասխանատվություներ է նախատեսում անձին մարմնավաճառությամբ զբաղվելու և հարկադրելու համար, այն պետության տարածքում, որի քաղաքացին նա չի համարվում՝ անձին մոլորության մեջ գցելով կամ բռնություներ գործադրելով: Նույն հոդվածի առաջին մասը պատիժ է

սահմանում անձին մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով այլ պետություն տեղափոխելով, որի քաղաքացին նա չի համարվում կամ որը չի հանդիսանում նրա մշտական բնակության վայրը, նույնիսկ այն դեպքում, եթե տվյալ անձը եղել է մարմնավաճառ:

Ի տարբերություն շատ պետությունների օրենսդրության, Մակեդոնիայի քրեական օրենսգրքի հոդված 418-ն պատժ է սահմանում նրանց համար, ովքեր օգտվել են կամ այլ անձանց թույլ են տվել օգտվել այն անձի սեռական ծառայություններից, ով եղել է մարդկանց առևտրի զոհ և այդ հանգամանքը հայտնի է եղել նրանց: Ի դեպ, նմանատիպ նորմ գոյություն ունի նաև ՀՀ քր. օր-ում, որը պատասխանատվություն է սահմանում շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու համար (հոդված 133.3):

Ըստ Բելգիայի քրեական օրենսգրքի հոդված 380-ի՝ անձը ենթակա է պատժի, եթե այլ անձի սեռական ցանկությունը բավարարելու համար հավաքագրում, տեղափոխում կամ իր մոտ պահում է չափահաս անձի, որպեսզի ներգրավի նրան անառակաբարո գործողությունների կամ մարմնավաճառության մեջ²⁰²: Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են արարքի կատարումը խաբեությամբ, սպառնալիքով, հարկադրանքի կիրառմամբ, տուժողի հղիությունը, ֆիզիկական կամ հոգեկան անլիարժեքությունը օգտագործելը: Հոդվածի 5-րդ մասում նշված են առավել ծանրացնող հանգամանքերը, այն է՝ հանցագործության կատարումը անչափահասի կամ 10 տարին չլրացած անձի նկատմամբ: Քրեափրավական նորմերը լրացվում են 1995թ.-ից երկրում գործող Մարդկանց առևտրի և մանկական պռնոգրաֆիայի դեմ պայքարի մասին օրենքով²⁰³:

Թուրքիայի օրենսդրությամբ չի նշվում սեռական շահագործման մասին, հիշատակվում է միայն շահագործման նպատակով իրականացրած գործողությունների համար պատասխանատվության մասին: Թուրքիայի քրեական օրենսգիրքը

²⁰² St' u Уголовный кодекс Бельгии. Науч. ред. и предисловие Н. И. Маунева, пер. с французского Г. И. Мачковского. СПб., 2004:

²⁰³ St' u Синицын Ф. Л. Зарубежное законодательство по проблеме торговли людьми. Криминологический ежеквартальный альманах. Вып. 3. М., Юристы, 2003, էջ 114:

տալ իս է մարդու շահագործման եղանակները և դրա համար նախատեսում 5-10 տարվա պատիժ կամ տուգանք 1 մլրդ. Լիրայի չափով: Եթե հանագործությունը կատարվում է կազմակերպված խմբի կողմից, պատիժը կրկնապատկվում է:

Իսպանիայի 1995թ.-ի քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների համար²⁰⁴: Սակայն, օրենսգրքում բացակայում են սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի և ստրկավաճառության համար պատասխանատվություն սահմանող նորմերը: Հոդված 187-ի համաձայն՝ պատասխանատվության է ենթակա նա, ով 18 տարին չլրացած կամ հոգեկան հիվանդությամբ տառապող անձին ստիպում, դրդում կամ օժանդակում է զբաղվել մարմնավաճառությամբ: Ավելի խիստ պատիժ է առաջանում այն անձի համար, ով բռնություն գործադրելով, օգտագործելով տուժողի անօգնական կամ կախյալ վիճակը, ստիպում է նրան զբաղվել մարմնավաճառությամբ կամ բռնի պահում է նրան այդ վիճակում: Դրա առավելագույն պատիժը 4 տարի է կամ խոչոր տուգանք: Օրենսգրքի հոդված 189-ը պատասխանատվություն է սահմանում այն անձի անգործության համար, ում հսկողության, խնամքի կամ պառչ պանության տակ գտնվող անձը զբաղվում է մարմնավաճառությամբ: Անգործությունը պատժվում է այն դեպքում, երբ անձը չի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները այդ վիճակը դադարեցնելու համար կամ չի դիմել իշխանություններին, եթե խնամարկյալին պաշտպանելու համար միջոցների կարիք ունի:

Լեհաստանի Հանրապետության 1998թ.-ի քրեական օրենսգիրքը հոդված ունի, որով պատասխանատվություն է առաջանում մարմնավաճառությամբ զբաղվելու ներգրավվելու համար²⁰⁵: Հոդված 203-ը 1-10 տարվա ազատազրկում է սահմանում այն անձի համար, ով բռնության, անօրինական սպառնալիքի, խաբեության կամ

²⁰⁴ St' u Уголовный кодекс Испании. Под ред. и предисловием д. ю. н. проф. Н. Ф. Кузнецовой и д. ю. н. проф. Решетникова. М., 1998:

²⁰⁵ St' u УК Республики Польши / Пер. с польского Барилович Д. А. и др. Науч. ред. Е. А. Саркисова, А. И. Лукашов. Под общей ред. Н. Ф. Кузнецовой. М., Тесей, 1998:

օգտագործելով կախվածությունը կամ ծայրահեղ վիճակը՝ այլ անձին մղում է զբաղվել մարմնավաճառությամբ: Սակայն, գտնում ենք, որ սանկցիայի սահմանները անհարկի ընդլայնված է: Ըստ հոդված 204-ի՝ պատասխանատվության է ենթակա նա, ով նյութական շահ ստանալու նպատակով այլ անձի դրդում է զբաղվել մարմնավաճառությամբ կամ հեշտացնում է դա կամ նյութական օգուտ է ստանում այլ անձի մարմնավաճառությամբ զբաղվելուց: Լեհաստանի օրենսդրությամբ ավելի խիստ պատժի են արժանի նրանք, ովքեր մարմնավաճառության մեջ են ներգրավում մանկահասակներին կամ մարմնավաճառության նպատակով այլ անձանց տեղափոխում են արտերկիր:

ԱՊՀ երկրների քրեական օրենսդրությունը նույապես հիմնականում հիմնված է իրավունքի մայրցամաքային համակարգի վրա: Որոշ բացառություններով, հետխորհրդային բոլոր պետությունների օրենսդրությունները քննարկվող երևույթին վերաբերող նորմեր են պարունակում: Ուսումնասիրվող երևույթին առնչվող հանցագործությունների համար պատասխանատվությունը ավելի մանրամասն կարգավորված է Բելառուսի քրեական օրենսգրքով, որը ուժի մեջ է մտել 2001թ.-ին: Ինչպես և ՀՀ քրեական օրենսգրքում, Բելառուսի քրեական օրենսգրքում ևս այդ հանցագործությունները գետեղված են տարբեր գլուխներում: Այսպես, օրենսգրքի գլուխ 20-ում՝ «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ», ընդգրկված են հոդված 171-ը՝ մարմնավաճառությամբ զբաղվելը օգտագործելը կամ մարմնավաճառությամբ զբաղվելու համար պայմաններ ստեղծելը, հոդված 171¹-ը՝ մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավելը կամ մարմնավաճառությամբ զբաղվելը շարունակելուն հարկադրելը: Իսկ գլուխ 22-ում՝ «Անձնական ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ», տեղադրված են հոդված 181-ը՝ մարդկանց առևտուրը, հոդված 187-ը՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, 187¹-ը՝ ապօրինի գործողությունները ուղղված

քաղաքացիներին արտերկրում աշխատանքի տեղավորելուն: Այս հոդվածները վերաբերում են անձանց սեռական շահագործմանը՝ մարմնավաճառությամբ զբաղվելու եղանակով: Դրանց թվին կարելի է դասել նաև հոդված 182-ը՝ մարդուն առևանգելը, որը ունի ծանրացնող հանգամանք՝ նույն արարքի կատարումը՝ «սեռական կամ այլ շահագործման նպատակով»: Մեր կարծիքով ՀՀ օրենսդիրը ավելի ճիշտ է վարվել՝ մարդու թրաֆիքինգին վերաբերող հոդվածում առևանգումը նշելով որպես արարքի կատարման եղանակ: Բելառուսի օրենսդրությունը բավականին խիստ պատիժներ է նախատեսում ուսումնասիրվող կատեգորիայի հանցագործությունների համար: Օրինակ՝ մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելը պատժվում է մինչև 10 տարվա ազատազրկմամբ, իսկ մարդկանց առևտրի առավել ծանրացնող տեսակի համար սահմանված է մինչև 15 տարվա ազատազրկում:

Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքում սեռական շահագործմանը նվիրված են մի քանի հոդվածներ, որոնք տարբերակված են ըստ տուժողի տարիքի և արարքի կատարման եղանակի: Օրենսգրքի հոդված 128-ը պատասխանատվություն է սահմանում մարդկանց առևտրի համար: Մարդկանց առևտուրը բնորոշվում է որպես անձի առքը և վաճառքը կամ նրա նկատմամբ կատարված այլ գործողությունները, ինչպիսիք են՝ շահագործումը կամ հավաքագրելը, տեղափոխումը, հանձնելը, թաքցնելը, ինչպես նաև շահագործման նպատակով կատարված այլ գործողությունները: Քրեափրավական նորմի նման կառուցվածքը չի կարելի հաջողված համարվել: Ըստ դիսպոզիցիայի՝ շահագործումը բնորոշված է որպես շահագործման նպատակով կատարված հավաքագրելը, հանձնելը, թաքցնելը և այլն: Հոդվածի ծանրացնող տեսակներից է նույն արարքի կատարումը ակնհայտ հղի կնոջ նկատմամբ և տուժողի նյութական կամ այլ կախյալ վիճակը օգտագործելով: Ղազախստանի քրեական օրենսգրքում մարդուն առևանգելու (հոդված 125) և ազատությունից ապրիլի գրկելու (հոդված 126) հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նշված է այդ արարքների կատարումը

շահագործման նպատակով: Ըստ Ղազարյանի օրենսդրության՝ շահագործումը հասկացվում է ն՝ սեռական, ն՝ աշխատանքային ձևերով: Օրենսգրքի հոդված 133-ը պատասխանատվություն է սահմանում անչափահասների առևտրի համար:

Վրաստանի օրենսդրությունը նույնպես նորմեր է պարունակում դիտարկվող արարքների վերաբերյալ: Մասնատրապես, Վրաստանի քրեական օրենսգրքով պատասխանատվություն է առաջանում սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի և ստրկավաճառության համար²⁰⁶:

Մոլդովայի քրեական օրենսգրքի հոդված 165-ի առաջին մասի համաձայն՝ մարդկանց առևտուրը անձին կոմերցիոն կամ ոչ կոմերցիոն սեռական շահագործման, աշխատանքային շահագործման, ստրկության կամ դրան նմանվող պայմաննորում շահագործելը, պատերազմական գործողություններում կամ հանցավոր գործունեության մեջ օգտագործելը կամ փոխադաստման համար օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով հավաքագրելը, տեղափոխելը, հանձնելն է, որը կատարվում է՝ ա) կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելով կամ դրա սպասռնակիքով, այդ թվում՝ առևանգելու, փաստաթղթերը վերցնելու և անձին կախյալ վիճկում պահելու, բ) խաբեության, գ) վիճակի խոցելիությունը կամ իշխանությունը չարաչափելու, այլ անձին վերահսկող անձի թույլ տվությունը ստանալու համար գումար կամ այլ օգուտ ստանալով կամ տալով: Ըստ Մոլդովայի քրեական օրենսգրքի՝ սանկցիաները բավականին խիստ են, հոդված 165-ի առաջին մասը նախատեսում է 7-15 տարի ազատազրկում: Հանցակազմի ծանրացնող տեսակը պատժվում է 10-20 տարվա ազատազրկմամբ: Հանցագործության առավել ծանրացնող տեսակի (արարքի կատարումը հանցավոր խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից, և նույն արարքի կատարումը, որը առաջացրել է ծանր մարմնական վնասվածք, հոգեկան

²⁰⁶ Ст'а Уголовный кодекс Грузии / Науч. ред. З. К. Бигвава. Пер. с грузинского И. Мериджинашвили. СПб., 2002:

խանգարում կամ տուժողի մահ) պատժվում է 15-25 տարվա կամ ցմահ ազատազրկմամբ: Իսկ Մոլդովայի քր. օր-ի հոդված 206-ը պատասխանատվություն է նախատեսում երեխաների առևտրի համար:

Ուկրաինայի քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված մարդկանց առևտրի կամ մարդուն հանձնելուն առնչվող այլ անօրինական համաձայնության համար (հոդված 149): Այս դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում մարդկանց առևտրի կամ այլ ապօրինի համաձայնության կայացման համար, որի օբյեկտը մարդն է, ինչպես նաև անձին տեղափոխելու, հավաքագրելու, թաքցնելու, հանձնելու կամ ստանալու համար, որը կատարվել է շահագործման նպատակով՝ խաբեության, շորթման կամ անձի խոցելի վիճակն օգտագործելով:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՌԴ-ում մարմնավաճառության մեջ զբաղվելը քրեականացված չէ: Դրա համար սահմանված է վարչական պատասխանատվություն: Սակայն, Ռուսաստանի քրեական օրենսգրքը նորմեր է պարունակում մարմնավաճառության հետ կապված հանցավոր արարքների վերաբերյալ: Մասնավորապես, օրենսգրքի հոդված 127.1-ը պատժելի է համարում մարդկանց առևտուրը: Ըստ այդ հոդվածի՝ մարդու առք ու վաճառքը, մարդու նկատմամբ այլ գործարքները, ինչպես նաև շահագործման նպատակով հավաքագրելը, տեղափոխելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը պատժվում է մինչև 6 տարի ազատազրկմամբ: Հոդվածի 2-րդ մասում առկա են ծանրացնող հանգամանքներ՝ արարքի կատարումը՝ ա) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, բ) անկհայտ անչափափասի նկատմամբ, գ) տուժողին ՌԴ պետական սահմանը տեղափոխելով կամ արտասահմանում ապօրինի պահելով, դ) պաշտոնական դիրքն օգտագործելով, ե) կեղծ փաստաթղթեր օգտագործելով, ինչպես նաև տուժողի անձը հաստատող փաստաթղթերը թաքցնելով, վերցնելով կամ ոչնչացնելով, զ) բռնությամբ կամ բռնությամբ գործադրելու սպառնալիքով, է) տուժողի օրգանները վերցնելու նպատակով, ը) անօգնական կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ, թ) անկհայտ հղի կնոջ նկատմամբ: Հոդվածի երրորդ մասը

նախատեսում է առավել ծանրացող հանգամանքներ՝ նույն արարքը, որը՝ ա) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, առողջությանը ծանր վնաս կամ այլ ծանր հետևանքներ, բ)կատարվել է մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր եղանակով, գ)կատարվել է կազմակերպված խմբի կողմից: ՌԴ քր.օր.-ի հոդված 127.1-ի և ՅՅ քր. օր հոդված 132-ի միջև, ինչպես տեսնում ենք, կան որոշակի տարբերություններ: ՌԴ օրենսդրության տարբերությունն այն է, որ որպես ծանրացող հանգամանք նախատեսված է արարքի կատարումը՝ անչափահասի նկատմամբ: ՅՅ օրենսդիրը այդ հարցը լուծել է առանձին հոդվածի շարադրման եղանակով (հոդված 132.2.՝ երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը): Կարծում ենք, ՌԴ-ի օրենսդրի մոտեցումը ավելի արդարացված է, քանի որ նպատակահարմար չէ ընդհանուր հանցակազմից առանձնացնել մեկ այլ հոդված՝ ելնելով միայն տուժողի անձը բնութագրող հատկանիշներից: Բացի այդ, ՌԴ քր. օր.-ի նշված հոդվածում տուժողի օրգանները վերցնելու նպատակը նշված է որպես ծանրացնող հանգամանք, իսկ ՅՅ օրենսդիրը այն նշել է համապատասխան հոդվածի ծանոթագրության մեջ՝ որպես շահագործման նպատակ:

ՌԴ քր. օր.-ի հոդված 127.1-ը նաև խրախուսական նորմ է պարունակում, ըստ որի՝ հոդվածի առաջին մասի կամ երկրորդ մասի ա կետով նախատեսված արարքը առաջին անգամ կատարած անձը, որը ինքնակամ ազատ է արձակել տուժողին և նպաստել հանցագործության բացահայտմանը, ազատվում է պատասխանատվությունից, եթե նրա գործողություններում այլ հանցակազմ չկա: Մեր կարծիքով ՅՅ քրեական օրենսգրքում էլ խրախուսական նորմի նախատեսումը դրական ազդեցություն է կունենա տուժողների պաշտպանության հարցում:

ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 240-ով պատասխանատվություն է սահմանված մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավվելու

համար: Իսկ հոդվածի 2-րդ մասում ներառված են արաբի ծանրացնող տեսակները՝ նույն արարքը, որը կատարվել է՝ ա) բռնությամբ կամ բռնության գործադրման սպառնալիքով, բ) տուժողին ՌԴ պետական սահմանը տեղափոխելով կամ արտասահմանում ապօրինի պահելով, գ) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Ի տարբերություն ՌԴ-ի ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 261-ում բացակայում է այնպիսի ծանրացնող հանգամանք, ինչպիսին՝ արարքի կատարումը բռնությամբ կամ բռնության գործադրման սպառնալիքով: Մեր կարծիքով ՀՀ օրենսդիրը ավելի խելամիտ է վարվել նման ծանրացնող հանգամանք չնախատեսելով, քանի որ անձին արձնակության ներգրավելը բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքով ըստ երկրյան մարդու թրաֆիքինգն է: Այս հոդվածի 3-րդ մասը ներառում է առավել ծանրացնող հանգամանքները՝ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքի կատարումը՝ ա) կազմակերպված խմբի կողմից, բ) անկնհայտ անչափահասի նկատմամբ: Ռուսաստանի քրեական օրենսգրքի հոդված 241-ը պատիժ է սահմանում մարմնավաճառությամբ զբաղվելը կազմակերպելու համար, որի համաձայն՝ այլ անձանց մարմնավաճառությամբ զբաղվելը կազմակերպելուն ուղղված գործողությունները, ինչպես նաև մարմնավաճառությամբ զբաղվելու համար հաստատություն պահելը կամ մարմնավաճառությամբ զբաղվելու համար տարածքի պարբերաբար տրամադրելը պատժվում է ...: Հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ներառում են ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները, որոնք գրեթե նույնն են, ինչ հոդված 240-ի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները:

ԱՄՆ-ի Օրենքների ժողովածուի առաջին մասի 18-րդ բաժինը պարունակում է մի շարք գլուխներ, որոնք պատասխանատվություն են նախատեսում քննարկվող հանցագործությունների համար²⁰⁷: ԱՄՆ-ի օրենքների ժողովածուն քննարկվող արարքների հետ կապված պարունակում է հետևյալ գլուխները՝ գլուխ 77-ը (ստրկություն և

²⁰⁷ Տե՛ս USA.Kode collection // Cornell University Law school / www.law.Cornell.Edu:

թրաֆիքինգ), գլուխ 110-ը (սեռական շահագործումը և երեխաների նկատմամբ այլ գործողությունները), գլուխ 117-ը (անօրինական սեռական գործունեության նպատակով անձի տեղափոխումը կամ դրա հետ կապված հանցագործությունները): ԱՄՆ-ում մարդկանց առևտրի դեմ ուղղված մի շարք իրավական ակտեր են գործում: 1910թ.-ին ընդունվել է Սպիտակ ստրկության մասին օրենքը (Mann Act կամ White Slave Traffic Act): Փաստաթուղթը ուղղված է մարմնավաճառության նպատակով անձանց ապօրինի տեղափոխման դեմ: Օրենքի համաձայն՝ պատասխանատվության է ենթակա նա, ով դիտավորության մեջ այլ անձի տեղափոխում է նահանգի կամ պետության սահմանով՝ մարմնավաճառության կամ այլ սեռական շահագործման մեջ ներգրավելու նպատակով: Այդպիսի գործողություններ կատարելու տուժողի համաձայնությունը հանցավորի մեղքը չեն թեթևացնում: Mann Act-ի դրույթները հիմք ծառայեցին արդեն հիշատակված ԱՄՆ-ի օրենքների ժողովածուի 18-րդ գլխի նորմերի համար: Անհրաժեշտ է ընդգծել, որ ԱՄՆ-ի իշխանությունները կտրուկ միջոցներ են ձեռնարկել դիտարկվող երևույթի դեմ: Մասնավորապես, 2000թ.ի հոկտեմբերի 28-ին ԱՄՆ-ում թրաֆիքինգի զոհերի պաշտպանության մասին օրենք ընդունվեց, որը բավական խիստ պատասխանատվություն է սահմանում նման գործողությունների համար: Օրենքը լրացնում են Օրենքների ժողովածուի նոր պարագրաֆները, այդ թվում՝ § 1589 (հարկադիր աշխատանք), § 1591 (բռնության, խաբեության, հարկադրանքի միջոցով իրականացվող երեխաների սեռական առևտուրը): § 1591-ը պատասխանատվություն է սահմանում կոմերցիոն սեռական գործողություններին ներգրավելու նպատակով երեխաների առևտրի համար: Հանցավորներին սպառնում է մինչև 40 տարի ազատազրկում: Եթե նշված արարքը կատարվել է 14 տարին չլրացած անձի հանդեպ, մեղավորի նկատմամբ կարող է նշանակվել ցմահ ազատազրկում:

Իրենց առանձնահատկություններն ունեն Յեռավոր-Արևելյան Ասիայի պետությունների օրենսդրությունները, ինչը պայմանավորված է այդ տարածաշրջանում մարմնավաճառության

ծավալ ներով: Այսպես, Միգրացիայի Միջազգային Կազմակերպության տվյալներով Թայլանդում մարմնավաճառների թիվը հասնում է 200 հազարի²⁰⁸: Թայլանդի օրենսդրության մի շարք նորմեր նվիրված են մարմնավաճառության հետ կապված հանցագործություններին: Քրեական օրենսգրքի հոդված 283-ի համաձայն՝ անձը ենթակա է պատժի, եթե երրորդ անձի սեռական բավարարման համար հանդես է գալիս որպես միջնորդ, առաջարկում է այլ անձի կամ առաքում է նրան սեռական կապի համար՝ օգտագործելով խաբեություն, սպառնալիք, ֆիզիկական բռնություն, հակաբարոյական ներգործություն կամ հոգեկան բռնություն: Հոդված 283.2-ը պատասխանատվություն է սահմանում այդպիսի գործողությունների համար, որոնք կատարվել են անչափահասի նկատմամբ: Ըստ հոդված 284-ի՝ պատժելի է համարվում խաբեության, սպառնալիքի, ֆիզիկական բռնության, հակաբարոյական ներգործության կամ հոգեկան բռնության գործադրմամբ՝ սեռական շահագործման նպատակով անձին տեղափոխելը: Թայլանդում մեծ տարածում ունի սեքս-տուրիզմը, և մասնագետները դրանով են բացատրում, որ Թայլանդի օրենսդիրը մեծ ուշադրություն է դարձնում մարմնավաճառության շահագործման խնդրին: Հատկապես հրատապ է դառնում մանկական պոռնոգրաֆիայի խնդիրը, քանի որ մանկական մարմնավաճառությունը կազմում է Թայլանդի սեքս տուրիզմի բաղկացուցիչ տարրը²⁰⁹, իսկ մանկական պոռնոգրաֆիայի սիրահարները ողջ աշխարհից գալիս են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թայլանդը, Կամբոջան, Բրազիլիան²¹⁰:

Չինաստանի քրեական օրենսգիրքը նորմեր է պարունակում կանանց և երեխաների առևանգման համար, այդ թվում նաև մարմնավաճառությամբ զբղվելուն հարկադրելու, որոնց համար բավական խիստ պատիժներ է սահմանված²¹¹: Հոդված 240-ի համաձայն՝

²⁰⁸ Տե՛ս ILO. Action Against Trafficking in Human Beings. 2008:

²⁰⁹ Տե՛ս Манич Е. Г. Проституция. Крим. и уг. – правовые аспекты. Монография/ под ред. Н. П. Мелешко. М., юрлитинформ, 2011, էջ 21:

²¹⁰ Տե՛ս Миллеров Е. В. Уголовно-правовая охрана нравственности: диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Ростов-на-Дону, 2006, էջ 105:

²¹¹ Տե՛ս Уголовный кодекс КНР / Под ред. А. И. Коробеева, пер. с китайского Д. В. Вичикова. СПб., 2001:

առևանքումը, կնոջը կամ երեխային վաճառելու նպատակով խաբելը պատժվում է 5-10 տարվա ազատազրկմամբ, իսկ որպես լրացուցիչ պատիժ սահմանված է տուգանք: Ծանրացնող հանգամանքների դեպքում արարքը պատժվում է 10 և ավելի տարվա կամ ցմահ ազատազրկմամբ, լրացուցիչ պատիժ սահմանված է տուգանք կամ գույքի բռնագրավում, իսկ հանցակազմի առավել ծանրացնող տեսակը պատժվում է մահապատժով, որպես լրացուցիչ պատիժ նախատեսված է գույքի բռնագրավում: Հանցագործության առավել ծանրացնող տեսակ է առևանգվածին, խաբվածին մարմնավաճառության դեպքում զբաղվելու հարկադրելը կամ առևանգվածին, խաբվածին այլ անձի վաճառելը՝ մարմնավաճառության դեպքում համար: Իսկ հոդված 241-ով պատասխանատվության են նախատեսված առևանգված, խաբված կանանց կամ երեխաներին ձեռք բերվող համար՝ հետագայում վաճառելու նպատակով:

Պետք է նշել, որ մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից մարմնավաճառության շահագործման դեմ պայքարի մասին 1950 թ.-ի մարտի 26-ի կոնվենցիան (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից հաստատվել է 1949թ.-ի դեկտեմբերի 2-ին) պարտավորեցնում է անդամ պետությանն ներքին քրեականացնել մարմնավաճառությանը ներգրավելու և մարմնավաճառության դեպքում զբաղվելու հարկադրելու արարքները: Կոնվենցիայի հոդված 1-ի համաձայն՝ կողմերը պարտավորվում են պատժի ենթարկել յուրաքանչյուրին, ով այլ անձի սեռական կրքերը բավարարելու համար այլ անձի, նույնիսկ իր համաձայնության, դրդում կամ հակում է մարմնավաճառության: Այս ձևակերպումից պարզ է, որ մարմնավաճառությանը ներգրավելու գործողությունները պետք է ճանաչվեն հանցավոր ցանկացած դեպքում՝ անկախ հանցավորի կոմղից կիրառված եղանակի և բռնության առկայություն: Սակայն, որոշ պետություններում (ԱՊՀ երկրներ, բացի ՌԴ-ից, Մոլդովայից, Թուրքմենստանից), Իսպանիայում, Արգենտինայում, Պարագվայում և այլուր մարմնավաճառության ներգրավվելը պատժելի է միայն հատուկ

պայմանների առկայությունն դեպքում՝ բռնության գործադրում և դրա սպառնալիք, գույքի ոչնչացում, շորթում, խաբեություն, վստահության չարաշահում, անձի անօգնական վիճակի օգտագործում: Որոշ երկրներում հանցակազմի պարտադիր հատկանիշ է համարվում նպատակը՝ գույքային օգուտ ստանալը (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Դանիա և այլն): Մեր կարծիքով մարմնավաճառության ներգրավվելու անպատժելի լինելը չի կարելի արդարացված համարել, քանի որ այն նպաստում է մարմնավաճառության տարածմանը: Յետաքրքիր է նաև հենց մարմնավաճառության պատժելիության հարցը, այսինքն այն անձանց պատժելիության խնդիրը, ովքեր իրենց կամքով առաջարկում են սեռական բնույթի ծառայություններ: Մարմնավաճառությամբ զբաղվելու համար քրեական պատասխանատվություն է առաջանում Ալբանիայի, Իռլանդիայի, Թուրքմենստանի, Ուկրաինայի և ԱՄՆ-ի որոշ նահանգների օրենսդրությամբ: Թուրքմենստանի քրեական օրենսգրքի հոդված 138-ը պատիժ է սահմանում մարմնավաճառությամբ զբաղվելու համար, եթե դրա համար վարչական տույժի ենթարկված անձը մեկ տարվա ընթացքում կրկին կատարում է նույն արարքը: Իսկ Ուկրաինայի քրեական օրենսգրքով պատժելի է մարմնավաճառությամբ պարբերաբար զբաղվելը:

Մի շարք պետություններում քրեորեն պատժելի է ոչ թե մարմնավաճառությամբ զբաղվելը ընդհանրապես, այլ դրա հետ կապված վարքագծի որոշակի դրսևորումները: Օրինակ՝ մարմնավաճառի կողմից հանրային վայրում իր ծառայություններն առաջարկելը (Իսրայել, Չամբիա, Կանադա, Կիպրոս):

Բոլոր մահմեդական երկրներում, որտեղ քրեական օրենսդրությունը հիմնված է շարյաթի նորմերի վրա (Աֆղանստան, Իրան, Եմեն, Կատար, ԱՄԷ, Պակիստան, Սուդան), մարմնավաճառությունը համարվում է հանցագործություն: Շարիաթի համաձայն՝ մարմնավաճառության համար նախատեսված է մահապատիժ, եթե մեղավորը եղել է ամուսնացած, հակառակ պարագայում որպես պատիժ սահմանված է մտրակի հարյուր հարված:

Սակայն, պրակտիկայում այդ պատժի տեսակը գրեթե չի կիրառվում հանցագործության ապացուցման խիստ կանոնների պատճառով (պահանջվում է երկու տղամարդու կամ չորս կնոջ վկայություն)²¹²։ Բացի այդ, մահմեդական երկրներում լայնորեն տարածված է «կարճատև ամուսնությունների» երևույթը, որը կայացվում է հաճախորդի և մարմնավաճառի միջև մեկ գիշերով։ Այդ եղանակով սեռական ծառայությունը իսլամական իրավունքի առջև միանգամից ձեռք է բերում օրինական բնույթ։ Այն պետություններում, որտեղ մարմնավաճառությունը պաշտոնապես թույլատրված է, սահմանված են հատուկ կանոններ, որոնց խախտումը առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն։ Օրինակ՝ Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում և այլուր այդպիսի խախտումները համարվում են հանցագործություն և պատժվում են։ Նման խախտում է դիտարկվում, օրինակ՝ հանրային վայրում սեռական ծառայությունների առաջարկելը։ Այսպես, Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 184a-ն՝ «Արգելված մարմնավաճառությամբ զբաղվելը», պատասխանատվություն է նախատեսում նրա համար, ով համառորեն խախտում է սահմանված որոշակի վայրերում կամ օրվա որոշակի ժամերին մարմնավաճառությամբ զբաղվելը արգելող կանոնները։ Ինչ վերաբերում է մարմնավաճառության պատժելիության հարցին, կարծում ենք մարմնավաճառությամբ զբաղվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը հիմնավորված չէ, քանի որ մարմնավաճառությամբ զբաղվելը չունի այնպիսի հանրային վտանգավորություն, որպեսզի համարվի հանցագործություն։ Այսպիսով, կարելի է ասել, որ մարմնավաճառությամբ զբաղվելու հետ կապված հանցագործությունները (հատկապես մարդկանց առևտուրն ու երեխաների սեռական շահագործումը) գտնվում են միջազգային իրավունքի ուշադրության կենտրոնում։ ՀՀ օրենսդրությունը լիովին համապատասխանում է միջազգային

²¹² St'u Смирнов Ю.П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Дисс. канд. юрид. наук. М., 2010, էջ 90:

իրավական ակտերին, բացի այդ, ՀՀ-ը տարբեր պետության ղեկավարի հետ համագործակցում է այդ երևույթի դեմ պայքարում: Մարմնավաճառության խնդիրը տարբեր կերպ է արժարժվում արտասահմանյան երկրների օրենսդրությամբ: Ինչպես ՀՀ-ում, շատ պետություններում ևս մարմնավաճառությանը քրեականացված է և պատժվում է վարչական տույժով:

Մեր կարծիքով, արտասահմանյան երկրների օրենսդրությունները պարունակում են որոշ նորմեր, որոնց՝ համապատասխան փոփոխություններով ներդրումը ՀՀ օրենսդրության մեջ, օգտակար կլինեի քննարկվող երևույթի և նրան առնչվող հանցագործությունների դեմ պայքարի հարցում: Դրան ավելի մանրամասն կանդիդատանք հաջորդ պարագրաֆում:

§ 2. Մարմնավաճառության կանխարգելման միջոցառումները ՀՀ-ում

Բոլոր ժամանակներում յուրաքանչյուր հասարակության կարևոր խնդիրներից մեկը եղել է մարմնավաճառության տարածման սահմանափակման հարցը: Պատմական փորձի ուսումնասիրությունը կնպաստի մարմնավաճառության դեմ պայքարում սխալներից խուսափելուն: Գոյություն ունի պատմականորեն ձևավորված մարմնավաճառության դեմ պայքարի երեք ուղղություններ՝ արոգիբիցիոնիզմ, ռեգլամենտարիզմ, արդիցիոնիզմ:

Պրոգիբիցիոնիզմը (մարմնավաճառության արգելման մարտավարությունը) մարմնավաճառության դեմ պայքարում ձևավորված եղանակներից առաջինն է: Այս ուղղությունը ձևավորվել է միջին դարերում, երբ ստեղծվեց աննախադեպ կոշտ միջոցների համակարգ, որը կիրառվում էր մարմնավաճառների դեմ²¹³:

Աստիճանաբար մարմնավաճառության դեմ պայքարի համաշխարհային պրակտիկան ցույց տվեց, որ արգելքների համակարգը անարդյունավետ է այս հարցում: Ժողովրդավարության գաղափարների տարածմանը գուցենթաց առաջնային դարձան

²¹³ Sté u Ефременков В. Т. Регламентация проституции во Франции. СПб., 1981, էջ 3:

քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Չարգացած երկրներում պրոգիբիցիոնիզմի անարդյունավետությունը գիտակցվեց 18-19 դարերում: Չնայած դրան, մի շարք երկրներում մինչ օրս պրոգիբիցիոնիզմը մարմնավաճառության դեմ պայքարի հիմնական ուղին է: Այդպես է նաև ԱՄՆ-ի որոշ նահանգներում՝ Կալիֆորնիայում, Նյու Յորքում: Որպես մարմնավաճառության կանխարգելման ուղի պրոգիբիցիոնիզմին փոխարինեց ռեգլամենտարիզմը: Մարմնավաճառության ռեգլամենտացիայի (կանոնակարգման) կողմնակիցների գլխավոր փաստարկը մարմնավաճառության առկայությունն է իրականության մեջ²¹⁴: Նրանք համարում են, որ մարմնավաճառությունը, որպես երևույթ, անհնար է արմատախիլ անել, այդ պատճառով անհրաժեշտ է «վերցնել հսկողության տակ»՝ հասարակությանը դրա որոշ վնասակար հետևանքներից զերծ պահել ու նպատակով: Մարմնավաճառության ռեգլամենտացիան այդ գործունեությամբ զբաղվելու թույլ տվությունն է գրանցվելու և հսկողության սահմանված կանոններին ենթարկվելու պայմանով: Ռեգլամենտարիզմը մի շարք դեպքերում կարող է դիտարկվել և որպես մարմնավաճառների եկամուտների հսկողության միջոց, որը հատկապես արտահայտվում է սեքս-տուրիզմի ավանդական կենտրոններ հանդիսացող երկրներում: Այդտեղ մարմնավաճառությունը դիտարկվում է որպես պետական բյուջեի համալրման աղբյուր: Այդպիսի պետության հատկանշական օրինակ է Թայանդը, ուր որոշ տվյալներով մարմնավաճառությամբ զբաղվում է յուրաքանչյուր երկրորդ կինը²¹⁵:

Աբուլիցիոնիզմի առաջացումը կապված է հասարակական գործիչ Ջոզեֆինա Բատլերի անվան հետ: 1870թ.-ին նրա ջանքերով Լոնդոնում հիմնադրվեց աբուլիցիոնիստների միջազգային ֆեդերացիա՝ հասարակական կազմակերպությունը, որի խնդիրն էր կանանց և երեխաների վաճառքի դեմ պայքարը: Ստրկությունը, բնորոշելով

²¹⁴ Տե՛ս Գолосенко И. А., Голод С. И. Социологические исследования проституции в России. СПб., 1998, էջ 109:

²¹⁵ Տե՛ս Мартынов И. Без красных фонарей на площадь Пигаль // мегаполис-экспресс. 1991, №40, էջ 9:

որպես մարդու՝ իր կյանքը տնօրինելու անհնարինություն, արվիցիոնիստները մարմնավաճառությունը հռչակեցին որպես ստրկության ժառանգություն: 19-20-րդ դարերում արևոցիոնիզմի գաղափարները ժողովրդականություն էին վայելում մի շարք պետություններում²¹⁶:

Արվիցիոնիզմի եությունը կայանում է նրանում, որ նրա կողմնակիցները, արդարացնելով մարմնավաճառներին և մարմնավաճառության գոյության հարցում, մեղադրելով հանրությանը՝ գտնում են, որ պայքարել պետք է ոչ թե մարմնավաճառների դեմ, ովքեր մարմնավաճառության կրողներն են, այլ մարմնավաճառության դեմ՝ որպես երևույթի²¹⁷ : Արվիցիոնիստները պահանջում էին, որպեսզի մարմնավաճառներին տրվեին քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, որից նրանք զրկված էին արագիբիցիոնիզմի, մասամբ էլ՝ ռեզլամենտարիզմի պայմաններում: Այդ պահանջները հիմնավորում էին նրանով, որ մարմնավաճառության առկայության համար մեղավոր են հասարակությունն ու պետությունը, այդ պատճառով էլ պետությունը իրավունք չունի մարմնավաճառների հանդեպ կիրառել պատժիչ միջոցառումներ, այդ թվում՝ սահմանափակել նրանց իրավունքները: Ընդ որում, նրանց կողմից որպես մարմնավաճառության պատճառ դիտարկվում էին հասարակական ախտերը, առանց որոնց հաղթահարման, մարմնավաճառության հաղթահարման մասին խոսելը անիմաստ է²¹⁸ : Արվիցիոնիզմի գաղափարները իրենց ամբողջությամբ արդարացրեցին միայն Անգլիայում և Նիդերլանդներում, որտեղ մարմնավաճառները արդեն 20-րդ դարի սկզբին ստացան քաղաքացիական իրավունքների ու ազատությունների ամբողջությունը²¹⁹:

Մեր կարծիքով մարմնավաճառության կանխարգելման միջոցառումներ մշակելիս հարկավոր չէ սկենզվել բերված

²¹⁶ Տե՛ս Броннер В. М., Елистратов А. И. Проституция в России до 1917г. Борба с проституцией в РСФСР. М., 1927, էջ 33:

²¹⁷ Տե՛ս Воронова З. Проституция и закон // Женское дело. СПб., 1900, №4 էջ 52:

²¹⁸ Տե՛ս Блох И. Половая жизнь нашего времени и ее отношение к современной культуре. СПб., 1910 էջ 59:

²¹⁹ Տե՛ս Не первая и не древнейшая // Эхо планеты, 1989, №33, էջ 29:

ուղղութիւններին որնէ մեկի վրա: Արդյունավետ կարող է լինել նշված ուղղութիւններին գուգակցումը:

Հեղինակների մեծ մասը առաջարկում է վերացնել մարմնավաճառութիւնը համար նախատեսված վարչական պատասխանատվութիւնը ²²⁰: Այս մոտեցման կողմնակիցները առաջարկում են պայքարել մարմնավաճառութիւնը ծնող հանգամանքների դեմ՝ այդպիսիք համարելով բարոյական գործոնները: Մասնավորապէս, նշվում է, որ մարմնավաճառութիւնը հակազդման գործում հիմնական ջանքերը պետք է ուղղվեն հասարակութիւնը բարոյական վերածննդին, հասարակութիւնը արժեքային համակարգի վերականգնմանը, իսկ դրանց կարելի է հասնել մշակութային և դաստիարակչական աշխատանքների միջոցով ²²¹: Գիտնականների այս խմբի կողմից կարևորվում է վաղ կանխարգելման դերը, նրանք գտնում են, որ կանխարգելման աշխատանքները պետք է իրականացվեն շատ ավելի վաղ, քան անձի մոտ կառաջանա մարմնավաճառութիւնը՝ զբաղվելու վտանգը: Վաղ կանխարգելման օբյեկտ համարվում են հասարակութիւնը բոլոր անդամները, այլ ոչ թե միայն նրանք, ովքեր արդեն գտնվում են սոցիալապէս վտանգավոր իրավիճակում: Ըստ նրանց՝ կանխարգելման միջոցառումների ակտիվ մասնակիցներ պետք է լինեն նախնառաջ ընտանիքն ու ուսումնական հաստատութիւնները: Այս հեղինակները հարցի լուծման համար առաջարկում են դպրոցական ծրագրում ներառել սեռական դաստիարակութիւնը, առարկան, ծնողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ, նրանց տրամադրել երեխաների սեռական զարգացման համար անհրաժեշտ գրականութիւն և կատարել դաստիարակչական բնույթի այլ միջոցառումներ: Ինչ խոսք, վաղ կանխարգելումը ունի մեծ նշանակութիւն և դրակարևորութիւնը դժվար է գերազնահատել:

²²⁰ St' u Габиани А. А. О правовых мерах по ограничению проституции и ее социально опасных последствий // Советское государство и право. 1991 №2, էջ 72

²²¹ St' u Левчук Д. Г., Потаповская О. М. Духовно- нравственное воспитание молодежи России. Комплексное решение проблемы. М., 2003, էջ 3:

10 St' u Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջեր 142-158:

Ինչպես նշվել է գրականության մեջ, կրիմինալ ոգիայի համար վաղուց արդեն աբսիոմ է դարձել այն, որ հանցավորության դեմ պայքարում ամենակարևորը վաղ կանխարգելումն է, որը կայանում է անձի ձևավորման համար պատշաճ պայմաններ ստեղծելու, իսկ հետո նաև թույլ չտալու, որպեսզի ուղղակի հակահասարակական վարքագիծը վերածի հանցագործության²²²:

Մասնագետների կողմից առաջարկվող հաջորդ միջոցը, որը ուղղված է մարմնավաճառության կանխմանը՝ զանգվածային լրատվամիջոցների և համացանցի կանոնակարգումն է²²³ : Յեռուստատեսությամբ բռնության և դաժանության քարոզը կանխելու համար Օ.Պրիստանսկայան առաջարկում է ստեղծել էթիկայի հանձնաժողովներ, որոնք կհետևեն հեռուստաընկերությունների կողմից օրենսդրության կատարման ընթացքին²²⁴ : Յեռուստատեսության բացասական ներգործությունը երեխաների հոգեբանության վրա բազմիցս նշվել է քրեագետների կողմից²²⁵ : Ցանկանում ենք արձանագրել, որ ներկայումս ՀՀ-ում հեռուստատեսության հետ կապված հիշատակված խնդիրը օրենսդրորեն կարգավորված է: Այսպես, հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքի հոդված 24-ի համաձայն՝ արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել բռնության, դաժանության, պոռնկագրության տարածման նպատակով: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ հեռուստալիքները ոչ միշտ են կատարում հիշատակված նորմի պահանջները: Մասնավորապես, հեռուստատեսությամբ ցուցադրվող հաղորդումներում հաճախ կարելի է հանդիպել բռնության և դաժան տեսարանների: Կարծում ենք՝ այս հարցում լիազոր մարմինը պետք է ավելի հետևողական լինի: Յեռուստատեսությամբ պոռնկագրական բնույթի

²²² Տե՛ս Անտոյան Յ. Մ., Բորոդին Ս. Վ. Преступное поведение и психологические аномалии /Под. ред В. Н. Кудрявцева. М., 1998, էջ 187:

²²³ Տե՛ս Пристанская О. В. Правовая защита несовершеннолетних в сфере массового сексуального просвещения // Журнал российского права. 2000. №1, էջ 42:

²²⁴ Տե՛ս Федик Е.Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеринбург, 2003, էջեր 156-157:

²²⁵ Տե՛ս Лыков В. Падение нравов как фактор преступности // Профессионал. 2002. №1(4), էջ 4, Дроздов А. Ю. Агрессивное телевидение // Социологические исследования. 2001 №8, էջեր 62-67:

հաղորդումներ թեև չեն ցուցադրվում, սակայն շատ են բաց տեսարաններով հաղորդումները: Նշված հարցում կարևոր է ծնողների դերը, ովքեր չպետք է թույլ չտան երեխաներին դիտել այդ հաղորդումները:

Խոսելով լրատվամիջոցների մասին՝ չենք կարող չանդրադառնալ համացանցին, որտեղ վիճակը ամբողջովին անվերահսկելի է: Համացանցը ողողված է պոռնոգրաֆիկ կայքերով, ուր տեղադրված են նաև մարմնավաճառների գովազդներ: Այդ կայքերը հասանելի են յուրաքանչյուրին, և երեխաները ազատորեն կարող են օգտվել դրանցից, ինչը վնասակար ազդեցություն է թողնում նրանց հոգեբանության վրա: Այս առումով լուրջ անելիքներ ունեն իրավապահ մարմինները: Ոստիկանությունում գործում է համակարգչային հանցագործությունների դեմ ստորաբաժանում, որը պետք է զբաղվի տվյալ կայքերի արգելափակմամբ՝ ՀՀ տարածքում: Այստեղ տեղեկատվության տարածման ազատության սահմանափակման մասին խոսք չի կարող, քանի որ նշված կայքերը պոռնոգրաֆիկ բնույթի են, իսկ պոռնոգրաֆիկ նյութերի տարածումը ինքնին հանցագործություն է և իրավապահների պարտականությունն է պայքարել դրանց դեմ: Գոյություն ունեն նաև ծանոթությունների և գովազդային այլ կայքեր, որտեղ նույնպես տեղադրված են մարմնավաճառների գովազդներ: Իհարկե, այս կայքերը պոռնոգրաֆիկ բնույթ չունեն և դրանց արգելափակումը ապօրինի կլինի: Սակայն, իրավապահները պետք է մանրամասն ուսումնասիրեն դրանցում տեղադրված մարմնավաճառների հայտարարությունները, հայտնաբերեն նրանց և հսկողություն սահմանեն վերջիններիս նկատմամբ:

Վերը նշված կանխարգելման եղանակները վերաբերում էին վաղ կանխարգելմանը: Սակայն, գիտնականները առաջարկում են կանխարգելման այնպիսի տեսակ, ինչպիսին անհատական կանխարգելումն է ²²⁶: Կանխարգելման այս եղանակի էությունը

²²⁶ St'u Криминология / Учебник под ред В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. 3-е изд., перераб. и доп. М., 2007, էջ 280:

կայանում է անհատական ներգործության իրականացմամբ այն անձանց վրա, որոնց վարքագիծը թույլ է տալիս կանխորոշել նրանց կողմից հակաիրավական վարքագծի դրսևորումը: Պետք է համաձայնել այն մասնագետների հետ, ովքեր համարում են, որ մարմնավաճառության պարագայում անհատական ներգործությունը առաջին հերթին պետք է ուղղված լինի մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների զոհերին, քանի որ նրանց վարքագիծը աչքի է ընկնում բարձր վիկտիմայնությամբ: Պայքարի այս եղանակը կարելի է անվանել կանխարգելում զոհերի շրջանում կամ վիկտիմոլոգիական կանխարգելում²²⁷: Յեղիսակները որպես անհատական կանխարգելման օբյեկտ հատուկ ընդգծում են երեխաներին և պատանիներին և գտնում, որ իրավապահ մարմինները նրանց հետ պետք է աշխատանքներ տանեն միջնորդավորված եղանակով (ծնողների, որդեգրողների, հարազատների միջոցով)²²⁸: Անհատական կանխարգելման օբյեկտների շրջանակը ցանկանում ենք լրացնել դրանում ընդգրկելով՝ նախկին մարմնավաճառներին, թրաֆիքինգի զոհերին, մուրացկաններին, մանկատան շրջանավարտներին:

Ինչպես նկատեցինք, բերված միջոցառումների զգալի մասը վերաբերում է վաղ կանխարգելմանը: Դրանից բացի, մարմնավաճառության դեմ պայքարում շեշտը դրվում է քարոզչական և դատարանական աշխատանքների վրա:

Կրիմինալ ռոգիական գրականության մեջ մարմնավաճառության դեմ պայքարում առաջարկվում են նաև հետևյալ միջոցառումները՝

1. Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներ. բնակչության կենսամակարդակի բարձրացում, հասարակության հարուստ և աղքատ խավերի միջև տարբերության կրճատում, իրավագիտակցության բարձրացում:
2. Անհատական կանխարգելման միջոցառումներ. դա կոնկրետ

²²⁷ Տե՛ս Кадников Н. Г. Квалификация преступлений и вобросы судебного толкоания. М., Юриспруденция. 2009, էջ 211:

²²⁸ Տե՛ս Смирнов Ю. П. Уголовная ответственность за сексуальную эксплуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 163:

շերտերի (անչափահասների, պատանիների և այլն) հետ աշխատանքն է մարմնավաճառության, թմրամոլության, հարբեցողության հարցերով:

3. Հատուկ կանխարգելման միջոցառումներ. պետության կողմից արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացում, ռիսկային խմբերին հոգեբանական օգնության ցուցաբերում, օրենսդրության կատարելագործում²²⁹:

Մեր կարծիքով մարմնավաճառության կանխարգելման եղանակների համակարգը պետք է բավարարի հետևյալ պահանջներին. այն պետք է կազմված լինի վաղ կանխարգելման, հատուկ կանխարգելման, անհատական կանխարգելման միջոցառումներից, որոնք պետք է հնարավորինս կոնկրետացված և թիրախային լինեն, կարևոր է, որ այդ միջոցառումները իրագործման առումով բարդ չլինեն, կանխարգելման համակարգում պետք է լինեն այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն մարմնավաճառության հետ կապված վնասակար երևույթների կրճատմանը:

Եվ այսպես, մարմնավաճառության դեմ պայքարում կենտրոնական հարցն այն է, թե ինչ կարգավիճակ պետք է ունենա մարմնավաճառությունը և մարմնավաճառը, այսինքն ինչպիսի վերաբերմունք պետք է դրսևորի պետությունը այս երևույթի հանդեպ: Տարբերակները երեքն են՝ մարմնավաճառության քրեականացում, մարմնավաճառությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության սահմանում, մարմնավաճառության օրինականացում: Կարծում ենք, որ մարմնավաճառության քրեականացումը արդյունավետ լինել չի կարող: Նախ, պատմական փորձը վկայում է, որ մարմնավաճառության և մարմնավաճառների դեմ կիրառվող կոշտ միջոցները դրական արդյունքներ չեն տալիս: ՀԽՍՀ 1961թ.-ի քրեական օրենսգրքով մարմնավաճառությունը պատժելի էր, սակայն Հայաստանում և հորհրդային այլ հանրապետություններում նշված երևույթը առկա էր, պարզապես պետական մակարդակով քարոզվում էր, որ ԽՍՀՄ-ում

²²⁹ Ст'ю Гилинский Я. Девиантология. СПб., 2004, էջեր 455-457:

մարմնավաճառությունն գոյություն ունի: Դրավառ ապացույցն է 1980 թ.-ին Մոսկվայում կայացած օլիմպիական խաղերի ժամանակ ԽՍՀՄ ղեկավարությանն դիրքորոշումը: Թեև խիստ ներգործության սպառնալիքով հրահանգված էր մարմնավաճառներին ուղարկել Մոսկվայի 101-րդ կմ-ից այն կողմ, այնուհանդերձ ողջ խաղերի ընթացքում Մոսկվայում մարմնավաճառների պակաս չէր գագացվում:²³⁰

Մարմնավաճառությամբ զբաղվելու համար քրեական պատիժ սահմանելը նաև վտանգավոր է այն առումով, որ դակարող է բերել սեռական բնույթի հանցագործությունների աճին: Մասնավորապես, Ավստրալիայում մարմնավաճառության քրեականացումից հետո բռնաբարությունների թիվը աճեց մոտ 2,5 անգամ²³¹:

Մեր կարծիքով, մարմնավաճառության քրեականացումը պարունակում է մեկ այլ վտանգ ևս: Սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում մարմնավաճառության քրեականացումը կարող է հանգեցնել կոռուպցիայի աճին, հատկապես իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում: Կարծում ենք, ներկայիս ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում նման վտանգ կարող է առկալիս լինել նաև ՀՀ-ում:

Բացի այդ, ՀՀ-ում իրականացված փորձագիտական մի շարք հարցումների տվյալների համաձայն՝ ՀՀ-ում մարմնավաճառների թիվն անցնում է 1000-ից²³² և, եթե նրանց թեկուզև մի մասն էլ ենթարկվի ազատազրկման, դա մեծ բեռ կլինի առանց այդ էլ գերբեռնված ՀՀ քրեակատարողական հիմնարկների և ՀՀ բյուջեի համար:

Եվ ամենակարևորը, մարմնավաճառությունը որպես երևույթ չունի այն հասարակական վտանգավորությունը, որ համարվի հանցագործություն: Մարմնավաճառության քրեականացմանը դեմ են արտահայտվում նաև մեր քաղաքացիները: Այսպես, 120 հարցվածների

²³⁰ Pravda.ru/Moscow olimpics in 1980 sent breath of capitalism behind iron curtain. 20.07.2010.

²³¹ Ст'я Маныч Е.Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006, էջ 157:

²³² Ст'я www.news.am/ Մամլել Ավագյան: Մերս բիզնեսի հայկական առանձնահատկությունները: Մարտի 29-ը, 2012 թ.:

միայն 25%-ն է կողմ արտահայտվել, որ մարմնավաճառությունը համարվի հանցագործություն: Եվ այսպես, վերոշարադրյալից ակնհայտ է, որ մարմնավաճառության քրեականացումը չի կարող դիտվել քննարկվող երևույթի կանխարգելման արդյունավետ միջոց, իսկ այդ մարտավարությունը կարող է հանգեցնել բացասական հետևանքների:

Մարմնավաճառության կանխարգելման հաջորդ մարտավարությունը մարմնավաճառության օրինականացումն է: Այս եղանակի կողմնակիցները մարմնավաճառության օրինականացումը հիմնավորում են նրանով, որ դա կհեշտացնի մարմնավաճառների նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը, կպաշտպանի մարմնավաճառներին, իսկ պետությանը կբերի որոշակի ֆինանսական օգուտներ ²³³: Վ.Կրիշտալի, Ս. Գրիգորյանի կարծիքով միայն մարմնավաճառության օրինականացումը թույլ կտա կանոնակարգել և հսկողության տակ վերցնել տվյալ երևույթը ²³⁴:

Սակայն, մենք համամիտ չենք նշված մոտեցումներին և կարծում ենք, որ մարմնավաճառության օրինականացումը չի կարող լուծել տվյալ խնդիրները: Նախ, մարմնավաճառության օրինականացումը չի երաշխավորում ապօրինի մարմնավաճառության վերացումը: Դրա մասին վկայում է այն փաստը, որ այն պետություններում, որտեղ պաշտոնապես մարմնավաճառությունը թույլատրված է (Նիդերլանդներ, Գերմանիա) գոյություն ունի նաև ապօրինի մարմնավաճառություն: Երկրորդ, մարմնավաճառության պաշտոնապես գրանցումը կարող է բերել նրանց ծառայություններից օգտվողների թվի աճին: Եվ վերջապես, այս քայլին պատրաստ չէ նաև հասարակությունը: Մեր կողմից հարցված քաղաքացիների ընդամենը 40%-ն է կողմ արտահայտվել մարմնավաճառության օրինականացման օգտին մինչդեռ դեմ՝ մեր կողմից հարցված իրավապահ մարմինների աշխատակիցների 56%-ը:

²³³ Տե՛ս Криминология. Учебник для вузов / Под ред. С. М. Иншакова. М., 2000, էջ 333:

²³⁴ Տե՛ս Кришталь В. В., Григорян С. Р. Сексология. М., 2002, էջ 863:

Ինչ վերաբերում է սեռավարակների տարածման կանխմանը, ապա հարցված բժիշկների միայն 15%-ն է նշել, որ այդ քայլը ամբողջությամբ կլուծի սեռավարակների տարածման խնդիրը:

Մարմնավաճառության օրինականացմանը կողմ են արտահայտվել հարցված մարմնավաճառների 80%-ը, սակայն մարմնավաճառության օրինականացման գործընթացը կարող է առաջ բերել որոշ բարդություններ: Մասնավորապես, ինչ չափով և կարգով են հարկվելու մարմնավաճառները, ինչպես է հաշվարկվելու նրանց եկամուտը: Մարմնավաճառության օրինականացումը դեմ է նաև բարոյական նորմերին: Դրանով, փաստորեն, պետությունը մարմնավաճառներին պաշտոնապես հավասարեցնում է մյուս աշխատողների հետ: Իսկ, եթե մարմնավաճառությունը պաշտոնապես օրինականացված է և դիտվում է գործունեության այլ տեսակների հետ մեկ հարթության մեջ, ապա հարց է առաջանում՝ էլ ինչո՞ւ պետք է պայքարել դրա դեմ:

Այսպիսով, պարզ դարձավ, որ մարմնավաճառության օրինականացումը նույնպես պատշաճ կերպով չի կարող կանխարգելել այս երևույթի տարածումը և նրա հետ կապված բացասական երևույթների գոյությունը, այն նաև իրագործման առումով բարդություններ է պարունակում:

Այս ամենը հաշվի առնելով՝ նպատակահարմար է, որ մարմնավաճառությունը պատժի վարչական տույժով (այս տարբերակն էլ ներկայումս գործում է ՀՀ-ում), սակայն դրա հետ միասին անհրաժեշտ է նախատեսել այս երևույթի նկատմամբ հսկողության սահմանման միջոցառումներ: Որպես վաղ կանխարգելման եղանակ, արդեն առաջարկվել է սեռական դաստիարակություն պատշաճ համակարգի ընդգրկելը դպրոցական ծրագրում, արձնագրաֆիկ կայքերի արգելափակումը ՀՀ տարածքում, պետության կողմից համապատասխան քարոզչության իրականացումը:

Սակայն, արդեն նշել ենք, որ բացի արձնագրաֆիկ կայքերից այլ կայքերում (գովազդային, սոցիալական) նույնպես տեղադրվում են մարմնավաճառների գովազդներ: Իրավապահ մարմինների խնդիրն

Ե հայ տաբերել գովազդ տեղադրող մարմնավաճառներին և պահել նրանց հսկողության տակ, ինչպես նաև հանել այդ գովազդները համացանցից: Որպես վաղ կանխարգելում կարևոր է, որպեսզի անչափահասները հնարավորինս քիչ շփվեն մարմնավաճառների հետ, այսինքն չտեսնեն իրենց շրջապատում մարմնավաճառների: Բնակչության շրջանում մեր կողմից կատարված հարցումները վկայում են, որ մեր քաղաքացիները բավական հաճախ են իրենց շրջապատում տեսնում մարմնավաճառների: Այսպես, ինչ հաճախականությամբ եք ձեր շրջապատում տեսնում մարմնավաճառների հարցին քաղաքացիների 57%-ը պատասխանել է՝ ամեն օր: Մարմնավաճառների տարածվածությունը և տեսանելի լինելը տիպիկ է շատերի և վտանգավոր երեխաների համար՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական առանձնահատկությունները: Այդ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի սահմանափակվի մարմնավաճառների գործունեությունը մարդաշատ երեխաներով լի վայրերում: Պետք է նշել, որ նմանօրինակ կարգ սահմանված է Եվրոպական որոշ երկրներում, որտեղ մարմնավաճառությունը պաշտոնապես թույլատրված է, բայց գոյություն ունի արգելք որոշակի վայրերում կամ օրվա որոշակի ժամերին մարմնավաճառությամբ զբաղվելու համար: ՀՀ-ում այդ խնդիրը լուծելու համար մեր կարծիքով կօգնի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նորմի սահմանումը, որը կարգելի որոշակի վայրերում մարմնավաճառությամբ զբաղվել (ծառայություններ առաջարկել): Ներկայումս նշված օրենսգրքի հոդված 179¹ -ի համաձայն՝ արձնկությամբ զբաղվելը առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի քսանպատիկի չափով: Առաջարկում ենք հոդվածում ավելացնել դրույթ հետևյալ բովանդակությամբ. «արձնկությամբ զբաղվող անձանց կողմից իրենց ծառայություններ առաջարկելը ուսումնական կամ դաստիարակական հաստատությունների շրջակայքում (մինչև 500մ հեռավորության վրա)՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Արդեն նշել ենք, որ մանկատան շրջանավարտները խոցելի խումբ են մարմնավաճառության ներգրավման առումով: Մամուլում հրապարակումներ եղան, որ նրանցից ոմանք ենթարկվել են սեռական թրաֆիքինգի: Այս փաստը բացատրվում է նրանով, որ նրանք, դուրս գալով մանկատնից, գտնվում են սոցիալական վատ վիճակում, քանի որ դժվարանում են աշխատանք գտնել և չունենալով հարազատներ՝ զրկված են լինում խնամքից և հսկողությունից՝ դրանով իսկ խոցելի դառնալով հանցագործների համար: Մեր կարծիքով, անհրաժեշտ է այնպիսի միջոցառումներ կիրառել, որոնք կհեշտացնեն մանկատան շրջանավարտների համար աշխատանք գտնելու խնդիրը: Դրա համար հարկավոր է, որպեսզի գործատուի համար շահավետ լինի նրանց վերցնել աշխատանքի: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով առաջարկում ենք մանկատան շրջանավարտների համար նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը: Այսպես, եկամտահարկի մասին օրենքի հոդված 10-ի համաձայն՝ մինչև 120 հազար դրամ եկամտից հարկվում է եկամտի 24.4 տոկոսը, իսկ 120 հազար դրամից ավել եկամտից հարկվում է 29.280 դրամին գումարած 120 հազար դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը: Մենք առաջարկում ենք եկամտային հարկի մասին օրենքի հոդված 10-ում նախատեսել առանձին կետ հետևյալ բովանդակությամբ՝ «մանկատան շրջանավարտներից գանձվող եկամտային հարկի դրույքաչափերը հաշվարկվում են սույն հոդվածի առաջին մասի առաջին կետով սահմանված դրույքաչափի կետով»: Գտնում ենք, որ այս դրույթի ներմուծումը գործատուներին կշահագրգռի աշխատանք տրամադրել մանկատան շրջանավարտներին: Այս նորմի կիրառումը մեծ ազդեցություն չի թողնում բյուջեի վրա, քանի որ մանկատան շրջանավարտները մեծ թիվ չեն կազմում և նրանք ոչ թե ազատվում են եկամտային հարկ վճարելուց, այլ կրճատվում է նրանց դրույքաչափը: Փոխարենը, այս նորմը էականորեն կարող է ազդել մանկատան շրջանավարտների զբաղվածության, ուստի և սոցիալական վիճակի բարելավման վրա՝

այդպիսով նրանց գերծ պահելով մարմնավաճառությունը կամ այլ հակաիրավական գործունեությունը կամ թրաֆիքինգի գոհ դառնալուց:

Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել մարմնավաճառների, առանց ինամքի մնացած և անապահով անչափահաս երեխաների վրա: Այստեղ իրավախախտ մարմինները մեծ աշխատանք ունեն կատարելու: Ոստիկանությունում որևէ տվյալ չկա մարմնավաճառությունը կազմակերպող անձանց ընտանեկան դրության վերաբերյալ: Միայն կան տարեկան կտրվածքով վարչական պատասխանատվության ենթարկված մարմնավաճառների թիվը, սեռը, անչափահասների առկայությունը կամ բացակայությունը: Մեր կարծիքով, յուրաքանչյուր մարմնավաճառի համար, ով հայտնվում է իրավապահների ուշադրության կենտրոնում, հարկավոր է կազմել նրա անհատական տվյալների քարտը: հատուկ ուշադրություն է պետք դարձնել նրանց անչափահաս երեխաների առկայության վրա՝ անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխել անչափահասների ինամքով զբաղվող հաստատություն:

Մարմնավաճառության կանխարգելման հետ սերտորեն կապված է մարմնավաճառությանն առնչվող հանցագործությունների կանխարգելումը: Մարմնավաճառությունը և նրան առնչվող հանցագործությունները փոխադարձաբար մասնավորված են և մեկի աճը նպաստում է մյուսի աճին: Յուրաքանչյուր պետության առաջնահերթություններին է հանցագործությունների դեմ պայքարը, իսկ մարմնավաճառությանն առնչվող հանցագործությունների նվազումը կնպաստի մարմնավաճառության ընդհանուր մակարդակի նվազմանը (քանի որ հաճախ հանցավորները մարմնավաճառության են ներգրավվում անձանց, որոնք նախկինում չեն զբաղվել մարմնավաճառությամբ՝ այդպիսով ավելանում է մարմնավաճառների քանակը): Մարմնավաճառության հետ կապված հանցագործություններից ամենավտանգավորը թրաֆիքինգն է, ուստի դրա կանխարգելմանը անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի

համար հարկ է կատարել հետևյալ միջոցառումները՝

1. Ոստիկանությունը պետք է համապատասխան աշխատանքներ կատարի օդանավակայաններում, հատկապես թրաֆիքինգի նպատակակետեր կրներ մեկնող ուղևորների շրջանում: Այժմ գոյություն ունեն 34-ներ, որոնք զբաղվում են թրաֆիքինգի հարցերով, սակայն դրանք ավելի շատ ուշադրություն են դարձնում թրաֆիքինգի գոհերին օգնություն ցույց տալու հարցերին, իսկ կանխարգելման նպատակով քարոզչությունը կատարում են ընդհանուր բնակչության շրջանում՝ բուկլետներ բաժանելու, գովադի և այլ եղանակով: Գտնում ենք՝ այդպիսի աշխատանքները պետք է ուղղված լինեն թրաֆիքինգի պրտենցիալ գոհերին, այսինքն լինեն թիրախային: Այդ պատճառով առաջարկում ենք բացատրական աշխատանքներ կատարել օդանավակայաններում և կայարաններում՝ հատկապես երիտասարդ կանանց շրջանում: Կարևոր է նաև ոստիկանության և ԱՄԷ-ում 33 դեսպանատան համագործակցությունը այս հարցում: Մանավանդ, արդեն գործում է 33-ի և ԱՄԷ-ի միջև համաձայնագիրը թրաֆիքինգի պայքարի դեմ հարցում: 33 դեսպանության աշխատակիցները կարող են նպաստել էմիգրություններում հարկադիր մարմնավաճառությամբ զբաղվող անձանց հայտնաբերելուն, մանավանդ որ նրանց մեծամասնությունը ծառայություն է մատուցում Դուբայում և հայտնի են այն վայրերը, որտեղ նրանք առաջարկում են իրենց ծառայությունները: 33 դեսպանատան աշխատակիցները պետք է լուծեն նաև տուժողների փաստաթղթերի, տեղի ոստիկանության հետ ծագած խնդիրները և 33 տեղափոխման հարցերը: Մի քիչ բարդ է թրաֆիքինգի մյուս նպատակակետեր կրի՝ Թուրքիայի, հետ կապված խնդիրը: Քանի որ 33-ն դիվանագիտական հարաբերություններ չունի Թուրքիայի հետ և երկու պետությունների միջև սահմանը փակ է: Այս հարցը կարելի է լուծել ոստիկանության և ինտերպոլի միջոցով: 33 իրավապահներին անհրաժեշտ է ուղղակի հայտնաբերել հայ մարմնավաճառքերին, իսկ նրանց գտնվելու հիմնական քաղաքները հայտնի են, և նրանց տվյալները փոխանցել թուրք

իրավապաներին: Թուրքիայում, ի տարբերություն ԱՄԷ-ի, մարմնավաճառությամբ զբաղվելու համար չեն ազատագրվում, այլ արտաքսում են հայրենիք:

2. Դեպի սեռական թրաֆիքինգի նպատակակետ երկրներ հոսքը նվազեցնելուն ուղղված քայլ կարող է լինել ՀՀ-ի կողմից այդ պետություններին այն անձանց ցանկի տրամադրումը, ովքեր նախկինում դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 131, 131², 261, 262 հոդվածներով: Դրանով կդժվարանա նրանց մուտքը տվյալ երկրներ:
3. Թրաֆիքինգի նվազեցման հարցում օգտակար կլինի խրախուսական նորմի ներմուծումը ՀՀ օրենսդրություն: Նման նորմ կա ՌԴ քր. օր.-ի հոդված 127.1-ում, որով քրեական պատասխանատվությունից ազատվում է նա, ով առաջին անգամ է կատարել սույն հոդվածի առաջին մասի կամ երկրորդ մասի ա կետով նախատեսված արարքը և կամավոր ազատել է տուժողներին և նպաստել հանցագործության բացահայտմանը, եթե նրա արարքում այլ հանցակազմ չկա: Սակայն ՌԴ քրեական օրենսգրքի այս դրույթը թերի է: Քանի որ հնարավոր է հանցավորը իր առջև որոշակի ժամանակ է դրել, որ այդ ժամանակում պետք է շահագործի և հետո ազատի տուժողներին: Մեր կարծիքով արդարացի չէ, որ տուժողներին շահագործած անձը ազտավի պատասխանատվությունից: Իսկ քրեական պատասխանատվությունից անհրաժեշտ է ազատել նրան, ով կատարել է հոդված 132-ով նախատեսված գործողությունները՝ հավաքագրելը, փոխադրելը և այլն, սակայն չի շահագործել տուժողներին և ինքնակամ ազատել է նրանց, այսինքն՝ այս հարցում պետք է դրսևորել տարբերակված մոտեցում, քանի որ տուժողների շահագործումը հոգեկան և ֆիզիկական լուրջ վնաս է պատճառում տուժողներին և նրանց հարատևներին: Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի հոդված 132-ում նախատեսել հետևյալ բովանդակությամբ նորմ. «սույն հոդվածի առաջին մասով կամ հոդվածի երկրորդ մասի առաջին կետով նախատեսված արարքը առաջին անգամ կատարած անձը, ով միոչև շահագործման ենթարկելը ազատել է տուժողներին և

նպաստել հանցագործության բացահայտմանը, ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքում այլ հանցակազմ չկա: Տուժողին ազատած անձը չի ազատվում նրա գույքային վնասը հատուցելու պարտավորությունից»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների՝ առաջին հերթին թրաֆիքինգի տուժողների շահերի պաշտպանությանը: Նրանց շահերի պաշտպանությունը կարևոր է նաև այն պատճառով, որ նրանք կրկին չվերադառնան մարմնավաճառությանը: Խոսքը՝ առաջին հերթին թրաֆիքինգից տուժած անձանց գույքային շահերի պաշտպանության մասին է: Հոդված 132-ով քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ տուժողները հիմնականում չեն դիմում քրեական դատավարությունում հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու հայցով ²³⁵: Իսկ եզակի դեպքերում, երբ տուժողը քաղաքացիական դատավարության կարգով հայց է ներկայացնում հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու համար, նրա հայցը մերժվում է ²³⁶: Այս խնդիրը լուծելուն խանգարում են երկու հանգամանքներ: Առաջինն այն է, որ նշված դատական գործերով տուժողները հիմնականում չունեն ներկայացուցիչ (փաստաբան): Ճիշտ է, ՀՀ -ները իրենց դիմած տուժողներին ապահովում են փաստաբանով, սակայն տուժողներից ոչ բոլորն են դիմում ՀՀ-ներին: Այս խնդիրը վերացնելու համար անհրաժեշտ ենք համարում, որպեսզի թրաֆիքինգի գոհերին անվճար տրամադրվի փաստաբան: Դրա համար պետք է փաստաբանության մասին օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում, ուր սահմանված է հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակը, ներառել 132 և 132² հոդվածներով տուժողներին:

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցում երկրորդ արգելքը կապված է հոդված 132-ի առանհատկությամբ,

²³⁵ Տե՛ս Դատական գործեր № ԵԷԴ/0158/01/11, ԵԿԴ/0088/01/09, ԵՇԴ/0110/01/10, ԵՄԴ/0072/01/10 և այլն:

²³⁶ Տե՛ս Դատական գործ № ԵՄԴ/0982/02/11:

որի պարագայում դժվար է ապացուցել կամ հիմնավորել պատճառված վնասի չափը: Օրինակ՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պատճառված վնասը որոշվում է հաիշտակված գույքի արժեքով: Սակայն, չի կարելի ասել, որ հոդված 132-ով անձին վնաս չի պատճառվում: Մասնավորապես, երկարատև սեռական շահագործման հետևանքով քայքայվում է անձի առողջությունը, վտանգվում է կնոջ վերաարտադրողականության ֆունկցիան, հոգեկան և բարոյական վնաս է հասցվում տուժողին և նրա հարազատներին: Հայտնի են դեպքեր, երբ շահագործման հետևանքով տուժողը ստացել է նույնիսկ հոգեկան լուրջ խանգարումներ ²³⁷: Միևնույն ժամանակ հայտնի է, որ հանցավորները, տուժողներին ենթարկելով սեռական շահագործման, մեծ եկամուտներ են ստանում: Տվյալ հարցը կարգավորելու համար անհրաժեշտ է մի շարք հանցագործությունների և մասնավորապես, հոդված 132 և 132²-ի համար սահմանել վնասների հատուցման հատուկ կարգ: Այդ նպատակով պետք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1058-ում, որը նախատեսում է վնասի հատուցման համար ընդհանուր հիմքերը, ավելացնել այսպիսի դրույթ՝ «առանձին հանցագործություններով պատճառված վնասի հատուցման չափը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքով»: Իսկ քրեական օրենսգրքում կարելի է սահմանել որոշակի գումար շահագործման յուրաքանչյուր օրվա համար: Շահագործման յուրաքանչյուր օրվա համար կարելի է սահմանել 20 հազար դրամ փոխհատուցում: Այսպես, հարցված մարմնավաճառների ընդամենը 4%-ն է նշել, որ օրական սպասարկում է մեկ հաճախորդ, իսկ 4%-ն էլ նշել է, որ յուրաքանչյուր սեռական ակտի դեմաց ստանում են 10 հազար դրամից քիչ: Ստացվում է, որ մարմնավաճառների մեծամասնությունը օրական սպասարկում է առնվազն 2 հաճախորդ յուրաքանչյուրից ստանալով 10 հազար դրամից ոչ պակաս գումար: Փաստորեն, նրանց նվազագույն եկամուտը օրական կազմում է 20 հազար դրամ: Սա Հայաստանյան մարմնավաճառների եկամուտն է: Ինչպես հայտնի է,

²³⁷ Տե՛ս www.1-am, 2012-10-16:

թրաֆիքինգի ենթարկվածները հիմնականում գործում են արտերկրում, որտեղ վարձատրությամբ ունենում են անհամեմատ բարձր և դրամեծ մասը վերցնում են նրանց շահագործողները: Ուստի, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132-ում ավելացնել այսպիսի դրույթ՝ «132 և 132² հոդվածներով տուժողների վնասի հատուցման չափը շահագործման յուրաքանչյուր օրվա դիմաց կազմում է 20 հազար ՀՀ դրամ»:

Մարմնավաճառության հետ կապված հանցագործություններից տուժածների շահերի պաշտպանության մյուս խնդիրը կապված է դատավարությունների ընթացքի, մասնավորապես դրանց հրապարակայնության հետ: Այսպես, քրեական դատավարության օրենսգրքի հոդված 170-ի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական և ընտանեկան կյանքին անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև անձնական բնույթի այլ տվյալներ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Իսկ հոդված 16-ի համաձայն՝ դռնփակ դատական քննությունը անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումով: Սակայն, դատական գործերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 132, 261, 262 հոդվածներով դատավարությունները հիմնականում անցկացվում են դռնբաց դատական քննությամբ: Դեռ ավելիև, լրատվամիջոցները ակտիվորեն լուսաբանում են դրանք՝ հաճախ հրապարակելով տուժողների տվյալները: Ինչպես նշել ենք, այս

գործերով տուժողները հիմնականում չեն ունենաւ ոմ ներկայացուցիչներ, որպեսզի վերջիններս միջնորդեն դռնփակ դատական քննության անցկացնելու մասին, իսկ իրենք էլ հավանաբար տեղյակ չեն այդ իրավունքի մասին: Միևնույն ժամանակ, գործնականում հնարավոր չէ պատկերացնել այս հոդվածներով մի գործ, որում չշաշափվի տուժողների անձնական կյանքի գաղտնիությունը: Դրա համար անհրաժեշտ է հոդված 16-ը լրացնել հետևյալ նորմով. «ՀՀ Քրեական օրենսգրքի 132, 132², 261, 262 հոդվածներով դատավարությունները ամեն դեպում անցկացվում են դռնփակ դատական քննությամբ»(այս ցանկը լրիվ չէ, այն կարող է լրացվել այլ հոդվածներով ևս, օրինակ՝ քր.օր.-ի հոդված 138,139-ով): Այս նորմը հնարավորություն կտա տուժողներին պաշտպանել անձնական կյանքի մանրամասները և վերադառնալ կամ կազմել ընտանիք: Իսկ ինչպես նշել ենք, ընտանիքը հատուկ դեր ունի մարմնավաճառությանը նպաստող գործոնների թվում:

Մարմնավաճառության կանխարգելման միջոցառումներից է նաև մարմնավաճառների հետ տարվող բացատրական աշխատանքները: Չնայած, անհատական կանխարգելման այս տարատեսակի հետ մեծ հույսեր կապել չի կարելի, քանի որ մարմնավաճառները, որպես կանոն, անտեսում են բացատրական աշխատանքները: Այնուամենայնիվ, այն անտեսել նույնպես չի կարելի: Իսկ արդյունավետ բացատրական աշխատանքների իրականացնելու համար հարկավոր է նախորոշակի տվյալների ունենանալ մարմնավաճառների վերաբերյալ, հասկանալ մարմնավաճառությամբ զբոլվելու նրանց պատճառները: Դրա համար հարկավոր է յուրաքանչյուր մարմնավաճառի համար, որի նկատմամբ կազմվում է արձանագրություն կամ ով բերման է ենթարկվում ոստիկանություն, կազմել անհատական տվյալների քարտ, տվյալները լրացնելու համար կարող է օգտագործվել նաև մեր կողմից կազմված հարցաշարը (տե՛ս հավելվածում): Մարմնավաճառների հետ անհատական միջոցառումներ կատարելիս օգտակար կլինի հոգեբանի մասնակցությունը:

Մարմնավաճառությունն հետկապված մտահոգիչ երևույթներից է անչափահասների՝ մարմնավաճառի ծառայություններից օգտվելը: Մարմնավաճառների 71%-ը նշել է, որ իրենց հաճախորդների շրջանում եղել են անչափահասներ: Մարմնավաճառներից շատերը նշում են, որ իրենք տեղյակ չեն դրա քրեորեն պատժելի լինելու մասին: Կարծում ենք՝ ոստիկանությունը բացատրական աշխատանքներ տանելիս առաջնային ուշադրություն պետք է դարձնի այս խնդրին:

Մարմնավաճառությանն առնչվող հաջորդ խնդիրը հաճախորդների և մարմնավաճառների, ինչպես նաև մարմնավաճառների միջև բռնության գործադրման դեպքերն են: Այդ մասին նշել են հենց իրենք մարմնավաճառները, հրապարակումներ են եղել նաև մամուլում: Նշված հարցերը որոշ չափով կարգավորելու համար պետք է տեսախցիկներ տեղադրել փողոցային մարմնավաճառների հավաքման վայրերում: Դա ավելի զգոն կդարձնի և նրանց, և հաճախորդներին: Դա կօգնի նաև, որ մարմնավաճառները խուսափեն ծառայություններ մատուցել անչափահասներին:

Ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ-ում մարմնավաճառության պատճառած հիմնական վնասներից մեկը սեռավարակների տարածումն է: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 45-ի համաձայն՝ բժշկական գննումից այն անձանց խուսափելը, որոնց վերաբերյալ բավարար տվյալներ կան այն մասին, որ նրանք տառապում են վեներական հիվանդությամբ, կամ բուժումից այն անձանց խուսափելը, որոնք չփման մեջ են գտնվել վեներական հիվանդությամբ տառապողների հետևում են պրոֆիլակտիկ բուժման կարիք և շարունակում են խուսափել առողջապահության հիմնարկի կողմից արված նախազգուշացումից հետո՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Գտնում ենք, որ վեներական հիվանդությամբ տառապող մարմնավաճառների հանդեպ պետք է կիրառել այլ կարգ: Քանի որ, նրանք ամեն օր դուրս են գալիս աշխատանքի և պրտենցիալ վտանգի աղբյուր են, ուստի նրանց

Նկատմամբ տուգանքի կիրառումը արդյունավետ չի կարող:
Իսկ փորձը ցույց է տալիս, որ նրանք հաճախ կիսատ են թողնում
բուժումը: Այս առումով կարծւմ ենք՝ վեներական հիվանդությամբ
տառապող մարմնավաճառների նկատմամբ պետք է կիրառել հարկադիր
բուժում՝ բուժման գումարը գանձելով մարմնավաճառներից:
Առաջարկում ենք վարչական իրավախտումների վերաբերյալ
օրենսգրքի հոդված 179¹–ում ներառել այսպիսի նորմ՝ «Սույն
Հոդվածով պատասխանատվության ենթարկված անձինք ենթակա են
պարտադիր բժշկական (մաշկաբանական) ստուգման, իսկ նրանց մոտ
վեներական հիվանդություն հայտնաբերվող դեպքում վերջիններս
ենթակա են անհապաղ հարկադիր բուժման»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարմնավաճառության քրեաիրավական և կրիմինոլոգիական առանձնահատկություններին հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. Մարմնավաճառությունը գործունեության տեսակ է, որը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- հակաբարոյական բնույթ,
- կայունություն (կատարվում է պարբերաբար կամ նման դիտավորությամբ),
- սեռական հարաբերություններին հատուցելիություն,
- սեռական հարաբերություններին արտաամուսնական բնույթ:

2.33-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձինք դասակարգվում են՝

- Ըստ դրանով զբաղվող սուբյեկտների՝ կանանց, տղամարդկանց, անչափահասների:
- Ըստ մարմնավաճառությամբ զբաղվելու կամքի արտահայտման եղանակի՝ կամավոր և հարկադիր:
- Ըստ հիերարխիկ բնույթի՝ փողոցային, բնակարանային, հասարակաց տների, զվարճանքի վայրերի, Էլիտար:

3. Մարմնավաճառությունը պայմանավորված է տարբեր գործունեությունով, որոնք կարելի է միավորել երկու խմբերի մեջ՝ սոցիալ-հոգեբանական և տնտեսական: Սոցիալ-հոգեբանական գործունեությունը շարքում մեծ դեր ունի ընտանիքը, դաստիարակությունը և հատկապես սեռական դաստիարակությունը, հասարակության մեջ տիրող բարքերը: Ներկայումս մեր հասարակության մեջ բացակայում է սեռական դաստիարակության պատշաճ համակարգը: Մարմնավաճառությունը պայմանավորող տնտեսական գործունեությունն է՝ գործազրկությունը, սոցիալական ծայրահեղ բևեռացումը, աղքատության բարձր մակարդակը և այլն: Չնայած մարմնավաճառության մեծամասնությունը նշում է, որ

մարմնավաճառության մեջ գաղվելու հիմնական պատճառը սոցիալական ծանր վիճակն է, այնուամենայնիվ, մարմնավաճառությանը պայմանավորող գործոնների շարքում մեծ է սոցիալ-հոգեբանական պատճառների ներգործությունը: Հարկավոր է տարբերել ծայրահեղ և հարաբերական կարիքը. մարմնավաճառներից շատերը ընտրում են այդ ուղին ոչ թե ծայրահեղ կարիքից դրդված, այլ բարեկեցիկ կյանք վարելու մղումով:

4. Մեր կատարած հետազոտությունը թույլ է տալիս կազմել ՀՀ-ում գործող մարմնավաճառի սոցիալական պատկերը, այն է՝ 19-30 տարեկան կին, որը չունի բարձրագույն կրթություն, նախկինում չի ունեցել աշխատանք, ապրել է ոչ լիարժեք ընտանիքում, ամուսնացած չի և ունի երեխա(ներ):

5. Գոյություն ունի պատմականորեն ձևավորված մարմնավաճառության դեմ պայքարի 3 ուղղություններ՝

1. Պրոգիբիցիոնիզմ՝ մարմնավաճառության արգելման մարտավարություն,
2. Ռեգլամենտիզմ՝ մարմնավաճառության կանոնակարգում,
3. Աբոլիցիոնիզմ՝ մարմնավաճառության օրինականացում:

Այժմ ՀՀ-ում մարմնավաճառությունը պատժվում է վարչական տուգանքով: Մեր կարծիքով դա նախընտրելի է մարմնավաճառության քրեականացումից և օրինականացումից: Մարմնավաճառության քրեականացումը կարող է նպաստել սեռական հանցագործությունների աճին, ավելացնել առանց այդ էլ գերբեռնված քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածությունը, բացի այդ մարմնավաճառությունը իր հանրային վտանգավորությամբ չի կարող համարվել հանցագործություն: Իսկ մարմնավաճառության օրինականացումը չի կարող վերացնել ապօրինի մարմնավաճառությունը, փոխարենը կարող է նպաստել մարմնավաճառների ծառայություններից օգտվողների թվի ավելացմանը, դրան պատրաստ չէ նաև հասարակությունը, և վերջապես մարմնավաճառության

